



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material





БИБЛИОГРАФИЧЕСКАЯ
С. А. ТИХИСАКИЯ
БИБЛИОГРАФИЧЕСКАЯ

БИБЛИОГРАФИЧЕСКАЯ
С. А. ТИХИСАКИЯ
БИБЛИОГРАФИЧЕСКАЯ

=8 FEB 2013

2137

-6 NOV 2011

8516
Q-51
ԱՐ.

ՀՅԱՄՈՒԴՅՈ ԴԵ ԱՄԻՉՔԱԽԻ

№ 9046

Ս Ի Բ Ռ Տ

գրքից ինն պատմութիւն

(10 պատկերուլ)

1009
4192

գերմ. թարգմանեց ՔԱՄԱԼԵԱՆՑ Ա.



1906

Եկեղեցաւոս սպ առաջ՝ «ՀԵՂՄԱՆՔ» ընկ. Մադարեան փող. № 5
Թիֆլիս (178)

Յ Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

Ինձ շատերը հարցրել են,—ինչու դուք աշակերտին չեք պատժում կամ թուանշաններով սաստում: Ես ասել եմ, այժմ էլ կրկնում եմ.—Դրանք խալֆայական, փտած միջոցներ են, պես և օր առաջ դասարաններից հանել:—Հապահում անել, որ կարգին մնան, պատուէրներ կատարեն:—Սիրող սիրտ պէտք է ունենալ և վարուել հօր պէս, մեծ եղբօր պէս,—աշակերտները կարգին կընսատեն և պատուէրները ցնծութեամբ կըկատարեն: Մէր ցոյց տախ ուսուցչից մեծ գոհաբերութիւններ չի պահանջում. թող նա նեղութիւն քաշի, աշակերտների հասակի յարմար զրբոյկներ ճարի ամեն ճիւղի վերաբերեալ, ազատ ըսպէսերին նրանց առաջը կարդայ: Երբ հմուտ է գրքեր ընտրելու, մանաւանդ կարդալու մէջ, անկարելի է, որ աշակերտները չգրաւուեն. ոկըզբում անշուշտ կըլինեն հէքեաթներ: Աշակերտները միշտ խնդրելու են, որ ուսուցիչը կիսատ պատմութիւնը շարունակի: Այդպիսի տրամադրութեան հասցնելով նա տէր է դառնում մանուկների սրտին ու կամքին: Եթէ տուած դասը պատրաստած կլինեն, նրանց վափագը կըկատարի, եթէ ծուլացած կլինեն, նա էլ հետեւալ օրուան կըձգի ընթերցանութիւնը:

Այդ եղանակի շնորհով իբրև լեզուի ուսուցիչ միշտ գոհ եմ մնացել աշակերտներիցս, աշակերտուհիներիցս. նրանք իմ դասերին ոչ ցուցակով են հետաքրքրուելով թուանշաններով: Անցեալ 1905/06 ուս. տարում լեզուի դասեր ունենալով ներս. դպր. նախակրթարան-

ներում, աչքի տակով անցկացրի մանուկների համար նոր լոյս տեսած հայ գրքոյները. ճշմարիտ խոստովանած, շատ քիչ բան ունենք պատահնեկութեան համար. եղածների էլ որի նիւթն է անհետաքրքիր, որի լեզուն անմարսելի: Դրա համար ընտրած գրքոյները շուտ սպառուեցին և ես մի քանի գիմիկ աշակերտների ուղղելու նպատակով սկսայ գերմաներէնից թարգմանել էդմ. Ամիշխիսի «Սիրտ» գիրքը և մաս մաս կարդալ: Աշակերտները հիացած էին. իւրաքանչիւրն իւր պատկերը տեսնում էր գրքի մէջ: (Սկզբից փորձել էի մեծ. պ. Փ. Վարդանեանցի թարգմանութիւնը, յաջողութիւն չեղաւ, լեզուն ծանը էր):

Աւելորդ չեմ համարում «Սիրտ» գրքի մասին երկու խօսք տաել:—Եւրոպայի ականաւոր մանկավարժների համոզմամբ Կալվին Ռորինդոնից ետ դա առաջին կլասիկ պատանեկական գրուածքն է: Շատ մատենախօսներ ներբեռում են՝ «ահա ամենալաւ գիրքը, որ երբ եիցէ մանուկների համար գրուած է»: Իսկ ոմանք ստացած տպաւորութիւնից հիացած ասում են՝ «այս կլասիկ պատանեկական գրուածքը արժանապէս գովիլու համար խօսք չենք գտնում»: Անշուշտ ընտիր բովանդակութիւնն է պատճառը, որ 150 հրատարակութիւն է ունեցել իտալիայում: Ի՞նչ գիրք կայ, որի մէջ լինի այնքան ոգևորութիւն, զգացմունքի այնքան մեծութիւն ու նրբութիւն, այնքան ժողովրդասիրութիւն ու հայրենասիրութիւն, այնքան ազնուամտութիւն ու պարտաճանաչութիւն, որքան Ամիշխիսի «Սրտի» մէջն է: Գերմ. գրախօսներից մէկը բացականչում է՝ «այդ գիրքը տեղն ու տեղը ոսկի է»: Իսկ ես աւելի հաւանում եմ ուրիշ գրախօսի կարծիքին, որ «Սիրտ» գիրքը համեմատում է Աւետարանի հետ: Սոսկ պատանեկական գրուածք ասելը քիչ է: Դա աւետարան է հասակաւորի ու մանուկի, աղքատի ու հարստի, ծնողի ու զաւակի, ուսուցչի:

ու աշակերտի համար: Ամենին կզբաղեցնի, կուսուցանի, կազնուացնի: Շինծու բան չկայ այնտեղ. ամեն ինչ ընական է ու ճշմարտապէս զգացուած: Աէր, պատկառանք էք ուղում դէպի ծնողներն ու ուսուցիչները, թէ գութ ու կարելցութիւն դէպի չքաւորներն ու թշուառները, կամ անձնուիրութիւն, անձնուրացութիւն մարդկութեան համար. ամենը ամենը, ինչ որ նոզու պատուական յոյզեր են կոչւում, այնտեղ կան: Մի լաւ գրքի համար սովորաբար ասում են՝ «ամեն մի ընտանիքում սեղանի զարդ կարող է լինել», իսկ «Սիրտ» գրքի համար համարձակ կարելի է ասել՝ «կարդալ իմացող ամեն մի անձ պէտք է ունենայ ձեռի տակ»:

Այսպիսի գովանի գիրքը մտադիր էինք ամբողջովին տպագրել, քանի որ աշակերտների սիրու համար նեղութիւն էինք քաշել թարգմանել բայց տեսնելով որ ուսուցչի անզօր գրուանի զործ չէ մի մեծածախս պատկերագարդ գիրք հրատարակելը, որոշեցինք առաջմ լոյս ընծայել ամսօրեալ կոչուած ինս պատմութիւնները պատկերագարդ, որոնք իրարից անկախ, ամփոփ շարադրութիւններ են: Չուսով հենք, որ հայ մանուկների ընթերցանութեան գործով հետաքրքրուող ամեն մի վարժունի և վարժապետ կարեոր ուշադրութիւն կըդարձնի այս սրտագրաւ պատմութիւնների վրայ:

1906 յունիս. Թիֆլիս.

ՔԱՅԱԼԵԱՆՑ Ա.

Հ Ա Յ Բ Ը

Իւր պատահեկութեան հոգեկից ընկերներին
շուլաւէրցի Սանսասրեանց Ռափայէլի, ՄԵհրա-
բեանց Մելքիսեդէկի և Մովսէսեանց Լևոնիկին
քաղցր յիշատակին

նուիրում է

Թարգմանողը.

Սիրելի Հայնրիխ, ինչու կարդալու վրայ սէր
չունես: Աչքս մնաց, որ դու մի օր քու յօժար
կամքով, առանց մօրդ ստիպելու, ուրախ երեսով
ուսումնարան գնաս: Միշտ գնում ես քիթ ու-
պունկդ վէր թողած: Մի քիչ մտածիր քեզ ու
քեզ. տես, ինչ ողորմելի, անարժան կեանք կու-
նենայիր, եթէ ուսումնարան չգնայիր: Մի շա-
բաթից ետ, հաւատա, ձանձրութից ու ամօթից հալ
ու մաշ եղած, խաղալիքից ու քու գոյութիւնից
զզուած ձեռներդ կրծքիդ գալու էիր իննդրելու,
որ թողեն կրկին այնաեղ գնաս: Այժմ ամենը, ա-
մենն ուսանում են, սիրելի Հայնրիխ:... Մի կողմ
թողնելով արհեստաւորներին, որ երեկոյեան դրա-
րոցներն են գնում, հասարակ կանանց ու աղջ-
կերանց, որ կիրակնօրեայ դպրոցներն են յաճա-
խում, զինուորներին, որ մարմնական վարժութիւ-
նից ազատուելուն պէս իսկոյն զիրքն են ձեռ առ-
նում—ես խօսում եմ բոլոր աշխարհների անթիւ,
անհամար երեխաների մասին, որոնք միենոյն ժա-
մին դպրոց են վազում... Երեակայիր քեզ հա-
րիւրից աւելի զանազան ազգերի միլիօնաւոր մա-
նուկների բազմութիւնը, նրանց անընդհատ շար-
ժողութիւնը, որի մէջ ինքդ ևս բաժին ունես:

Մտածիր, եթէ այդ շարժողութիւնը դադարի, ինչ
կլինի մարդկութեան վիճակը, չէ՞ որ նորից բարբա-
րոսութեան մէջ պիտի ընկնէր։ Շարժողութիւնը
աշխարհի յառաջադիմութիւնն է, յոյսն է, նրա
փառքն է։ — Սիրտ առ, դու էլ, անհուն բանակի
փոքրիկ զինուոր, գրքերդ քո զէնքերն են, դասա-
րանդքու գունդը, պատերազմի գաշտը ողջ աշխարհն
է և յաղթանակը մարդկային ցեղի կրթութիւնը։
Վախկոտ զինուոր մի լինիլ, սիրելի Հայնրիխ։


ՈՐԴԻՆ

Ես վախկոտ զինուոր չեմ լինիլ, ամենակին չէ։
Բայց ես մեծ սիրով կը գնայի ուսումնարան, ե-
թէ ուսուցիչն ամեն առաւօտ այնպէս պատմու-
թիւն կարդար, ինչպէս այսօր արեց։ «Իւրաքան-
չիւր ամիս, ասեց մեզ, պէտք է այսպէս պատ-
մութիւն բերեմ և ձեզ գրել տամ։ միշտ լինելու
է մի գեղեցիկ և ճշմարիտ պատմութիւն և նրա
մէջ մի հերոս տղայ։ Այսօրուայ պատմութեան ա-
նունն է։

ՓՈՅԲՐԻԿ ՀԱՅՐԵՆԱՍԵՐԸ.

Իսպանիայի Բարցելոնա քաղաքից մի ֆրան-
սիական շոգենաւ գնում էր Գենուա։ Նրա վրայ
կային ֆրանսիացիք, իտալացիք, շվեյցարացիք։ Ճա-
նապարհորդների մէջ կար և մի 11 տարեկան տը-
ղայ, վատ հազնուած, բոլորովին մենակ, վայրի
փոքրիկ կենդանու պէս խոյս էր տալիս բոլորից

և խէթ աչքով նայում վրաները։ Մարդկանց վր-
բայ այդպէս ժնդունած նայելու բաւական հի-



մունքներ ունէր, երկու տարի առաջ նրա հայ-
րըն ու մայրը, որ Պաղուայի շրջակայթի գիւղա-

ցիներ էին, իրան վաճառել էին թափառաշրջիկ լարախաղացների գլխաւորի վրայ: Սա իւր արուեստն ու զնորքը սովորեցրեց տղին ծեծի ու ու թակի միջոցով, երբեմն էլ առանց հացի թողնելով: Տղէն լարախաղացների խմբի հետ շրջեց ժրանսիայում, իսպանիայում: Վերջը երբ տեսաւ, որ ծեծին ու քաղցածութեան դիմանալու հնար չունի, Բարցելոնա հասնելուն պէս ողորմելի վիճակում գլուխ տուաւ, փախաւ իրան տանշողի ձեռից և գնաց իտալական հիւպատոսի մօտ նրա հովանաւորութիւնը խնդրելու: Սա խեղճ գալով տղին իսկոյն շոգենաւի վրայ դրեց, մինամակ էլ տուեց, որ տանի Գենուայի ոստիկանութեան գլխաւորին յանձնի: Դա պէտք է տղին ետ ուղարկէր ծնողների մօտ, այն ծնողների, որոնք նրան իբրև անսառուն վաճառել էին:

Խեղճ տղէն փաթաթուած էր ցնցոտիների մէջ և հիւանդ էր: Նրան քնելու տեղ էին տուել երկրորդ կարգում: Ամենի աչքն էլ նրա վրայ էր. մի քանիսը հարցեր տալով ուզում էին խօսեցնեն, բայց նա պապանձուածի պէս էր, չէր պատասխանում: Երեսում էր որ ամենին հաւասարապէս ատում ու աբհամարհում էր. այն աստիճան զրկանքներն ու ծեծը նրան դառնացը կասկածու էին գարձրել: Սակայն երեք ճանապահորդները կալի պէս ամուր կալչելով նրան այնքան հարց տուին, որ վերջապէս յաջողեցրին նըրա լեզուն բանալ: Տղէն գոհիկ ոճով, իտալե-

բէն, գրանսուերէն, իսպաներէն միասին խառնած սկսեց պատմել իւր գլխով անցկացածը: Երեք ճանապարհորդները իտալացիք չէին, բայց հասկանում էին նրա զրոյցը. նրան սոլիիներ (մանր փող) բաշխեցին, մասսամբ նրան խղճալուց, մասսամբ էլ նրանից, որ գլխները գինուց տաք էին: Իրանց կատակը նրա հետ շարունակելով յորդորում էին, որ ուրիշ բան էլ պատմի: Այդ վայրկեանին էր, որ երեք տիկին դանիճ մտան: Երեք ճանապարհորդները պարձանքի համար տղին աւելի փող տուին և ասին.—Վերցը ու այս:—Վերցը ու այս էլ: Մետաղէ փողերը զբնգալէ գցում էին սեղանի վրայ: Տղէն այդ բոլորը ածում էր զրպանը, չնորհակալութեան տեղ ցածր ձայնով փնթփնթում, բայց գէմքի վրայ ժպիտ ու քաղցը ութիւն երեացնում: Դրանից ետ բարձրացաւ իւր ննջարանը, վարագոյը քաշեց և հանգիստ պարկելով մտածեց անցած-գարձածի վրայ: Այդ փողերով կարող էր նաւի վրայ անուշ բաներ ուտել, չէ որ երկու տարի շարունակ ցամաք հաց էլ չէր ճարել: Գենուա որ համնէր, կարող էր մի կարգին հազուստ առնել, երկու տարի շարունակ ցնցոտիների մէջ էր թրե եկել: Եթէ այդ փողը տուն տանէր, հօրից ու մօրից աւելի մարդագարի ընդունելութիւն կը գտնէր, բան եթէ գատարկ զրպանով գնար: Այդ փողը նրա համարմի փոքր զրամագլուխ էր: Իւր ննջարանում մըխիթարուած նա մտածում էր, թէ ինչ՝ անի այդ

փողով, իսկ երեք ճանապարհորդները դահլիճի մէջ-
տեղ դրած սեղանի շուրջը նստած իրար հետ խօ-
սում էին: Նրանք խմելը շարունակելով պատ-
մում էին ճանապարհորդական տպաւորութիւննե-
րը այն երկրների մասին, ուր նրանք եղել էին:
Վերջն սկսան անել իրանց դիտողութիւնները ի-
տալիայի մասին: Մէկը նրանց հիւրանոցներն էր
վինովում, միւսը նրանց երկաթուղիները, երրոր-
դը միւսների հետ համաձայնելով ոչինչ չգտաւ
իտալիայում հաւանելի. սկսան ամեն ինչ պա-
խարակել: Մէկն ասում էր.—Ես լաւ կը համա-
րեմ Հապլանդիայում ճանապարհորդել, քան ի-
տալիայում: Երկրորդն ասում էր.—Իտալիայում
խարեւաներից ու գողերից աւելի մարդ չեմ տե-
սել: Երրորդը պնդում էր.—Իտալական աստի-
ճանաւորները հասարակ կարդալն անդամ չը գի-
տեն:—Կարձ տղէտ ժողովուրդ է, ասեց առաջին
ճանապարհորդը:—Կեղտոտ ժողովուրդ է, վրայ
բերեց երկրորդը:—Աւա... գոչեց երրորդը, ու-
զում էր ասել՝ աւագակներ են, բայց չկարողա-
ցաւ խօսքը վերջացնել. սոլդիները և կէս ֆրան-
կանոց փողերը շփշփալէ զիպաննրանց զիմներին,
ուսերին և զնդզնդալէ զլորուեցին սեղանի և յա-
տակի վրայ: Երեքն էլ կատաղած վեր թռան տեղ-
ներից և բարձր նայեցին: Մի բուռ սոլդի դար-
ձեալ թափուեց նրանց երեսին.—ահա ետ ստա-
ցէք ձեր սոլդիները, զլուխը վարագոյրի ետեց
հանելով գոչեց տղէն արհամարհանքով, ինձ պէտք

չ' այն մարդկանց ողորմութիւնը, որոնք ան-
պատում, անարզում են իմ հայրենիքը».

ՓՈՔՐԻԿ ԱՐՑԵՍ

1859 թ. Լոմբարդիայի ազատութեան կոռու-
ժամանակն էր. տեղի էր ունեցել Սոլֆերինօի
ճակատամարտը, որի մէջ ֆրանսիացիք ու իտալա-
ցիք միահամուռ ուժով լաւ ջարդել էին աւստրիա-
ցոց: Դրանից մի քանի օր յետոյ յունիաի սիրուն
առաւօտ մի փոքր հեծելավաշտ Սալուցցօից յետ-
ընկած կածանով համրաքայլ գնում էր թշնա-
մու դէմ, շրջակայքը ամենայն զգուշութեամբ աշ-
քի տակ առնելով: Զօրաբաժնին առաջնորդում
էին մի սպայ և մի յիսնապետ. բոլորն էլ լոիկ
ուշի ուշով նայում էին իրանց առաջ, բոլէ առ
բոլէ սպասելով, որ թշնամու առաջապահ գնդի
սիպտակ համազգեստները ահա ծառերի արանքում
լոյս կընկնեն: Այսպէս գալով հասան մի զիւղական
տան առաջ, որ սոսիներով շրջապատած էր և
որի առաջ մեն մենակ մի տղայ կար 11—12 տա-
րեկան. դանակով մի ձիւղ էր քշտում նրանից մի
ձեռնափայտ շինելու համար. տան լուսամուտից
կախուած էր մի մեծ եռագոյն դրոշակ: Մէջը ոչ
ոք չկար, զիւղացիք դրոշակն այնտեղ ամրացրել
էին ու իրանք ահից վեր կացել փափել: Տղէն
հեծելավաշտին նկատեց թէ չէ, ձեռի փայտը դէն
զցեց և զլսարկը բարձրացրեց: Նա մի զեղեցիկ պա-
տանի էր խիզախ երեսով, մեծ կապոյտ աչքերով

և երկար խարտեաշ մազերով. շապկանց էր և կուրծքը բաց:— Ի՞նչ ես անում այստեղ, հարցրեց նրան սպան ձիու գլուխով պահելով, ի՞նչու դու ծնողներիդ հետ չես փախել:— Ես ծնողներ չունեմ, պատասխանեց տղին, գտնովի մանուկ եմ. ես աշխատում եմ իմ ուժի չափ ամենի համար: Այստեղ մնացել եմ պատերազմին մտիկ անելու: — Տեսել ես թշնամուն դէսը մօտիկ անցնելիս: — Ո՞չ. երեք օրից ի վեր չէ:

Սպան իւր առաջ նայելով մի վայրկեան մըտածմունքի մէջ ընկաւ, յետոյ ներքեւ թուաւ ձիուց, պատուիրելով զինուորներին երեսները դէպի թշնամին դարձնել, մտաւ տունը և բարձրացաւ կտուրը: Կտուրը բարձր չէր, այնտեղից կարելի էր շրջակայքի միայն մի փոքր մասը տեսնել: — Պէտք է ծառերի վրայ բարձրանալ, ասեց սպան և իջաւ ներքեւ: Ամբարի ուղիղ դիմացը կանգնած էր մի շատ բարձր և բարակ սոսի, կատարը կապոյտ երկնքում օրօրւում էր: Սպան մի բոպէ յոնքերը կիտելով մէկ ծառին նայեց, մէկ զինուորներին ու յանկարծ հարցրեց տղին. — Այ տղայ, սուր աչքեր ունես: — Ե՞ս, պատասխանեց տղին, մի մղոնի վրայ ճնճղուկին նշմարում եմ: — Ուր էր, թէ կարողանայիր այս ծառի կատարը բարձրանալ: — Այս ծառի կատարը, ես: Հը, կէս բռպէի մէջ կըթռչեմ կատարը: — Յետոյ կարող ես ինձ ասել, ինչ որ վերեից տեսնես. արդեօք այն կողմը թշնամի զինուորներ, փոշու ամպեր, պըս-

պղան զէնքեր, ձիաներ կան թէ չէ: — Անկասկած,



կարող եմ: — Ի՞նչքան ես պահանջում այդ ծառայութեան համար: — Ես ի՞նչ եմ պահանջում, խօ-

սեց տղին ժպտալով, ոչինչ։ Այդ էր պակաս։
Եթէ այդ ուրիշների համար լինէր, զլուխս կըտ-
րէին, չէի անիլ, բայց մերսոց համար ուրիշ բան
է. չէ որ ես էլ լուրագացի եմ։—Երբ այդպէս
է, դէ գնա վերև։ Սյս վայրկեանիս, համբերէք
ուսնամաններս հանեմ։

Շտապով կոչիկները հանեց, մէջքի գոտիկը
պնդացրեց, գդակը շալրատեց խոտի մէջ և սոսու
բնին մօտենալով երկու թել պատ դցեց: — Կաց
սպասիր... գոչեց սպան այնպիսի շարժմունք ա-
նելով, կարծես յանկարծակի երկիւղ զգալով ու-
զում էր խափանել: Տղէն շուռ եկաւ և գեղեցիկ
կապոյտ աչքերը սկսուելով կարծես հարցնում էր՝
Բ՞նչ կայ: — Ոչինչ, լաւ, բարձրացիր, ասեց սպան:
Տղէն կատուի պէս մազլցելով գնաց վերի: — Ա-
ռաջներդ նայեցէք, պատուիրեց սպան զինուոր-
նելին: Միքանի վայրկեանում տղէն հասել էր
ծառի կատարը. ճիւղի բնով փաթաթուած, ոտե-
րով սաղարթի մէջ, մարմնով բարձր ցցուած. ա-
րևը գաղում էր շեկիկ գլուխը, մազը հուրճրատում
էր ինչպէս ոսկի: Սպան հազիւ էր տեսնում նը-
րան, այնքան փոքր էր երեսում: — Նայիր ուղղա-
կի հեռաւորութեան մէջ, գոչեց սպան: Տղէն աջ
ձեռը ծառից հեռացնելով զրեց ճակատին, որ լաւ
տեսնի: — Ի՞նչ ես տեսնում, հարցրեց սպան: Տղէն
գլուխը խոնարհեցնելով, ձեռն էլ իբրև խօսախո-
ղովակ բանացնելով պատասխանեց: — Երկու ճիւ-
ղոր սիպտակ ճանապարհի վրայ: — Ի՞նչքան են

հեռու այստեղից: — Կէս մղօն: — Շարժողակազմ են
նրանք: — Ո՞չ, կանգնած են: — Ել ուրիշ ի՞նչ ես
տեսնում, հարցը եց սպան փոքր լսելուց ետ, հա-
յիր դէպի աջ:

Տղէն նայեց դէպի աջ ու ասեց. — գերեզմանատան մօտիկ ծառերի մէջ ջտեղ մի բան պսպղում է, երևում է, սուխններ են: — Մարդիկ տեսնում ես: — Ոչ, կարելի է ցորենի արտերի մէջ թագ-նուած են:

Այդ վայրկեանին օդը պատռելով մի գնդակ
զգաց բարձրից և գնաց տան ետեր թրիսկաց:—
Տղայ, ցած իջիր, կանչեց սպան, քեզ տեսել են,
Ել ոչինչ չի հարկաւոր, ներքի իջիր: — Ես չեմ
վախենում, տեսնում են տեսնեն, պատասխանեց
տղին: — Իջիր ներքի, ասում եմ... կրկնեց սպան.
Ճախ կողմն ի՞նչ կայ: — Չախ կողմը: — Այս, ճախ
կողմը:

Տղեն պլուխը ծռեց դէպի ձախի: Այդ վայր-
կեանին օդը պատռեց ուրիշ գնդակի վզզոց, ա-
ւելի սուր ու զօրեղ թափով, քան առաջինը: Տղեն
շփոթուեց.—Վայ քու տղիս տղայ, բացականչեց
նա, նրանք ինձ անպատճառ աչքադրել են:

Գնդակն եկաւ ուղիղ նրա ականջի տակով
անցաւ:—Ցած արի, հրամայեց սպան վրդովուած:
—Այս ըստէիս գալիս եմ, պատասխանեց տղէն:
Ծառն ինձ պաշտպանում է, միամիտ եղէք: Դուք
ուղում էիք իմանալ ինչ կայ ձախ կողմը, չէ՞—
Այն, ձախ կողմը, պատասխանեց սպան վրդովուած:



ցած իջիր:—Զախ կողմը, խօսեց բարձրաձայն տղէն մարմնով այն կողմը ծռուելով—այնտեղ մատուռի մօտ տեսնում եմ...

Երրորդ կատաղի սուլոցը պատռեց օդը, հէնց այդ վայրկեանին տղէն իջնելու վրայ էր, առաջ բնին զարկուեց, յետոյ ճիւղերին և ապա զիսի վայր կոնթերը տարածելով գլորուեց դէպի գեալին:—Նզովնւած լինեն, աղաղակեց սպան մօտ վազելով: Տղէն մէջքի վրայ թրախակ դիպաւ գետնին և բազկատարած մնաց մեկնուած: Արիւնը առուի պէս հոսում էր կրծքի ձախ կողմից: Յիսնապետը և երկու զինուոր ցած թռան ձիուց: Սպան կոացաւ տղի վրայ և շապիկը պատռեց: Գնդակը մտել էր նրա ձախ թսքը:—Մեռած է, գոչեց սպան:—Ո՛չ, կենդանի է, պատասխանեց յիսնապետը:—Ափսնս աղքատ տղայ, անահ արդայ, կանչեց սպան. քաջ կաց, սրանիվ կաց:

Այսպէս խրախուսելով թաշկինակը վէրքի վրայ դրած պինդ պահում էր. տղէն աչքերը շուռ տուեց և թուլացած զլուխը վէր գցեց: Մեռաւ նա: Սպան գունաթափուեց և մի վայրկեան ակնապիշ նայեց նրան. յետոյ զլուխն ուղղելով պառկացրեց խոտի վրայ: Կողքին կանգնած լուռ դիտում էր: Յիսնապետն ու երկու զինուորները նոյնպէս նայում էին անշարժ, անթարթ: Միւները դէպի թշնամին էին դարձրել երեսները:—Խեղճ տղայ, կրկնեց սպան տիրապին, աղքատ քաշափիտ տղայ:

Յետոյ մօտեցաւ տանը, վերցրեց եռագոյն դրոշակը լուսամուտից և փոեց մատաղ հանգուցեալի վրայ իբրև դիագարդ, միայն երեսը բաց թողեց: Յիսնապետը գդակը, ոտնամանները, ձեռնափայտը և դանակը դրեց հանգուցեալի կողքին: Նրանք մի բոպէ լոեցին. յետոյ սպան դարձաւ յիսնապետին և ասեց:—Մենք սրան մեր շարժական հիւանդանոցի միջոցով բերել կըտանք, իբրև զինուոր է մեռել, զինուորներն էլ թողնելու են նրան: Այս ասելուց ետ տղի ձեռը համբուրեց և հրաման արեց:—Հեծէք ձիանը: Ամէնն էլ թըռան թամքի վրայ. շաղ անցած վաշտը ի մի ժողովուելով իւր ճանապարհը շարունակեց: Միքանի ժամից ետ փոքրիկ հանգուցեալը արժանացաւ զինուորական պատուի:—Արել մայր մտնելուց առաջ իտալական առաջապահ զօրքի ամբողջ գիծը շարժուեց դէպի թշնամին այն կածանով, որ առաւօտը հեծելավաշտ է ընտրել, ընթանում էր այժմ թեթելնթաց զօրքի մի գունդ, որ մի քանի օր առաջ արիութեամբ պատերազմելով Սան Մարտինօ ըլուրը իւր արիւնով ողողել էր: Տղի մահուան լուրն արգէն տարածուել էր զինուորների մէջ բանակատեղը թողնելուց առաջ: Կածանը, որի կողմում առու էր հոռում, մի քանի քայլով հեռու էր այն գիւղական տանից: Երբ գնդի սպանները տեսան սոսու տակ եռագոյն դրոշակով ծածկուած դիակը, պատիւ տուին թուրները հանած: Նրանցից մինը տոռուի

ծաղկալից ափին մօտենալով մի քանի զոյդ պոկեց և սփռեց հանգուցեալի վրայ: Նրա օրինակին հետևեցին բոլոր զինուորները, քաղուտեցին ու մօտենալով թափեցին տղի վրայ: Մի քանի բոպէում ողջ մարմինը թաղուեց ծաղիկների տակ: Սպաները, զինուորները մօտով անցնելիս ողջոյն էին առաքում և մնաս բարե ասում: — Կեցցես, փոքր լոմբարդացի: — Մնաս բարե, տղայ: — Հանգիստ քնիր, շէկիկ սիրուն գլխանի: — Կեցցես: — Դու հերս ես: — Մնաս բարով...

Մի սպայ պոկեց իւր պատուի շքանշանը և զցեց նրա վրայ: մի ուրիշը գնաց և ճակատը համբուրեց: Ծաղիկներն անընդհատ թափում էին նրա բաց ոտներին, արիւնշաղախ կրծքին, շէկիկ զիսին: Եւ նա քնում էր խոտի մէջ, իւր զրոշակի մէջ փաթաթուած, սիրտակ ժպտուն երեսով: Աղքատ տղէն կարծես այս ողջոյնները լսում էր և երջանիկ զգում իրան, որ կեանքը զոհ է բերել իւր սիրելի լոմբարդիայի համար:

ՓՈՔՔԻԿ ԳՐԱԳԻՐԸ.

Պուլիօն տարրական դպրոցի դ. գասարանի աշակերտ էր. ֆլորենտացի տամներկու տարեկան հիանալի, թխամազ, ձերմակերես տղայ էր և երկաթուղու պաշտօնեայի աւագ որդի: Ծնանիքը մեծ էր, իսկ հօր ոռնիկը շատ չափաւոր, ուստի ապրում էին կարօտութեան մէջ: Հայրը շատ սիրում էր որդուն, միշտ հետը քաղցր

էր ու ներողամիտ, բայց նա չափազանց խիստ էր ու պահանջող, երբ գործը վերաբերում էր դպրոցին, ուսանելուն: Որդին որքան կարելի է պէտք է շուտ մի պաշտօն ստանար, իսկ դրան հասնելու համար կարճ միջոցում պէտք է շատ բան սովորէր: Տղէն ծուլութիւն չէր անում. բայց էլի հայրը շարունակ նրան յորդորում էր, որ սովորի, զրքից պոկ չը գայ: Խնքը գեռ մէջ հասակումն էր, միայն չափից գուրս աշխատելուց բոլորովին ծերացել էր: Որովհետեւ պակասութեան աէր էր, ընտանիքը պահելու համար ծառայութիւնից գուրս վերցնում էր արտազրելու և կողմնակի գործեր և գիշերները աշխատում: Վերջին ժամանակ զըրքեր ու շաբաթազրեր հրատարակող մի զրախանութ նրան գործ էր տալիս, որ ծրարակապերի վրայ բաժանորդների անուններն ու հասցէները զրի: Խոշոր և պարզ զրած հինգ հարիւր հասցէների համար նրան վճարում էին երեք ֆրանկ: Յոզնեցնող աշխատանք էր, ուստի ճաշի ժամանակ յաճախ գանգատում էր. — Աչքերս սկսել են թուլանալ, այս գործը հոգիս հանում է: — Թողես գրեմ, ասեց մի անդամ որդին. իմ ձեռքը շատ նման է քու ձեռքին: — Ո՛չ, որդի, չի կարելի, պատասխանեց հայրը, զու պիտի ուսանելու ետնից կենաս, քու դպրոցն աւելի կարեւոր է քան թէ ծրարների վրայ զրելը: Խիղճս ինձ չարաշար կը տանջի, եթէ թէկուզ մի ժամ խըլեմ քու ժամանակից: Շնորհակալ եմ, որ ուզում

Ես ինձ օգնել, բայց միւս անդամ էլ բերանիցդ
այդպիսի խօսք չը հանես:

Զուլիօն իմանալով հօր հաստատ բնաւորու-
թիւնը՝ էլ երկրորդ անդամ չը խնդրեց, բայց տե-
սէք ի՞նչ արաւ: Ուզիղ գիշերուայ տասներկու-
ժամին հայրը սովորաբար թողում էր զրելը և
աշխատելու սենեակից գնում ննջարան: Եր-
բեմն այդ միջոցին ժամացոյցի խփելուց Զուլիօն
զարթնելով՝ լսում էր ետ քաշուող աթոռի դռու-
ցը և հօր զգոյշ քայլերը: Միանդամ նա այնքան
սպասեց, մինչև հայրը քնեց, յետոյ կամաց վեր
կացաւ, շրբերը հագաւ, զգոյշ շոշափելով հասաւ
սենեակը և նաւթի ճրագը վառեց: Գրասեղանի
վրայ տեսաւ մի կապուկ կտրտած թուղթ և հաս-
ցէների ցուցակ կողքին: Զուլիօն սկսեց զրելը
աշխատելով ամեն կերպ հօր ձեռքին նմանեցնել:
Աշխատում էր եռանդով, բայց վախը սրտում.
զրած ծրաբների թիւը կարճ միջոցում մեծացաւ,
ժամանակ ժամանակ նա գործն ընդհատում էր,
որ կուռը հանգստացնի. ականջը սրած նայում
էր դէս ու դէս, ժպտում ու սկսում կրկին զրելը
աւելի սիրով, ախորժով: Նա զրեց հարիւր վաթ-
սուն ծրաբակապ, այսինքն նա աշխատել էր մի
ֆրանկ: Այս ժամանակ թող տուեց զրելը, ամեն
ինչ սեղանի վրայ կարգի բերեց, ճրագը հանդ-
ցրեց, ոտի ծայրերի վրայ վերադարձաւ և պարկեց
քնելու, Միւս օրը ճաշի միջոցին հայրը լաւ ար-
բամադրութեան մէջ էր. նա ոչինչ չէր նկատել.

զրում էր մեքենայօրէն միտքը բոլորովին ուրիշ
բանի վրայ. աշխատանքը հաշուում էր ժամերով,
և ծրաբների թիւը ստուգում էր հետեւեալ առա-
ւոտը: Լաւ տրամադրութեամբ ճաշի նստելով որ-
դու ուսը ձեռքով տիտիեց ու խօսեց.— Է՛, Զու-
լիօ, հայրիկդ աւելի քաջ է աշխատում, քան դու
կարծում ես, երէկ իրիկու երկու ժամուայ մէջ
ամբողջ գործի երրորդ մասը շինել եմ: Իսկի
այդպէս բան չէ պատահել... այդ նշանակում է,
ձեռս գեռ առոյդ է և աչքս կտրուկ:

Զուլիօն իւր մտքում հանգիստ ցնծում էր.
«Խեղճ հայրիկ, արածս նըան բացի վաստակից
բաւականութիւն էլ է պատճառել: Ինքն իւր ա-
ռոյգութեան վրայ մեծ կարծիք ունի: Թող այդ-
պէս լինի, ես սկսածս վստահութեամբ առաջ կը-
տանեմ»:

Զուլիօն յաջողութիւնով քաջալերուած հե-
տևեալ գիշերը՝ հէնց որ 12 ժամը զարկեց, գոր-
ծի կացաւ: Այսպէս շարունակուեց մի քանի գի-
շեր, հայրն ամենեին կարծիք չէր տանում: Մի-
այն միանդամ իրիկնահացի ժամանակ ասեց.—
Զարմանալի է, թէ ի՞նչու վերջին ժամանակները
նաւթ շատ է գնում:

Զուլիօյի սիրաը մի քիչ աճ ու դող ընկաւ.
բայց բանը դրանով էլ կերջացաւ. հայրը խօսքը
չերկարացրեց: Գիշերային աշխատանքը առա-
ջուայ պէս շարունակուեց: Զուլիօն գիշերներն
անքուն մնալով առաւօները լինում էր թմրած,

թոյլ, երեկոյեան հարկաւոր էր դասեր պատրաս-
տել, իսկ նրա աչքերը հուպ էին գալիս: Առաջին
անգամն էր, որ դասերը պատրաստելիս նրա քու-
նը տաճում էր: — Դէ, ի՞նչ բանի ես, սովորիր
դասդ, աղաղակում էր հայրը: Զուլիօն իրան թա-
փահարում էր և սկսում գործի կենալ: Այդ բա-
նը կըկնուեց միւս օրը և նրա հետեւալ օրերը:
Զուլիօն ննջում էր գրքերի վրայ, ուշ զարթնում
և դասերն ակամայ սովորում: այդպէս նրան
տեսնողը կասէր, որ ուսումը նրան զզուեցրել է:
Հայրն աչքի տակով հետեւում էր այդ արարմուն-
քին և ինքն իւր սրտում վշտանում: վերջն
սկսեց նրան մի առաւօտ նախատել: — առաջ եր-
բէք այդպէս բան չես արել, Զուլիօ, դու քո
պարտականութիւնը չես կատարում, դու այժմ
այն չես, ինչ որ առաջ: Արածդ ինձ չի դուք գա-
լիս, այն ինչ ողջ ընտանիքի յոյսը քեզ վրայ է:
Ես քեզանից դժգոհ եմ, հասկանում եմ:

Այս խիստ յանդիմանութիւնը, որ կեանքում
առաջին անգամն էր լսում, շփոթեցրեց պատա-
նուն: — ճշմարիտ է ասում, մտածեց նա, այսպէս
շարունակուել չի կարելի: Այլ ևս խաբելու կա-
րիք չկայ»:

Բայց հէնց այդ օրուայ իրիկնահացին հայրն
ուրախ գուարթ խօսեց: — գիտէք ինչ, այս ամիս
ծրարակապեր զբելով երեսուն երկու ֆրանկ ա-
ւելի եմ վաստակել, քան անցեալ ամիս...

Եւ սեղանի տակից հանեց մի տուփ լիք քաղց-

րեղէն: Նա այդ գնել էր կամենալով երեխաների
հետ տօնել իւր արտասովոր վաստակը: Երեխա-
ները կոնֆէսները տեսնելով ամեն կողմից ցըն-
ծացին, ծափ տուին: Զուլիօն սիրտ առաւ և ինքն
իրան ասեց: — Ոչ, խեղճ հայր, ինչպէս կուզես
ինձ յանդիմանիր, ես դարձեալ քեզ խաբելու եմ,
ցերեկը բոլոր ուժերս կըլարեմ դասերս սովորե-
լու համար, իսկ զիշերը կըրանեմ քու փոխարէն
ընտանիքին օգնելու համար... — Երեսուն երկու
ֆրանկ աւելի, սա հանաք բան չի, շարունակեց
հայրը. ես շատ, շատ գոհ եմ... միայն սա... ցոյց
տալով Զուլիօյի վրայ, սա է, որ սիրտս կոտ-
րում է...

Զուլիօն լուսվթեամբ տարաւ յանդիմանու-
թիւնը և զսպեց արտասուքները, որ չըթափուեն.
բայց սրաի մէջ ուրախ էր ու բախտաւոր: Բոլոր
ուժը հաւաքելով աշխատելը շարունակեց, սակայն
աւելի յոգնեց ու մաշուեց, որովհետեւ աւելի դը-
ժուար էր դառնում իրան օգնելը: Այսպէս անց-
կացաւ երկու ամիս: Հայրը նրան նախատում
էր, աչքերը վրէն ոլորում, բարկանում: տեսաւ
որ չի լինում, վերջը զնաց դպրոց որդու մասին
տեղեկութիւններ ստանալու:

— Նա ետ չի մնում ուրիշներից, պատաս-
խանեց ուսուցիչը, այն էլ նրա համար, որ խիստ
ընդունակ է: Բայց առաջուայ սէրը գէպի ուսումը
այլ ևս նրա մօտ չկայ: Նստած տեղը շարունակ
ննջում է, յօրանջում է, ուշքը վրէն չի: Շարադ-

բութիւնները գրում է շատ կարճ ու անփոյթ կերպով: Նա կարող էր աւելի լաւ պարապել:

Այդ երեկոյ հայրը Զուլիօյին մի կողմ քաշելով սկսեց այնպիսի կծու խօսքեր ասել, որ սա երբէք լսած չէր.—Զուլիօ, դու տեմնում ես, որ ընտանիքը կերակրելու համար այնքան աշխատել եմ, որ ուժու կտրուել է, դու չես ուզում ինձ օգնել: Դու քարասի՞րտ տղայ: Քեզ համար կարծես նշանակութիւն չունեմ ոչ ես, ոչ մայրդ, ոչ եղբայրներդ...: —Ախ, չէ, չէ, հայրիկ, այդ մի ասիլ, հեկեկալով աղաղակեց Զուլիօն և հէնց կամենում էր ամեն բան խոստովանել, պատմել, հայրը նրա խօսքը կտրեց.—Դու գիտես, թէ ընտանիքը ի՞նչ դրութեան մէջ է. գիտես, որ ամենս էլ անձնուիրութեամբ պէտք է աշխատենք: Ես ինքս երկուտակ պէտք է քրտինք թափեմ, յոյս ունէի այս ամիս երկաթուղուց հարիւր ֆըրանկ ընծայ ստանամ, բայց այսօր իմացայ, որ ոչինչ չեմ ստանալու:

Զուլիօն, որ մտագրուել էր մի առ մի պատմել իւր գիշերային աշխատանքի մասին, լսելով հօր ձախորդութիւնը, լեզուն իրան քաշեց ու ինքն իրան ասեց.—Ոչ, հայր, քեզ բան չեմ ասիլ, այդ գաղտնիքը կըպահեմ, որ հնարաւորութիւն ունենամ քու փոխարէն աշխատելու... ես քեզ ցաւացնում եմ, հայրիկ, բայց զրա տեղ այլ կերպ կը հատուցանեմ: Ինչպէս էլ ծանր լինի, կըսերտեմ դասերս և կանցնեմ բարձր դասարան...

բայց այժմ ամենակարեորը քեզ օգնելն է, քեզ հալ ու մաշ անող աշխատանքը թեթևացնելն է. ես այդ կանեմ...

Այսպէս դարձեալ երկու ամիս շարունակուեց, գիշերային աշխատութիւնը մի կողմից, ցերեկուայ յոգնածութիւնը միւս կողմից. որքան որդին յուսահատ ջանքեր էր բանեցնում, այնքան հայրը խիստ կշամբանքներ էր թափում նրա գլխին: Ամենից կսկզալին այն էր, որ հայրը հետզհետէ սառչում էր դէպի որդին. հետը հազիւ էր խօսում, համարում էր նրան կորած, որից բան սպասելու յոյս չկար, մինչև անզամ խոյս էր տալիս, որ աչքը աչքին չառնի: Զուլիօյին այս բանը շատ էր տանջում: Երբ հայրը շուռ էր գալիս, որ նրան չտեսնի, վշտահար Զուլիօն նրա եանից համբոյը էր առաքում մանկական և թախծալից քնքշութիւնով... Կոկիծի և յոգնածութեան ձեռքից նիհարում և գունատում էր, աւելի անփոյթ էր պարապում գպրոցում: Հասկանում էր, որ գիշերուայ աշխատելուն վաղ թէ ուշ պիտի վերջ տրուի, ամեն երեկոյ վճռում էր, որ էլ չի աշխատելու: Բայց հէնց որ տասներկու ժամը խփում էր, փոխանակ կարական ասելու «չեմ գնալ» ու տեղիցը վեր չըկենար, նա սկսում էր տանջուել խղճի խայթից, որ անկողնի մէջ անգործ պարկել է, չի գնում իւր պարտականութիւնը կատարելու, որով իւր հօրից, իւր ընտանիքից մի ֆրանկ է գողանում: Եւ վեր

Եր կենում նա մտածելով, որ միանգամ երեխ հայ-
րը կըզարթնի, ներս կը մտնի ու նրան գրելիս
կը բռնի... Կամ երկու անգամ կըհամարի իւր
գրած ծրարակապերը և խաբէութիւնը կը բաց-
ուի: Այսպէսով ամեն ինչ լոյս կընկնի և ինքն
իրան կը վերջանայ...

Եւ այսպէս նա շարունակեց: Բայց մի երեկոյ
հացի վրայ հայրը մի այնպիսի խօսք ասեց նը-
րան, որ համարեա կիսամեռ դարձրեց: Մայրն
այդ նկատեց ու անհանգստութեամբ հարցրեց.—
Հիւանդ ես, ինչ է, Զնւլիօ: Եւ դառնալով ա-
մուսնուն ասեց.—Զնւլիօն տկար է երեսում, մը-
տիկ, ինչպէս գոյնը թոցրել է: Ի՞նչ է պատա-
հել քեզ, Զնւլիօ:

Հայրը խէթ-խէթ նայեց նրա վրայ ու ասեց.
—Ով վատ խիղճ ունենայ, վատ էլ առողջութիւն
կունենայ: Երբ ուսումնասէր աշակերտ էր և ու-
շակալ որդի, նա չէր հիւանդանում:—Բայց նա հի-
ւանդ է, այ մարդ, գոչեց մայրը:—Այդ իմ գործը
չէ, պատասխանեց հայրը: Այս խօսքերը նետի պէս
ցցուեցին պատանու սրտի մէջ. —Ի՞նչպէս, իմ
առողջութիւնը հօրս համար նշանակութիւն չու-
նի... առաջ բաւական էր, որ քիչ հաղայի, նա
շփոթուելուց զլուխը կորցնում էր: Ուրեմն նա էլ
ինձ չի սիրում: Երեսում է, ես հայրիկիս սրտի
մէջ մեռած եմ... Ա՛խ, ոչ, սիրելի հայրիկ, խօ-
սեց ինքն իրան երկիւղից կծկուած սրտով, այժմ
պէտք է վերջ տամ զրելուն. առանց քու սիրու չեմ

կարող ապրել: Ամեն ինչ բանալու եմ. ես չեմ
ուզում քեզ այլ ևս խաբել, ուզում եմ առաջուայ
պէս սովորել: Ինչ ուզում է ինձ պատահի. փոյթ
չէ, միայն թէ, իմ խեղճ հայրիկ, ինձ դարձեալ
սիրես: Օ՛, այս անգամ վճռիս հաստատ եմ մնալու:

Զնայած այսպէս հաստատ վճռելուն, նա գի-
շերը դարձեալ վեր կացաւ. սովորութիւն էր դա-
ռել, չէր կարողանում ետ կենալ: Կամենում էր
զիշերուայ լուսութեան մէջ վերջին անգամ նայել
այն սենեակին, ուր երկար ժամանակ ծածուկ աշ-
խատել էր, ուր նրա սիրտը լցուում էր բաւակա-
նութեամբ, բնքոյշ զգացմունքով: Երբ զրասեղա-
նի մօտ էր հասել, նաւթի ճրագը վառեց. հէնց որ
ծրաբների կոյտը տեսաւ, որոնց վրայ այլ ևս քա-
ղաքների ու մարդկանց անունները չէր գրելու,
որ արդէն բերանացի գիտէր—մի տիբութիւն պա-
տեց նրան, կատաղի շարժումով բռնեց գրիչը,
որ սովորականի պէս աշխատի, գրի: Զեռը մեկնե-
լիս գիպաւ մի գրքի և գիրքը շրանիկ ընկաւ: Ա-
րիւնը թուաւ զլուխը: Զէ որ հայրը կարող էր
դարթնել: Իհարկէ վատ բան անելիս չէր բռնիլ.
ինքն էլ արդէն որոշել էր ամեն ինչ պարզ խոս-
տովանել: Բայց գէ էլի մտածում էր, ինչու այս
մթնում նա գայ, այս ժամին այս խաղաղութեան
մէջ նրան բռնի. մայրը կը զարթնի և կըվախե-
նայ. կամ ինչու հայրն ամեն ինչ իմանալով նու-
աստանայ նրա առաջ. այս բաները մտածելիս նրա
զարհուրը գալիս էր: Նա շունչն իրան քաշելով

ակսեց ականջ դնել... Ոչ մի շառակ չկար, ականջը
մօտեցրեց դռանը, ամենը լուռ են, ողջ տնով
քնած են: Ուրեմն հայրը ոչինչ չէր լսել: Սկսեց
իրան հանգստացնել և գրելն առաջ տանել: Գրո-
տած հասցէները իրար գլխի կիտում էին. լսում
էր՝ թէ ինչպէս դատարկ փողոցում ծանր ու բա-
րակ անց ու դարձ էր անում գիշերապահը. ճը-
ռնչալէ դանդաղ անցնում էին սայլերը: Կրկին
խոր լոռութիւն էր տիրում. սակայն երեմն երեմն
լսում էին հեռուից շների հաչոցները: Զուլիօն
կարծես աշխարհից վերացած զլուխը քաշ գրում
էր ու զրում: Այն ինչ իւր հայրը այդ ժամանակ
կանգնած էր նրա քամակին: Նա զարթել էր վեր
ընկնող զրքի շրջխկոցից և յարմար ըոպէի սպա-
սելով մտել էր ներս: Սայլերի ճռնչոցի տակ նրա
քայլերի ձայնը և դռան թեթև ճռոցը չէին լը-
սուել: Իւր ալեոր զլուխը թեքելով Զուլիօյի
ծոծրակնի վեր, դիտում էր թէ ինչ քաջութեամբ
որդու զրիչը սահում էր թղթի վրայ: Մի վայր-
կեանում ամեն ինչ հասկացել էր հայրը և բոլոր
իւր արածները մտաբերել... Մի անհուն զղում
և մի անսահման սէր պաշարել էին նրա սիրար.
կանգնած էր տեղն ու տեղը կարծես մեխուած,
կոկորդը ճնշում, շունչը կտրւում էր: Զուլիօն
յանկարծ բարձր ճիշ հանեց, երբ երկու դողդոջուն
թերենրա վզով պատ ընկան.—Ներիր, հայրիկ ջան,
ներիր, գոչեց Զուլիօն: Հայրը հեկեկալով ծած-
կում էր նրա ճակատը համբոյրներով ու ասում.

— Դու ներիր ինձ, իմ պատուական զաւակ: Այժմ
ես բոլորը հասկացայ, ամեն ինչ գիտեմ: Արի, Ես
պէտք է քեզանից ներողութիւն խնդրեմ, այ, իմ
ամենասիրելի որդի: Արի գնանք միասին:

Եւ նա բոնեց որդու ձեռից, տարաւ կնոջ
մօտ, որ նոյնպէս զարթել էր.—Գրկիր, համբու-
րիր սրան... այ կին: Սա մեր հրեշտակն է, երեք
ամբողջ ամիս անընաւ գիշերներ անցկացնելով
աշխատել. է իմ փոխորէն և մեզ համար հաց
վաստակել, իսկ ես նրա սիրու միայն վիրաւորել,
վշտացրել եմ:

Մայրը սեղմելով որդուն պահում էր կրծքի
վրայ առանց խօսել կարողանալու. յուզմունքը
չէր թողում. վերջը համբուրեց ու ասեց. — Իմ
անուշ զտւակ, գնա քնի՛, գնա հանգստացիր:
Այ մարդ, տար նրան, քնացրու:

Հայրը թերի վրայ տարաւ նրան, շորահան
անելով պարկեցրեց, բարձր ուղեց, վերմակը
ծածկեց վրէն:—Շնորհակալ եմ, հայրիկ, շատ լաւ
է, շնորհակալ եմ, մրմնջում էր պատանին, շնոր-
հակալ եմ... դու էլ գնա քնիր. ես միանգամայն
երջանիկ եմ. գնա դու էլ քնիր, հայրիկ:

Սակայն հայրը փափագում էր տեսնել թէ
ինչպէս է քնում որդին, նստեց նրա անկողնի
մօտ և ձեռը բոնեց.—Քնիր, քնիր, քաղցր զա-
ւակ, քնիր, իմ աչքի լոյս:

Զուլիօն յոգնած էր, շուտ քնի ծոցն ընկաւ
և չորս ամսուայ ընթացքում այդ առաջին ան-

գամն էր, որ ամուր քնում էր և քաղցր, ուրախ երազներ տեսնում։ Հետեւեալ առաւօտ երբ աշ-քերը բաց արեց, արեւ վաղուց ծագել էր, զգաց ու տեսաւ, որ հայրը ալեոր գլուխը բարձին դէմ տուած քնած էր։ Աղջ գիշերը անց էր կացրել խեղճը ճակատով որդու սրտին յենուած և դեռ չէր զարթել։

ՓՈՔՐԻԿ ԹՄԲԿԱՀԱՐԸ.

1848 թ. յուլիսի 24-ին, կուստոցայի մօտ պատահած կրուի առաջին օրը իտալական հետեւեկ գօրքից բաժանուեց 60 հոգուց բաղկացած մի վաշտ, որ գնայ բլրի վրայ եղած տունը գըրաւի։ Ճանապարհին յանկարծ նրանց վրա յարձակուեցին աւստրիական երկու գօրաքաժիններ, զանազան կողմերից այնպէս ուժդղին հրացանաձգութիւն բաց արին, որ իտալացիք դաշտի վրայ թողնելով մի քանի սպանուածներ և վիրաւորներ, հաղիւ ժամանակ գտան փախչելով այդ տան ներսում պատապարուել, դոները ամրապլնդելուց ետ զինուորները կատաղած բռնեցին ներքեի և առաջին յարկի լուսամուտները ու սկսան այնտեղից սաստիկ կրակ բաց անել յարձակւողների վրայ, որոնք կիսաշրջան կազմած նրանց կրակին պատասխանելով քայլ առ քայլ մօտենում էին։ Իտալական վաշտի հրամայողներն էին երկու ենթասպաներ և մէկ բարձրահասակ խստապահանջ գնդապետ ալեոր բեղերով։ Նրանց

մէջ գտնւում էր նոյնպէս մի սարդինացի փոքր թմբկահար տղայ, թուխ դէմքով, երկու խոր, սաթի պէս պսպղուն աչքերով։ տասնչորս տարեկանից ըիշ աւելի կը լինէր, բայց հազիւ տասներկու էր երեսում։ Գնդապետն առաջին յարկի պատուհանից կարգադրութիւններ էրանում պաշտպանուելու համար։ Նրա հրամաններն այնպէս կարձ ու կտրուկ էին հնչւում, ինչպէս ատրճանակի տըաքոցներ։ Նրա երկաթէ դէմքի վրայ ամենեին շփոթութեան նշան չէր նկատում։ Թըմբկահարի գոյնը թէկ ըիշ թուած էր, բայց քաջ ոտներով բարձրացաւ մի սեղանի վրայ, պատին դէմ ընկնելով վիզը մեկնեց լուսամուտից, որ տեսնի դուրս ինչ կայ։ Նա ծխի միջով նկատեց դաշտերի վրայ աւստրիացոց ճերմակ համազգեստներ։ Նրանք կամաց կամաց առաջ էին շարժւում։ Տունը գտնւում էր մի սեպացած բլրի վրայ, զառիվայրի կողմից միայն մի լուսամուտ կար ձեղնայարկին պատկանող, այդ կողմից թշնամիք տանը վնասել չէին կարող, կրակի առաջ բաց էին միայն տան ճակատը և կողքի երկու պատերը։

Սակայն հրացանաձգութիւնը մի դժողք էր ներկայացնում, գնդակները կարկափ պէս տեղաւով՝ դրսի պատի ծեփերը պոկուաում, կրամիտները փշտում, ներսում ծածկոցները, կարասիքը, գոները, պատուհանի փեղկերը ջարդուաում. փայտի ծլէպները, սրուածքի թոզն ու փոշին, ամանեղէնների և ապակինների կտորտանքը օդում դէս

դէն էին թռչկոտում։ Ամեն ինչ ճրթում, կոտըրում գետին էր փուլում խլացուցիչ դղբղոցով։ Հուսամուտից դէպի դուրս կրակ բաց անող զինուորներից մէկը կամ միւսը, մէկ էլ տեսար, փըռուեց գետնին։ Այդպիսիներին մի կողմի վրայ էին քաշում։ Միւսները ստացած վէրքը ձեռներով սղմած մի սենեակից միւսն էին վագում։ Խոհանոցում մէկն արդէն ընկած էր ջարգուփշուր եղած գլխով։ Թշնամիների կիսաշրջանը հետզհետէ մօտենում էր և նեղ լծում պաշարուածներին։ Գնդապետը, որ մինչև այդ բոպէն անտարբեր էր, անհանգստութիւն ցոյց տուեց և շտապ քայլերով սենեակից դուրս եկաւ։ Մի յիսնապետ հետենց նրան։ Երեք բոպէից ետ վագէվազ վերադարձաւ, նշան արեց փոքր թմբկահարին, որ իւր ետնից գնայ։ Տղէն գնաց, փայտէ սանդուխով մտաւ նրա հետ ձեղնայարկի դատարկ սենեակը, այնտեղ տեսաւ գնդապետին պատուհանին զիմշար տուած՝ թղթի կտորի վրայ մատիտով բան է գրում։ Նրա ոտների մօտ գետնի վրայ ջրհորի թոկ էր ընկած։ Գնդապետը, որի մոխրագոյն սառաջքերից բոլոր զինուորների դողը բոնում էր, թուղթը ծալելով շեշտակի նայեց տղի վրայ ու ասեց։ — Թմբկահար։ Թմբկահար ձեռլմուեցը գըլխարկին։ Գնդապետը հարցը եց։ — Միրտ ունես թէ չէ։

Այս խօսքի վրայ տղայի աշքերը կայծակին տոււին։ — Այսունեմ, պարոն գնդապետ, պատասխանեց տղէն։ — Դէ, նայիր ներքե, խօսեց գնդապետն ու

գուսամուտին մօտեցրեց։ տեսնժւմ ես այստեղ հովտում վկլաֆրանկի մօտ սուխններ են պսպղում, այդ մերնք են անգործ կանգնած։ Վեցը բու այս տոմսակը, պինդքոնիր թոկը, իջիր փոքր լուսամուտից դէպի զառիվայրը, ընկիր դաշտը ու փախիր, հասիր մեր զինուորներին, տոմսակը տնւր առաջին պատահած սպային։ Դէ, դէն գցիր գոտիդ և զիդ մաղալը։

Փոքրիկ թմբկահարն իսկոյն մի կողմ դրեց գոտին ու մաղալը և տոմսակը կոխեց ծոցի գլրպանը։ Յիսնապետը թոկի մի ծայրը երկու ձեռով ամուր բռնեց։ Գնդապետը օգնեց տղային, որ լուսամուտը բարձրանայ մէջքը դէպի հովիտը դարձրած և ասեց։ — Տէս, մտածիր, այս անջատուած վաշտի փըկութիւնը կախուած է քու քաջութիւնից և քու ոտների զօրութիւնից։ — Վատահութիւն ունեցէք ինձ վրայ, պարոն գնդապետ, պատասխանեց տղէն դուրս պըճնելով։ — Ներքե գնալիս մէջքդ կոսցրու, պատուիրեց գնդապետը ու յիսնապետի հետ թոկը ամուր պահեց։ Միամիտ կացէք։ — Աստուած լինի քու օգնականը։

Մի քանի վայրկեանից ետ տղէն արդէն գետնին էր հասել։ Յիսնապետը վերև քաշեց թոկը ու անհետացաւ։ Գնդապետը գլուխը լուսամուտից հանելով անհամբեր նայում էր տղայի ետնից, որ քամի առածի ալէս զիսավէր փախչում էր։ Միամտուել էր արդէն, որ տղէն առանց նկատելու հեռանում էր, յանկարծ տղի ետնից ու առջևից հինգ

թէ վեց փոշու ամպեր բարձրացան գետնի վրայ։
Հասկացաւ որ թշնամիները նրան նկատել են ու
բլրի գլխից նրա վրայ գնդակներ են արձակում։
Փոշու փոքր ամպերը գոյանում էին գնդակների
պոկած հողի կտորներից։ Բայց թմբկահարը չէր
կանգնում. փախչելը շարունակում էր, ինչքան
ոտներում ուժ կար։ Յանկարծ փոռուեց գետ-
նին։ Գնդապետը սղմած կռուփը կծեց ու կարե-
վէր հառաչեց։ — Ուհ, սպանուեց տղէն։ Բայց այս
խօսքը դեռ բերանումն էր, երբ տեսաւ որ տղէն
կրկին ոտի կանգնեց։ — Ախ, միայն վէր է ընկել,
ասեց ինքն իրան ու ազատ շունչ քաշեց։ Ու-
ղիղ որ, թմբկահարը նորից սկսեց վաղել, որքան
ուժ ունէր, միայն այս անգամ կաղի տալով։ —
Հա, երեկ ոտը ճում է անցել, մտածեց գնդա-
պետը։

Ելի մի քանի փոշու ամպեր բարձրացան
այստեղ, այնտեղ, աղի չորս կողմը, բայց նա ա-
ռանց կանգ առնելու փախչում էր։ Այս անգամ
էլ ազատուեց։ Գնդապետը ցնծութեան աղաղակ-
ներ հանեց բերանից. սակայն շարունակեց ահը
սրտում նրան աչքերով հետեւել. ամեն ինչ կա-
խուած էր մի քանի վայրկեանից. եթէ տղէն հնար
եղածի չափ շուտով ներքեւ չը հասնէր և տոմ-
սակով պահանջած օգնութիւնը չբերէր, այն ժա-
մանակ կամ պէտք է իւր բոլոր զինուորները կո-
տորուեին կամ ինքը պէտք է նրանց հետ անձնա-
տուր լինէր։ Տղէն քիչ տեղ խիստ արագ էր վա-

գում, յետոյ վազքը դանդաղեցնում էր, մէկ էլ
նորից քայլելով արագացնում. շատ անգամ կիսկլի
էր տալիս, գայթում ու կանգ առնում։ — Ո՞վ գի-
տէ, վիրաւորուել է, մտածեց գնդապետը առանց
աչքը նրանից հեռացնելու։ Ցնցւում էր նրա շար-
ժումներին հետեւելով, կանգնած տեղից նրան խը-
րախուսում էր, կարծելով թէ նա կարող էր իւր
ձայնը լսել։ Անհամբերութիւնից կրակ դառած,
հայեացքով չափում էր այն տարածութիւնը, որ
վազող տղի ու ներքեւ հովտի վրայ արեկից սոսող
արտերի կողքին պսպղող սուխնների մէջ տեղը
կար։ Այդ վայրկեանին նրա ականջովն ընկաւ գըն-
դակների վժժոցն ու ճարճատոցը ստորին սենեակ-
ներում։ Սպաներն ու յիսնապետները հրամայում,
կատաղի գոչում էին, վիրաւորները բարձր հեծ-
կլատում էին, կարասիները, պատի ծեփերը ճրթում,
թիկում էին։ Գնդապետը հեռացած թմբկահարին
աչքով հետեւելով աղաղակում էր. — վեր կաց, քաջ
եղիր, գէ առաջ վազիր։ Կանգնում է, վայ անի-
ծուես դռւ։ Զէ, նա էլի վազում է։

Մի սպայ շնչասպառ եկաւ յայտնելու, որ
թշնամիքն առանց կրակը գաղրեցնելու սպիտակ
թշկինակ են ծածանում, արդեօք անձնատնւը
ենք լինում թէ չէ։ — Միք պատասխանիլ նրանց,
գոռաց գնդապետը առանց աչքը տղից կտրելու,
որ արդէն հովտումն էր, բայց էլ չէր վազում.
գժուարութեամբ էր կարողանում իրան քաշ տալ։
— Դէ գնա է, գէ վազիր է, գոչում էր գնդա-

պետն ատամները կրծտելով և կռուփները կծկելով, — մեռիր, փուչ անպիտան, միայն վազիր:

Սկսեց սարսափելի անէծք թափել բերանից. — այ դու գարշելի արարած, տես նստել է, հանգստանալ է ուզում:

Յիրաւի տղի գլուխը, որ քիչ առաջ ցորենի արտի մէջ երեւում էր շարժուելիս, այժմ չկար, անյայտացել էր, կարծես ընկած լինէր: Բայց մի վայրկեանից նրա գլուխը կրկին երեաց ու դնալով բոլորովին կորաւ արտերի ցանկի ետև: Գընդապետի աչքն այլ ևս նրան չտեսաւ... այդտեղ չմնաց, արագ վազեց ներքև, գնդակները աջ ու ձախ վժժում էին, սենեակները լիքն էին վիրաւորներով, նրանցից մի քանիսը դէս ու դէն թաւալում էին հարբածների պէս և կարասիներին ձեռները պարզելով չանգոտում: Պատերն ու յատակ արիւնաշաղախ էին, դիակները կիտուած էին դւների առաջ. մի գնդակ փշրել էր սպայի աջ բազուկը: Ծուխն ու փոշու ամմը ամեն կողմ բռնել էին: — Մի վախիլ, քաջ կացէք, աղաղակում էր գնդապետը, որտեղ որ է, շուտով օգնութիւնը կըգայ, քիչ էլ դիմացէք: — Աւստրիացիք բոլորովին մօտեցել էին, ծիփ մէջ ներքև նրանց դէմքերն արդէն երեւում էին. հրացանների տրաքոցների մէջ պարզ լսելի էին նրանց զոռում-դուշիւնները, պահանջում էին՝ անձնատուր եղէք, թէ չէ բոլորիդ կոտորում ենք:

Սարսափահար եղած զինուորներից մի քա-

նիսը ետ էին քաշւում լուսամուտից, յիսնապէտը քշում էր նրանց առաջ: Բայց պաշտպանւողների կրակը քանի զնում թուլանում էր. վհատութիւնն ամենին պատել էր. երկար դիմադրելու էլ ոչ հսար կար, ոչ ուժ: Մի վայրկեան թշնամիները հրացանաձգութիւնը մեղմացրին. մի որոտագին ձայն գոչեց: — Անձնատուր եղէք: — Ո՛չ, չենք լինիլ, մոընչաց գնդապետը մի պատուհանից: Իսկոյն և եթ երկու կողմից կրակելը կատաղի ուժով նորից սկսուեց: Իտալացիք մէկը միւսի ետեկից ընկնում էին: Արդէն շատ լուսամուտներ մնացին առանց պաշտպանողների: Օրհասական վայրկեանը մօտենում էր: Գնդապետը գոչեց զսպուած ձայնով. — Նրանք չեկան, ախ, Աստուած, ի՞նչ եղան, որ չեն գալիս:

Մեռնելը մտքում որոշած մոլեգնաբար առաջ ընկաւ գնդապետը թուրը գողացող ձեռքում ճօճելով: Յիմնապետը ձեղնայարկից ներքև վազելով բարձրուծայն կանչեց: — Գալիս են, մերոնք գալիս են: — Վերջապէս գալիս են, ոհ, փառք Աստծու, խօսեց գնդապետը ցնծագին: Այս լուրի վրայ առողջ, վիրաւոր, յիմնապետ, սպահներ — ամենը վրայ վազեցին լուսամուտներին և կատաղի ընդգիմադրութիւն ցոյց տուին այս անգամ: Մի քանի բոպէից ետ ինչ որ երկչութիւն և շփոթութեան նշան երեաց թշնամիների մէջ: Կայծակի արագութեամբ գնդապետը մի բուռ զինուորներին ժողովեց ստորին յարկի սե-

նեակը, որ դուրս գան սուխններով յարձակուելու¹
աւստրիացոց վրայ։ Ապա կրկին վերև վազեց։
Հէնց նա գնացած, լսելի եղաւ ձիաների շտառ
ստնապրոփ, հետն էլ բարձրագոչ ուռուա՛։ Լու-
սամուտների միջով երեսում էին իտալական երկ-
ճըղանի գլխարկները։ Ծխի միջով առաջ էր գա-
լիս հեծելագունդը արշաւասոյր, օդի մէջ փայլում
էին բաց թրերը հարուածներ տեղալով աւստրի-
ացոց գլխներին, սւսերին և թիկունքներին։ Պա-
շարուած փոքրաթիւ զինուորներն էլ չհամբերե-
ցին, սուխները մեկնած տանից դուրս թռան։
Թշնամին տատանուեց, շփոթութիւնից իրար գըլ-
խով անցաւ ու փախուստ տուեց։ Կոռու տեղը—
այսինքն տունը մի քանի ըոպէի մէջ ազատուեց
պաշարումից։ Իտալական երկու հետեւակ վաշտ
երկու թշնամոթով գրաւեցին բլուրը։

Գնդապետն իւր մնացած զինուորների հետ
միացել էր եկող գնդին ու կոփւր շարունակել։
Վերջին սուխնամարտի միջոցին գնդակով թեթև
վիրաւորուեց ձտի թեկից։ Օըը մթնեց իտալացոց
յաղթանակ բերելով։ Բայց հետեւալ օրը, երբ
պատերազմը նորից սկսուեց, իտալացիք չընա-
յած իրանց հերոսական ընդդիմադրութեան,
յաղթուեցին անհամար թշնամուց։ ուստի յու-
լիսի 26-ի առաւօտը հարկադրուած էին տիսուր
սրտով ետ դառնալ դէպի Մինչիօ դետը։

Գնդապետը թէկ վիրաւորուած էր. բայց
ստով ուղեկորուեց իւր յոգնած ու լուռ զինուոր-

ների հետ, արել մտնելիս հասաւ Գօխտօ, որ Մին-
չիօյի վրայ էր. անյապաղ վինտուր սը-
պային, որ շարժական հիւանդանոցի հետ իրա-
նից առաջ այնաեղ պէտք է եղած լինէր։ Նրան մատ-
նացոյց արին մի եկեղեցի, որ շտապով դարձել
էին զինուորական հիւանդանոց։ Գնաց այս կող-
մը, տեսաւ եկեղեցին լիք վիրաւորներով, որոնք
երկու շարք մահճակալների և միւսներն էլ յա-
տակին փուած դոշակների վրայ պարկած էին։ Եր-
կու բժիշկ և մի քանի սպասաւորներ շտապ շտապ
պտտում էին հիւանդների գլխավերեններով, ուր
լսելի էին սրտաճմիկ ազաղակներ ու հեծկտանք-
ներ։ Գնդապետը ներս մտնելով հանդարտ կանդ-
նեց, աչքը պտտեցրեց չորս կողմը, որ իւր սը-
պային գանի։ Այդ վայրկեանին լսեց մի նուազ
ձայն, որ իրան մօտիկից կանչում էր.—Պարոն
գնդապետ։

Նա շուռ եկաւ ու առաջը տեսաւ—մւմ,
մեր փոքրիկ թմբկահարին. պարկած մի գէշ ան-
կողնի վրայ, մինչեւ կուրծքը ծածկուած կար-
միր ու սիստակ, ցանցածէ, կոպիտ վարագոյրով
երեսի գոյնը թռած, նիհարած։ միայն աչքե-
ը գեն պսպղում էին ինչպէս երկու աղամանդ-
ներ։—Այս գոն ես, հարցրեց նրան զարմացած
գնդապետը կոշտ ձայնով։ Կեցցես, դու քու պարտ-
քը կատարեցիր։—Արել եմ այն, ինչ որ կարող
էի, պատասխանեց թմբկահարը։—Միթէ վիրա-
ւոր ես, հարցրեց գնդապետը և աչքերով մօ-

տիկ մահճակաների վրայ վիճառեց իւր սպային:— Ինչու համար էք հարցնում, խօսեց տղէն հպարտանալով կեանքում առաջին անդամ վիրաւորուելով, թէ չէ ինչ սիրտ կանէք գնդապետի առաջըերան բանալ:— Ինչքան ոտներումս ոյժ կար, վազում էի. մէջքս էլ կռացրի, դարձեալ նրանք ինձ նկատեցին: Քսան ըոպէ վաղ տեղ հասած կըլինէի, եթէ նրանք ինձ հանդիպած չըլինէին: Իմ բախտից իսկոյն մի սպայ գտայ և տոմսակը յանձնեցի: Շատ վատ զառիվայր էր, ծարաւից մեռնում էի, վախենում էի տեղ չըհամնեմ, սրտիս հերսից լաց էի լինում, երբ մտածում էի, որ ամեն մի ուշացած ըոպէն վերեռում մէկին դէպի միւս կեանքըն է ուղարկում: Էլ ինչ երկարացնեմ, արել եմ այն, ինչ որ կարող էի: Ես գոհ ու երջանիկ եմ. բայց ներողութիւն, պարոն գնդապետ, նայեցէք ձեր վրայ, արիւնը հոսում է:

Յիրաւի, գնդապետի ձեռը վատ էր փաթաթած, ուստի արիւնը կաթիլ-կաթիլ հոսում էր մատներով ցած:— Կամենա՞ք, ես ձեր փաթաթանը փոքր ինչ ամրացնեմ, պարոն գնդապետ: Մի ըոպէ մեկնեցէք ձեր թեր դէպի ինձ:

Գնդապետը ձախ թեր մեկնեց դէպի նա, և ձեռը բարձր բոնեց տղին օգնելու համար, որ կշկուն արձակի ու նորից կապ տայ, բայց տղէն հազիւ զլուխը բարձից վեր քաշած, գունաթափեց. ստիպուած էր զլուխը դարձեալ քաշգել:— Հարկաւոր չէ, թող, այդպէս էլ լաւ է,

խօսեց գնդապետը տեսնելով նրա դրութիւնը և թեր ետ քաշեց.— ուրիշի վրայ հոգս քաշելու փոխարէն դու քու վէրքին ուշ դարձրու, թեթև վէրքերն էլ, երբ անխնամ են մնում, կարող են վըտանգաւոր գառնալ:

Փոքր թմբկահարը զլուխը շարժեց, իբր թէ վնասչունի: Գնդապետը նրան ուշադրութեամբ նայելով ասեց.— Ուղիղ ասա, երկի գու շատ արիւն ես կորցրել, որ այսպէս թոյլ ես երեսում:— Ասում էք, շատ արիւն եմ կորցրել, պատասխանեց տղէն ժպտալով, ուր էր թէ մենակ արիւն կորցրած լինէի: Հապա տեսէք:

Այս ասելիս վերմակն արագ դէն քաշեց: Գնդապետն աչքի տեսածից զարհուրելով մի քայլ ետ զնաց: Տղէն մի ոտնանի էր. ձախ ոտը ծընկեց վերև կտրուած էր և արիւնաշաղախ փալաներով կտրած տեղը փաթաթած:

Այդ վայրկեանին մօտ եկաւ մի փոքր, չաղլիկ բժիշկ առանց սերթուկի:— Այս, պարոն զընդդապետ, ասեց նա թմբկահարի վրայ արագ մատնացոյց անելով, սա մի ձախորդ պէտք է, շատ կարելի էր ոտն ազատել, եթէ նա չափից դուքս ջարդած չլինէր. անիծուած բորբոքումն է առաջ եկել. անպատճառ հարկաւոր էր կտրել հեռացնել: Բայց օ, ինչ քաջասիրտ տղայ է, էլ լեզուով տաել չի լինիլ: Ոտը կտրելիս ոչ մի հատիկ արտասուք թափեց և ոչ մի հառաջ բերանից հանեց: Սրտումս հպարտանում էի, որ իտալիան

այսպիսի տղաներ ունի. պատուաւոր խօսք եմ
ասում, գովասանքի արժանի տղայ է:


Ասեց բժիշկն ու գնաց միւս կողմը, գնդա-
պետը խոշոր ալեռ յոնքերը կիտելով, վերմակը
քաշեց նորից ծածկեց ուսը, ապուշ կտրուած նա-
յեց նրա վրայ, երկար դիտեց ու վերջը ինքն էլ
չիմացաւ, թէ ինչպէս ձեռը բարձրացաւ դէպի
վեր, գլխարկը վերցրեց ու զլուխ տուեց:

—Պարոն գնդապետ, գոչեց տղէն զարմացած,
ի՞նչ էք անում, այն էլ իմ նմանի առաջ: —Ես
սոսկ մի գնդապետ եմ, իսկ դու մի հերոս ես, անա-
սելի սիրալիր ու անուշ կերպով պատասխանեց այն
խիստ զինուորականը, որ երբէք մի հատիկ քաղցր
խօսք ասած չունէր իւր ստորադրեալներին: Յետոյ
թևատարած ընկաւ փոքր թմբկահարի վրայ ու
երեք անդամ սրտանց համբուրեց նրան:

ՀԻՒԱՆԴԱՊԱՀ ՏՂԵՆ.

Մարտ ամսի մի անձրևային օր էր. դիւղի
հանգը հագած մի տղայ, անձրեից մինչև ոսկորը
թրջուած ու ցեխոտուած, մի շորի կապոց կոնատա-
կին մօտեցաւ նէապոլի մեծ հիւանդանոցի դրո-
նապանին, մի նամակ ցոյց տալով հարցրեց իւր
հօր մասին: Նա ունէր կլոր, թուխ գունատ
գէմք, մտահոգ աչքեր, ջուխտակ լիք կիսաբաց
շրթունքներ, որոնց տակից ատամները ձիւնի պէս
փայլում էին: Նա եկել էր նէապոլի շրջակայ
գիւղից: Հայրը մի տարի առաջ տունը թողել էր

Ֆրանսիա աշխատանքի գնալու, վերադարձել էր
իտալիա և միքանի օր առաջ նէապոլ համաելով



յանկարծ տկարացել էր. հազլւ հնար էր ունեցել
երկու տող բան գրել ընտանիքին իւր վերադար-

ձի մասին և հաղորդել, որ ինքը ստիպուած է հիւանդանոց մանել։ Նրա կինը խոր խոցուելով այդ լուրով և հնար չունենալով տնից հեռանալ, որովհետեւ բացի ծծի երեխայից այլև մի հիւանդ աղջիկ ունէր, աւագ որդուն մի քանի սոլդի տալով ուղարկեց նէապօլ, որ իւր հօրը ինհամի։ Տղէն տաս մղոն ճանապարհ էր եկել։ Դոնապանը նամակին աչք զցելով կանչեց հիւանդապահներից մէկին և ասեց. — այս տղին տար հօր մօտ։ Ի՞նչպէս է կոչւում հայրդ, հարցրեց հիւանդապահը։ Տղէն վախենալով՝ չլինի թէ տիուր պատասխան ստանայ, դողալով արտասանեց իւր հօր անունը։ Հիւանդապահն այդպիսի անուն չյիշեց. — Երկի դրսից եկած մի ծեր բանուոր է, չէ, հարցրեց նա։ — Այն, բանուոր է, ան ու դողով պատասխանեց տղէն, բայց այնքան էլ ծեր չէ, միայն դրսից է եկած։ — Ե՞րբ է հիւանդանոց մտել, հարցրեց հիւանդապահը։ Տղէն նայեց նամակին ու պատասխանեց. — Կարծում եմ կինդ օր առաջ։ Հիւանդապահը մի քիչ մտածեց, յետոյ յանկաղծ մտաքերելով ասեց. — Այն, այն, չորրորդ ուրահում վերջին մահճական է։ — Միթէ ծանր հիւանդ է, ի՞նչպէս է նրա առողջութիւնը, հարցրեց տղէն սրտադող։ Հիւանդապահը պատասխանելու փոխարէն նրան ուշի ուշով դիտեց և ասեց. — ԱՌի ինձ հետ։

Նրանք սանդուխը բարձրացան, անցան մի լայն նրբացքով և կանդնեցին մի սրահի մուտքի ա-

ռաջ, ուր մահճակաները երկու շարք տարածւուած էին։ Հիւանդապահը ներս մտաւ ու ասեց. — Արի։ Տղէն սրտապնդուած հետեւեց նրան, աջ ու ձախ տեսնելով դալկահար, տանջուած դէմքեր, մի քանիսը փակ աչքերով պարկած էին մեռելի պէս, մի քանիսն ընդհակառակ նայում էին դատարկ օդի մէջ կարծես սարսափահարներ։ Սենեակը մութ էր, օդը գեղերի հոտով ծանրացած։ Երկու զթած քոյրեր ման ու ման էին անում սրուակները ձեռներին։ Սենեակների վերջը համնելով հիւանդապահը լուռ կանգնեց մի մահճակալի գլխի վերկը, վարագոյրը ետ քաշեց և ասեց. — այսաեղ է քո հայրը։

Տղի աչքերն արտասունքով լցուեցին. կապոցը կուան տակից ընկաւ, գլուխը թեքեց հիւանդի ուսին և ձեռով բռնեց վերմակի վրայ անշարժ մեկնած թեր։ Հիւանդը չշարժուեց։

Տղէն ուղղուեց, հօրը ուշադրութեամբ դիտեց ու սկսեց նորից լաց լինել։ Այդ միջոցին հիւանդը աչքը զցեց նրա վրայ, կասես ճանաչելիս լինէր, բայց շրթունքները չէին շարժուած։ Խեղճ հայր, ինչքան փոխուել էր։ Որդին ամենկին չէր կարող ճանաչել. մազերը սպիտակել էին, միրուքը չափից դուրս աճել, դէմքն ուռել, ձըգուած, խանձուած կաշին բոլորովին կարմրել։ Աչքերը մանրացել էին, շրթունքները կախ ընկել, երեսհարքը բոլորովին փոխուել։ Նման մնացել էին ճակատն ու յոնքերը. նա հազիւ էր չնչում։

— Հայր, իմ հայր, կանչեց տղէն։ Ես եմ, չես-
ճանաչում ինձ, ես Զեջիլիօն եմ, քու Զեջիլիօն,
զիւղից այստեղ եղած, մայրիկն է սւղարկել։ Ինձ
մտիկ, հայրիկ, միթէ ինձ չես ճանաչում։ Մի
խօսք ասա գոնէ։

Հիւանդը նրան ուշադրութեամբ դիտելուց ես-
աչքերը փակեց։ — Հայր, ախ հայր, ինչ ես ա-
նում, ես քու որդի Զեջիլիօն եմ։

Հիւանդն էլ ոչ մի շարժում չարեց, շարու-
նակեց ծանր շունչքաշել։ Տղէն լաց լինելով վեր-
ցրեց մի աթոռ, նստեց ու սպասեց առանց աշ-
քը հօր դէմքից հեռացնելու։ — Երբ այցելելու
ժամը համի, բժիշկը կրգայ այս կողմը, նա ինձ
տեղեկութիւն կրտայ հօրս դրութեան մասին։

Ասեց տղէն ու ընկաւ տխուր մտածմունք-
ների մէջ։ Իւր բարի հօր մասին շատ բան յի-
շեց, նրա ուղևորուելու օրը, երբ նաւի առաջա-
մասում վերջին մնաս բարովն էր ասել. այն յոյ-
սը, որ ողջ գերդաստանը այս ուղենորութեան վրայ
դրել էր, իւր մօր յուսահատ վիճակը հիւանդու-
թեան լուրն առնելիս։ Մահն անդամ պատկերա-
նում էր իւր աչքի առաջ, տեսնում էր իւր մօ-
րը սև շորերով, ընտանիքը թշուառ դրութեան
մէջ։ Նա այդպէս երկար նստած էր. Յանկարծ մի
թեթև ձեռ դիպաւ նրա ուսին։ Ցնցումից վեր
թուաւ, տեսաւ իւր կշտին մի կոյս կանգնած։ —
Ի՞նչ է պատահել իմ հօրը, հարցըց նրան ան-
համբեր։ — Դա քո հայրն է, հարցըց դիթած քոյ-

րը անուշ ձայնով։ — Այն, մայրս ուղարկեց ինձ
նրա մօտ։ Ի՞նչ է պատահել նրան։ — Քաջ կաց,
տղայ, որտեղ որ է, բժիշկը շուտով կը գայ, պա-
տասխանեց գթած քոյրը և հեռացաւ առանց ու-
րիշ բան ասելու։ Կէս ժամից ետ զանգակի ձայն
լսեց և տեսաւ բժշկին օգնականի հետ սենեակ
մտնելիս։ Կոյսն ու հիւանդապահը գալիս էին նր-
արա ետևից։ Նրանք սկսան ամեն մէկին ակը տալ,
ամեն մի մահճակալի մօտ կանգ առնել։ Այդ փոքր
սպասելը տղին թուաց հազար տարու չափ եր-
կար։ Բժիշկն ամեն անգամ ոտ փոխելիս նրա
երկիւղը շատացնում էր։ Վերջապէս եկաւ կող-
քի մահճակալի մօտ։ Բժիշկը մի խոշոր, կրոաքա-
մակ, լրջագէմ ծերունի էր։ Դեռ նա կողքի մահճ-
ակալի մօտ էր, տղէն վեր կացաւ ու սկսեց լաց լի-
նել։ Բժիշկը մօտեցաւ և մտիկ արեց նրան։ — Սա
հիւանդի տղէն է, այս առաւօտ է եկել զիւղից.
ասեց գթած քոյրը։ Բժիշկը ձեռը դրեց նրա ու-
սին, յետոյ կուացաւ դէպի հիւանդը. բռնեց բազ-
կերակը, շիեց ճակատն ու մի քանի հարցմունք
արեց գթած քրոջը։ — Ոչինչ նոր բան չը կայ,
պատասխանեց նա։ Բժիշկը քիչ մտահոգ կացաւ
ու ասեց. — Դէ շարունակիր, ինչպէս մինչև այժմ
արել ես։

Դրա վրայ վստահութիւն առաւ տղէն և լա-
լազին ձայնով ասեց. — Ի՞նչու է հիւանդ իմ հայ-
րը։ — Սիրտդ մի կոտրիլ, իմ սիրելիս, պատաս-
խանեց բժիշկը կրկին ձեռը ուսին դնելով, նա

կարմիր քամի ունի, վտանգաւոր հիւանդութիւն է, բայց դեռ յոյս կայ առողջանալու: Մօտը կաց, խնամիր, քուներկայութիւնը նրա վրայ լաւ կազդի: — Բայց ի՞նչպէս խնամեմ, երբ նա ինձ չի ճանաշում, գոչեց տղին յուսահատ ձայնով: — Միամիտ կաց, կը ճանաշի... գուցէ առաւօտը, յոյսդ մի կարիլ. քաջ կաց:

Տղին փափագում էր աւելի հարցնել, բայց չը համարձակուեց: Բժիշկը դուրս գնաց: Տղին սկսեց իւր պաշտօնը իբրև հիւանդապահ. սկզբում աւելի բան չգիտէր, ուղղում էր հիւանդի վերմակը, ձեռը շարունակ բռնած պահում էր, ճանձերը քշում էր, ամեն մի տնքոց լսելիս վրին կուանում էր, երր զթած քոյրը խմելու բան էր բերում, առնում էր բաժակը կամ գգալը նրա ձեռից և նրա տեղ հիւանդին խմացնում: Հիւանդը նրան մի քանի անգամ երկար դիմեց, բայց ոչ մի նշանով չարտայացտեց թէ նրան ճանաշում է: Մի բան նրան մխիթարում էր. հիւանդն օրի վրայ աւելի երկար էր նայում տղի երեսին, երբ նա թաշկինակով աչքերը սրբում էր:

Առաջին օրն այսպէս անցաւ: Գիշեր ժամանակ տղին քնեց երկու աթոռի վրայ սենեակի անկիւնում և առաւօտն սկսեց դարձեալ իւր սիրալիր գործունէութիւնը: Այսօր նրան թւում էր, թէ հօր աչքերի մէջ գիտակցութիւն է եկել: Տղին գգուանքով ձայն տալիս, կասես հիւանդի աչքերի մէջ շնորհակալութեան անորոշ արտա-

յայտութիւն էր երկում. մի անգամ էլ շրթունքները շարժեց, կարծես ուզում էր բան ասել: Իւրաքանչիւր կարճատես նիրհից ետ թւում էր թէ փոքր հիւանդապահին նա փնտուում է: Բժիշկը երկու անգամ մօտից անցնելով նկատել էր փոքր փոփոխութիւն դէպի լաւը: Իրիկնագիմին երբ տըղէն հիւանդի բերանին բաժակը մօտեցրեց, նըշմարեց ուռած շրթունքների վրայ մի թեթև ժըպիտ խաղալիս: Այժմ աւելի սիրտ առաւ և յոյաերով լցուեց: Հաւատալով որ հայրը գուցէ լըսում հասկանում է, նա սկսեց պատմել, երկար ու մէկ պատմել մայրիկի, փոքր քոյրերի մասին, տուն վերագառնալու մասին և հետո էլ խրախուսում էր նրան ջերմ և սիրալիր խօսքերով, որ քաջ լինի: Թէպէտ Զիշիլիօն վստահ չէր, որ հայրը հասկանում է, բայց և այնպէս շարունակում էր պատմել, որովհետեւ նրան թւում էր, թէկ հիւանդը իւր խօսքերի իմաստը չի հասկանում, բայց իւր կարեկցութիւնով ու անձնութիւնով լիք ձայնին իբրև անսովոր հնչիւնի ականջ էր դնում:

Այսպէս անցկացան երկրորդ, երրորդ և չորրորդ օրերը. հիւանդի դրութիւնը փոփոխակի մէկ լաւանում էր, մէկ էլ յանկարծ վատանում: Տղին այնպէս նուիրուած էր հօր խնամելուն, հազիւ օրը երկու անգամ քիչ հաց ու պանիր էր ծամում, որ զթած քոյրը նրա համար բերում էր: Նրա վիշտն այնքան ծանր էր, ամենաին

չէր նկատում, թէ իւր շուրջն ի՞նչ է կատարւում։ Հիւանդներից շատերը մեռնում էին, գիշեր ժամանակ զթած քոյրերը յանկարծ դէս ու դէն էին վազում, այցելուները դառնազին լալիս էին ու յուսակտուր դրութեամբ հեռանում։ Հիւանդանոցում մի օրուայ ընթացքում տեղի ունեցած աղեկտուր և մոայլ տեսարանները ուրիշ անգամ նըրան զարհուրի և սասանմունքի մէջ կը գցէին։ Ժամերը, օրերը պահնում էին, նա պոկ չէր գալիս հօր մօտից։ Ուշը շարունակ նրա վրէն էր։ ամեն անգամ նրա տնքոցը, հառաջանքը լսելիս գողում, ցնցւում էր, քունն ու հանդիսար կը տրած նրա երեսն էր պահում։ Հզիտէր հոգուն լսի, որ յուսով ցնծում էր, թէ սրտին, որ հոգսերով տոշորւում էր։

Հինգերորդ օրը հիւանդի դրութիւնը յանկարծ շատ վատացաւ։ Տղէն հարցըց բժշկին, սա գլուխն օրօրեց, կարծես ասելիս լինէր արդէն ամեն բան պրծուած է։ Տղէն բարձր հեկեկալով աթոռի վրայ թուլացած ընկաւ։ Ուղիղ է, հիւանդի վիճակը վատացաւ, բայց տղէն նկատում էր, որ նա կրկին կամաց կամաց ուշի է գալիս։ Նա տղի վրայ աւելի զգացուած էր նայում, աւելի քնքոյշ հայեացք անում, միայն նրա ձեռից էր խմում ջուրը կամ դեղը և շատ անգամ ուժէր գործ դնում, որ շրթունքները շարժի բերանից խօսք հանելու համար։ Եւ նա այս բանն այնքան պարզ ու որոշ արեց, որ որդին մի անա-

կընկալ յոյսից հոգի առած ուժով բռնեց նրա բազուկը և ուրախ ժպիտով ասեց։ — Քեզ հանգիստ պահիր, հայրիկ ջան, դու շուտով կառող-ջանաս, մենք միասին տուն կը գնանք, մայրիկի մօտ կըդառնանք, աղաչում եմ, հանգիստ կաց։

Մի անգամ իրիկնապահի չորս ժամն էր. տղէն այսպիսի քաղցը մտածմունքների ու ակնկալութիւնների մէջ թաղուած նստած էր, յանկարծ հարեսմ սենեակի դռան կողմից քայլերի թըմբ-թըմփոց լսեց և ապա մի մարդու բերանից երեք խօսք. — մնաս բարով, փոքրիկ։

Եյս ձայնի վրայ տղէն գոչեց ու տեղից վեր թուաւ։ Այդ վայրկեանին մի մարդ կապոցը կոնատակին զթած քըռջ հետ մտաւ այդ սենեակը։ Տղէն նրան տեսաւ թէ չէ մի սուր ճիչ արձակեց ու մնաց տեղն ու տեղը մեխուած։ Տղամարդը շուռ եկաւ նայեց ու ինքն էլ բարձրածայն գոչեց. — Զեչիլիօ, դու ես, և վազեց դէպի նա։ Տղէն թուլացած ընկաւ հօր զիրկը։ Գթած քոյրերը, հիւանդապահները, օգնական բժիշկը վազեցին այգտեղ և զարմանքից մնացին կանգնած։ Տղէն չէր կարողանում մի խօսք հանել բերանից։ Հայրն ուշագրութեամբ նայեց հիւանդի դէմքին, անթիւ անգամ համբուրեց որդու թուշերը և գոչեց. — Ա՛յս, իմ Զեչիլիօ, իմ անուշ որդի, դու ինչպէս ես եկել այստեղ։ Քեզ հիւանդապահները ուրիշ մահճակալի մօտ են տարել, իսկ ես հալու մաշ էի լինում բեզ չտեսնելու պատճառով.

մայրդ գրում էր ինձ. — Զեչիլիօյին ուղարկել եմ՝
քեզ մօտ: Իմ խեղճ տղայ, քանի՞ օր է, որ դու
այստեղ ես: Կարո՞ղ էի կարծել, որ դու ինձ փոխս
ես զցել ուրիշի հետ: Ես նոր եմ վեր կացել,
արդէն առողջ եմ, գիտե՞ս: Մայրդ ի՞նչպէս է,
ի՞նչ է անում կոնչետելլա քոյրդ: Հապա մեր
պուճուլի՞կը: Առողջ են բոլորը. փառք Աստծու,
այժմ դուրս եմ գալիս հիւանդանոցից, արի, գնանք:
Ախ, ամենակալ Աստուած, ում մտքով կանցնէր
այսպէս բան:

Տղէն հազիւ կարողացաւ մի քանի խօսք
թոթովել և տանից տեղեկութիւն տալ. — ախ,
ի՞նչ ուրախ եմ, հայրիկ: Օ՛, որ իմանաս, ի՞նչ
դժուար օրեր եմ քաշել:

Այսպէս խօսելով հօրը շարունակ համբու-
րում էր. բայց գնալու համար տեղից ամենեին չէր
շարժւում: — Դէ, արի գնանք, ասում էր հայրը,
այսօր երեկոյ կարող ենք տանը լինել, գնանք:

Եւ այս ասելով քաշում էր դէպ իրան: Տը-
ղէն շուռ եկաւ և մտիկ արեց իւր հիւանդին:
Հայրը զարմանալով հարցրեց. — Դէ, ասա, գա-
լիս ես, թէ չես գալիս:

Տղէն մի անգամ էլ նայեց հիւանդի վրայ.
այս վայրկեանին հիւանդն աչքերը բաց արեց և
տղի վրայ պէշեց: Էլ չը դիմացաւ տղէն, նրա
ճնշուած սրտից դուրս թռան խօսքերը հեղեղի
պէս. — Ոչ, հայրիկ, սպասիր... ոչ, ես չեմ կա-
րող դալ. այ մտիկ այս ծերին, ամբողջ ի՞նգ

օր է, ես սրան իմամում եմ: Նա շարունակ
ինձ է դիտում, ես կարծում էի, թէ այս մարդը
դու ես: Նրան շատ էի սիրում: Երբ բան խմել
է ուզում, ինձ է նայում: Նա կամենում է, որ
միշտ իւր կշտին լինեմ, այժմ նրա գրութիւնը
շատ վատ է. համբերիր, սիրտս չի տալիս, որ
սրան թողնեմ, չզիտեմ, ինչու սրան այսքան
սիրում եմ: Ես վաղը կը գամ տուն, հայրիկ,
թող մի քիչ մնամ, խնամեմ: Սրան այս հոգեարք
վիճակում թողնել անկարելի է, մտիկ, նրա ուշ-
քը իմ վրայ է. ինքս էլ չեմ իմանում, թէ ով է,
բայց աչքն ինձնից չի հեռացնում, մենակ որ մը-
նայ, կը մեռնի: Թող, սիրելի հայրիկ, սրա մօտ
մնամ:

— Կեցցէ այդպէս տղէն, գոչեց բժշկի օգ-
նականը: Հայրը զարմանալով նայեց տղի վրայ,
աչք ածեց հիւանդին ու հարցրեց. — Ո՞վ է այս
մարդը: — Զեր նման մի զիւղացի ոքմին է, պատաս-
խանեց բժշկի օգնականը, դրսից է եկել և հի-
ւանդանոց մտել հէնց ձեր եկած օրը: Նրան բե-
րին այստեղ ուշը կորցրած, մինչև օրս ոչ մի
խօսք չի հանել բերանից: Երեի նա ունի հեռու
տեղ ընտանիք, զաւակներ. նա անշուշտ կարծում
է, որ սա իւր տղաներից մինն է:

Հիւանդի աչքը դարձեալ տղի վրայ էր: Հայրն
ասեց Զեչիլիօյին. — Երբ այդպէս է, միա այստեղ:

Բժշկի օգնականը ցածր ձայնով վրայ բերեց.
— միամիտ եղէք, շատ կարճ ժամանակ է միա-

լու ձեր որդին: — Մնա, որդի, կրկին ասեց հայրը, տեմնում եմ, գթոտ սիրտ ունես: Ես շուտով կրգնամ տուն, որ մօրդ հանգստացնեմ: Ահա քեզ, մի թալեր (150 կ.) փող, կարիք կունենաս: Մընաս բարով, իմ քաջ տղայ, ցտեսութիւն:


Համբուրեց որդուն, երեսին շեշտակի նայելով միանգամ էլ ճակատը համբուրեց ու զնաց: Տղէն դարձաւ մահճակալի մօտ, հիւանդը թւում էր թէ հանգստացել է: Զեչիլիօն սկսեց նորից հիւանդապահի պաշտօնը կատարել միևնոյն հոգատարութեամբ ու համբերութեամբ ինչպէս առաջ էր, միայն առանց լաց լինելու: Ինչ որ հարկաւոր էր, խմացնում էր, վերմակն ուղղում էր, ձեռը շփում էր, ժպտալով հետը խօսում, քաջալերում: Ամբողջ օր ու գիշեր նրա գլխով շուռ տալով խնամեց և հետևեալ ողջ օրն էլ մնաց մօտը: Զնայած դրան՝ հիւանդի դրութիւնը հետզհետէ վատանում էր: Դէմքը կապտեց, չնչառութիւնը արագացաւ, շփոթութիւնը շատացաւ, անկապ խօսքեր էին թռչում նրա բերանից, ուռուցքը խիստ աւելացաւ: Իրիկունը այցելած ժամին բժիշկն ասեց: — Նա գիշերը չի անցկացնիլ: Հակառակ դրան Զեչիլիօն կրկնապատկեց իւր ինամքը և աչքը մի վայրկեան չհեռացրեց: Հիւանդը մի գլուխ նըան էր դիտում և շրթունքները երբեմնապէս շարժում մեծ դժուարութեամբ, կարծես ուղղում էր մի բան ասել. անսովոր քնքշութիւն էր երևացնում աչքերի մէջ, որոնք կամաց կամաց մանրանում

էին ու մոայլում: Այս գիշեր տղէն անքուն հըսկեց նրա կողքին, մինչև որ լուս ծէզը բացուեց և գթած քոյրն երևաց: Մօտենալով մահճակալին մի հայեացը զցեց հիւանդի վրայ և շտապ քայլերով գնաց դուրս: Մի քանի վայրկեանից ետ վերադարձաւ բժշկի օգնականի հետ, հիւանդապահն էլ լապտերը բերեց: — Նա հոգին պարզելու վրայ է, ասեց բժիշկը: Տղէն բռնեց հիւանդի ձեռը. սա բաց արեց աչքերը, նայեց նրա վրայ և կրկին փակեց: Այդ վայրկեանին տղէն զգաց, որ հիւանդը իւր ձեռը սեղմում է, աղաղակեց — ահա տեսէք նա իմ ձեռը հուպ է տալիս:

Բժիշկը մի երկու ըոպէ կուացաւ հիւանդի վրայ, յետոյ ուղղուեց: Կոյսը պատի վրայից վերցրեց Խաչելութիւնը: — Վա, մեռաւ, աղաղակեց տղէն: — Այժմ գնա, իմ սիրելի, խօսեց բժիշկը, քու սրբազն ծառայութիւնը վերջացած է: Գնա ու բախտաւորուիր, գու արժանի ես բախտաւորութեան: Աստուած լինի քու հովանաւորը: Գնաս բարով:

Գթած քոյրը մի ըոպէ հեռացել էր. պատուհանի մօտ դրած բաժակից մանուշակի փունջ հանած դարձաւ, տղին մեկնեց ու ասեց. — Քեզ ուրիշ բան ընծայելու միջոց չունեմ. այս փունջը ստացիր իբրև հիւանդանոցից յիշատակ: — Շնորհակալ եմ, ասեց տղէն, մի ձեռով փընջիկը բռնեց, միւս ձեռով աչքերի արտասուքը սրբեց. — Բայց ես ոտով երկար ճանապարհ եմ

գնալու... ձեռիս կը փչանայ:
Փնջի կապն արձակելով շաղ տուեց մանու-



շակները մահճակալի վրայ և ասեց. — Ես այս թո-

դում եմ իբրև յիշատակ իմ խեղճ մեռելին: Շը-
նորհակալ եմ, գժած քոյր, շնորհակալ եմ, պա-
րոն բժիշկ:

Ապա երեսը դարձնելով դէպի մեռելը՝ ասեց.
— Մնաս բարով... Եւ մինչ մտքի մէջ մի անուն
էր վնդում, որ նրան տայ, սրտի խորքից գալով
շրթունքներին դէմ ընկաւ այն քաղցր անունը,
որ ամբողջ հինգ օր նրան տուել էր՝ մնաս բա-
րով, խեղճ հայր:

Այս ասելով զրեց իւր կապոցը կռան տակ
և ծանր քայլերով, յոգնածութիւնից բոլորովին
թուացած դուրս եկաւ հիւանդանոցից:

Օրը նոր բացուել էր:

ԶԴՅԱՑՈՂ ԹՌՈՒԾ

Այսօր ֆերուչիօյանց տանը աւելի խաղաղ
էր քան թէ ուրիշ անդամ: Հայրը, որ մանրավա-
ճառ էր, գնացել էր ֆորլի ապրանք առնելու,
մայրը իւր կուիջինա պստիկ աղջիկն առած գը-
նացել էր մարդու հետ, որ ակնաբուժին ցոյց
լով հիւանդու աչքին մի ճար անի: Հետեւալ
առաւօտից վաղ չէին կարող տուն վերա-
դառնալ:

Կէս զիշերը մօտ էր: Ցերեկով մի կինար-
մատ եկել էր, տանն ինչ հարկաւոր էր, շինել
էր, մթնադէմին գնացել իւր բանին: Տանը մնա-
ցել էին կէս կաթուածահար տատը և 13 տարե-
կան ֆերուչիօն: Տունը մի յարկանի փոքրիկ բան

էր, ճանապարհի ափին շինած մօտիկ այն գիւղից որ Ֆորլի շրջակայքում էր գտնւում, իսկ Ֆորլին Բոմանայի քաղաքներից մինն էր: Մօտիկ մի անընակ տուն կար, որ երկու ամիս առաջ հրդեհ էր ընկել կործանուել, բայց դեռ նրա ճակատին կպած երևում էր գինետան ցուցանակը: Այդ անակի ետեի կողմը փոքր բանջարանոց կար, ցանկապատած և վրէն մի կոպիտ տաշած դուռ կախած: Խանութի դուռը, որ տան մուտքի տեղ էր էր ծառայում, փողոցի վրայ էր բացւում: Չորս կողմը ընդարձակ մարդագետին էր և թթան ծառեր:

Գիշերուայ կէսին անձրե էր թափւում, քամին էլ միւս կողմից փչում: Ֆերուչիօն և իւր տատը դեռ քնած չէին. նրանց բնակարանի և բանջարանոցի մէջտեղը մի փոքր սենեակ կար և մէջը հին կարասիներ թափած: Ֆերուչիօն, երկար ժամանակ տնից բացակայ լինելով, տատին շատ վախէր ուտացրել ու անքուն սպասել տուել, միայն 11 ժամին էր տուն եկել: Տատը նստած էր մի լայն բազկաթոռի մէջ, ուր կպածի պէս մնում էր թէ ցերեկ և թէ գիշեր, որովհետև շնչարգելութեան պատճառով չէր կարողանում անկողնի մէջ պարկել:

Անձրեր թափւում էր և քամին կաթիները գիպցիում էր լուսամուտի ապակիներին: Մութակնակիր գիշեր էր. ֆերուչիօն եկել էր տուն յոգնած, ցեխում մտած, շորերը պատուած, ճակտի վրայ քար դիպէլուց կապոյտ նշան ստա-

ցած: Ընկերների հետ քարապարանուկի էր տուել, իրար հետ կպել էին, իրար մազից քաշքան ամենօրուայ պէս և վերջը խաղ էր արել, բոլոր սոլդիները տանուլ տուել և գդակն էլ մի փոսում թողել, եկել: Թէ սենեակում միայն ձէթի ճրագ էր վառած, այն էլ սեղանի ծայրին բազկաթոռի մօտ դրած, այնուամենայնիւ խեղճ տասն խկոյն նկատեց, թէ թոռն ինչ խայտառակ դրութեան մէջ է տուն եկել, մասամբ ինքը գուշակեց նրա արած գժութիւնները, մասամբ էլ տղէն պատմելով խստովանեց: Տատը թոռան սիրում էր անչափ, անսահման. բոլորն իմանալուց ետ սկըսեց լաց լինել: Երկար լուռ մնաց ու վերջն ասեց.—Ա՛խ, քարասիրտ տղայ, դու ամենեին չես խղճում քու տատին: Եթէ սրտի կտոր ունենայիր, չէիր օգտուիլ հօրդ ու մօրդ բացակայութիւնից ու ինձ այսքան ցաւ ու կսկիծ պատճառիր: Ամօթ չէս քաշում, որ ինձ ամբողջ օրը մենակ ես թողել տանը: Միթէ դու կրծքիդ տակ դութ, կարեկցութիւն չունես: Ուշքի եկ, ֆերուչիօն, այդ լաւ ճանապարհ չէ, որով դու գնում ես: Վերջը քեզ անդունդի մէջ է գցելու: Ուրիշ շատ շատերի եմ տեսել, որոնք քեզ պէս սկսել են ու խայտառակ վերջացրել: Դեռ ամենից առաջ տանից փախչում են, ընկեր տղաների հետ կոիւ են կըպչում, գրպանի սոլդիները տանուլ են տալիս և յետոյ կամաց կամաց բարից անցնում են դա-

նակին, հասարակ խաղից միւս մոլութիւններին...
որից ետք գողութեան:

Ֆիրուչիօն լում էր այս ամենը, երեք քայլ
հեռու ուտելեղէնի պահարանին յինուած, գլխա-
կախ, ճակատը կնճռոտած, կռուի հերսից դեռ
տաքացած, կարմրած։ Շագանակագոյն մի փունջ
սիրուն մազեր կախ էին ընկած ճակատի և կա-
պոյտ անշարժ աչքերի վրայ։— Խաղից համելու
ես գողութեան, կրկնեց տատը և լաց լինելը
շարունակեց։— լաւ միտք արա դրա վրայ, Ֆե-
րուչիօ, մտածիր մեր գիւղի թշուառ օրինակի—
Վիտօ Մոցոնիի վրայ— նա այժմ քաղաքում թրկ
է գալիս. քսան չորս տարեկան է, արդէն երկու
անգամ բանդ է նստել. նրա մայրը սրտի կրս-
կիծից մեռաւ։ Խեղճ կնիկ, ճանաչում էի նը-
րան. հայրն էլ յուսահատութիւնից գլուխն ա-
ռաւ, Զվեցարիս փախաւ։ Մտածիր այս փուշ ան-
պիտանի վրայ, որին ողջունելը հայրդ ամօթ է
համարում։ Նա շարունակ թափառում է իրանից
վատթար տղւների հետ, վաղը կամ միւս օրը
նրան աքսոր կուղարկեն, որ մինչև իւր մահը տա-
ժանակիր աշխատանք քաշի։ Այս, ես նրան ե-
րեխայ օրից եմ ճանաչում, նա էլ քեզ պէս է
սկսել։ Զգոյշ կաց, չինի թէ՝ դու էլ քու ծնող-
ների գլխին այն քամբախտութիւնը բերես, ինչ
որ նա:

Ֆերուչիօն լուռ էր։ Նրա սիրտն այնքան
էլ ապականուած չէր. ոչ, նրա սանձարձակ կեան-

քը այնքան սրտի փշութեան հետևանք չէր, որ-
քան կայտառութեան ու անվախութեան։ Նրա
հայրն այնպէս էր մեծացըել, կապը փոքը ինչ
ազատ թողել, համոզուած լինելով որ տղէն փա-
փուկ սիրտ ունի. հանգամանքը պահանջած ժա-
մանակ ընդունակ կըլինի մեծ և վեհանձն գործո-
ղութիւն անգամ ցոյց տալու։ Նա յոյս ունէր,
որ տղէն ինքն իրան ուղիղ ճանապարհը կը գտնի։
Նա աւելի բարի էր, քան ապականուած, սակայն
իւր ասածի էր ու յամառ։ Այժմ թէև զղջումից
սիրտն զգացուած էր, պատրաստ էր տատի ծընկ-
ներով փաթաթուել ու ներողութիւն ինդրել,
բայց չէր կարողանում այս սիրուն խօսքերը ար-
տասանել։— այս, տատի, ես մեղաւոր եմ, խոս-
տանում եմ, որ էլ չանեմ, ներիր ինձ։

Յաճախ նրա հողին լցւում էր քնքոյշ զգաց-
մունքներով, բայց հպարտութիւնը խափանում էր
արտայայտել։ Երբ տատը տեսաւ, որ թոռը պա-
պանձուել, ոչինչ չի խօսում, շարունակեց յան-
դիմանութիւնը։— ա՛խ, Ֆերուչիօ, քու սիրտն ինչ
քար է եղել, որ զղջումի մի խօսք չի հանում
իւր միջից։ Դու հօ տեսնում ես, ինչ վիճակի
մէջ եմ ես, մեռածի հաւասար, մի թաղելն է մը-
նում ինձ։ Քարասիրտ պէտք է լինես, երբ ինձ
վշտացնում ես. քու մայրիկիդ մօրը լացացնում
ես, քու խեղճ տատին, որ արդէն գերեզմանի
ափն է հասած, իւր պառաւ տեղով քեզ սիրում
է անսահման կերպով։ Զէ՞ որ նա, անիրաւ, ողջ

գիշերներ անքուն օրօրել է, երբ դու միքանի ամսական մանուկ էիր: Նա իւր բերանից ամեն ինչ պակացնում էր, որ քեզ ուտացնի: Այժմ ահա այսպէս ես իմանում նրա երախտիքը: Շարունակ կրկնում էի, այս մանուկը կըլինի իմ միխթարութիւնը, այժմ դու ինձ այնպէս ես վշտացնում, որ մահին երանի եմ տալիս: Ուրախութեամբ մնացած կեանքից ձեռ կը քաշեմ, միայն թէ քեզ տեսնեմ դարձեալ բարի և խոնարհ, ինչպէս այն օրերը... երբ քեզ եկեղեցի էի տանում: Միտգ է, ֆերուչիօ, որ մանր քարերավու ծաղիկներով գրպաններս լցնում էիր կամ երբ քեզ գրկումս քնած տուն էի բերում: Այն ժամանակ դու բու տատին սիրում էիր: Եւ այժմ երբ կաթուածահար ընկած եմ ու կարօտ քու սիրուն, ինչպէս շնչելու օդին: Զէ՞ որ բացի քեզանից ուրիշ ոչով չունիմ աշխարհի վրայ ես, խեղճ կիսակենդան պառաւաս: Ախ Աստուած, Աստուած...

Ֆերուչիօն խիստ զգացուած էր, հէնց այն է մտադրում էր, որ տատի վզով փաթաթուի, յանկած կողքի սենեակից, որի լուսամուտները բանջարանոցին էին նայում, մի թեթև չըխկոց լոեց: Բայց պարզ չիմացաւ, արդեօք բամին չըխկացրեց լուսամուտի փեղկը, թէ ուրիշ բան էր: Ականջը սրեց որ լսի: Անձրել շըրփացնում էր լուսամուտներին: Զըխկոցը դարձեալ լուսեց: Այս անդամ տատն էլ իմացաւ.— Ի՞նչ բան է սա, հարցըց ահ ու դողով: — Անձրեն է կամանց

պատասխանեց մանուկը: — Ուրեմն, ֆերուչիօ, խոստանում ես ինձ, խօսեց պառաւն աչքերը սրբելով, որ լաւ տղի պէս քեզ ուղղես և խեղճ տատիդ ըլ լացացնես...

Մի նոր թեթև չխկոց նրա խօսքը կտրեց: — Սա անձրեկի չխկոց չի, զոչեց նա գոյնը թոցնելով... գնա տես ի՞նչ բան է:

Յետոյ շուտով վրայ բերեց: — Զէ, մի գնալ, կաց այստեղ: Այս ասելով ֆերուչիօյի թեր բըռնեց: Երկուսն էլ շունչները պահեցին, բայց բացի ջրի չըչուալը ոչինչ չէին լուսմ: Յետոյ ափշած իրար երեսի մտիկ արին, կողքի սենեակում ոտնաձայն էր լսում: — Ո՞վ կայ այդտեղ, հարցրեց մանուկը սարսափած: Պատասխան չկար: — Ո՞վ ես, ձայն հանիր, կանչեց դարձեալ ֆերուչիօն վախեց ընդարձանալով: Այդ խօսքը հազիւ արտասանած, երկուսն էլ սարսափով բղաւեցին: Երկու մարդ ներս թափուեցին, մէկը բռնեց տըղային և ձեռը դրեց բերանին. միւսը պառաւի կոկորդը ճանկած խեղգում էր: Առաջին գողն ասեց — ֆերուչիօյին. — սուս կաց, թէ չէ կապանմ, երկրորդը դանակը բարձրացնելով սաստեց: — սուս կացէք:

Երկուսն էլ դէմքերը ծածկած ունէին թուխ թաշկինակներով ու աչքերի համար երկու ծակ թողել: Մի կարճ ժամանակ լսելի էր միայն չորսի ճնշուած շնչառութիւնը և անձրեկի շփշփոցը: Պառաւը կամաց խոխուացնում էր. նրա աչքերը

ըներից գուրս էին պրծել: Ֆերուչիօյին բռնողը
նրա ականջում ցածը հարցրեց. — հօրդ փողը ո՞ր-
տեղ է պահած:

Տղէն ատամներն իրար դիպջնելով ցածը
ձայնով պատասխանեց. — այնտեղ, պահարանի
մէջ: — Արի հետո, ասեց գողը, կոկորդը սղմելով
քաշ տուեց միւս սենեակը: Այնտեղ յատակի վրայ
զրած էր մի աղոտ լապտեր: — Ո՞րտեղ է պահա-
րանը, հարցրեց նա: Տղէն կիսախեղդ վիճակում
ցոյց տուեց պահարանը: Գողն ապահով լինելու
համար տղին վէր զցեց պահարանի առաջ ծնկնե-
րի վրայ, զլուխը սղմեց իւր երկու ծնկների արան-
քում ու ասեց. — Եթէ ձայն ես հանել, կրխեղդեմ:

Լապտերը մի ձեռն առաւ, միւս ձեռի սուր
երկաթը կոխեց կողպէքի մէջ, հուպ տուեց, կոտ-
րեց, դուները բաց արեց, ամեն ինչ քըրըելով
զրպանները լցըեց: Պահարանը ծածկեց, նորից
բաց արեց. միջի եղածը կրկին տակ ու զլուխ
արեց, յետոյ տղին ամուր սղմած բերեց սենեա-
կը, ուր միւս գողը դեռ պինդ պահում էր պա-
ռաւին, որ ամբողջ մարմնով գողալով բերանը
բաց մէջքի վրայ մեկնուած էր: Գողը կամաց քըչ-
փչոցով հարցրեց. — հը՝ գտա՞ր: — Այն, գտայ,
պատասխանեց միւսը, այժմ գուրս գալու հոգու
քաշիր:


Պառաւին բռնողը վագեց գէպի բանջարանոցի
գուրը, որ մտիկ անի. հօ մարդ չկայ: Յետոյ փոքը
սենեակից սուլոցի պէս ձայն տալով ասեց. — արի:

Ետ մնացած գողը, որ ֆերուչիօյին դեռ պա-
հում էր, դանակով սպառնաց տղային և նոյնպէս
պառաւին, որ տչքերը նոր բացել էր, ասեց. —
Զայն ծպտուն չհանէք, թէ չէ ետ կը դառնամ
երկսիդ կոկորդն էլ գուրս կըկտրեմ:

Մի վայրկեան աչքերը խոժոռեց երկուսի
վրայ: Այդ միջոցին հեռուից ճանապարհի վրայ
լսելի եղաւ բազմաձայն երգեցողութիւն: Գողը
գլուխը դարձրեց գէպի դուռը և այս արագ շար-
ժողութեան ժամանակ երեսին կապած թաշկի-
նակն ընկաւ: Պառաւը բարձր ձայնով ճչաց. —
Մոցցնի, այդ գու ես: — Այս, անիծեալ պառաւ,
օննաց ճանաչուած գողը, քեզ պէտք է սպանել:

Դանակը բարձրացրած մօտեցաւ պառաւին, սա
արդէն ուշաթափուել էր: Դանակը վրայ բերելիս,
ֆերուչիօն կայծակի պէս վեր թռաւ, յուսահատ
ճիչ արձակելով տատի վրայ ընկաւ և իւր ժար-
մուվ նրան ծածկեց: Մարդասպանը փախչելիս
դիպաւ սեղանին, ճրագը վէր ընկաւ, լոյսը հան-
գաւ: Տղէն կամաց կամաց տատի վրայից պոկու-
ելով ընկաւ առջնը ծնկաչոք և այդ գրութեամբ
մնաց ձեռները տատի մէջքով փաթաթած և զլու-
խը նրա գոզը դրած: Մի քանի բոպէ անցաւ. խա-
ւարը ամեն տեղ պատել էր: շինականների երգե-
ցողութիւնը հեռանում էր գէպի դաշտի խորքը:
Պառաւը կրկին ուշի եկաւ, վախից ատամներն իրար
խփելով մեղմ ձայնով կանչեց. — Ֆերուչիօ, նոր
ես: — Այստեղ եմ, տատի, պատասխանեց տղէն:

Պառաւը աշխատեց որ խօսի, սարսափից լեզուն
կարկամել էր։ Մի վայրկեան մնաց լուռ, խիստ



սարսափոտեց, վերջ ի վերջոյ հարցը եց. — Նրանք
էլ այսպեղ չեն։ — Ոչ։ — Ուրեմն ինձ չսպանեցին,

շշնաց նա խեղդուած ձայնով։ — Ո՞չ, տատի, դու
վրկուած ես, ասեց Ֆերուչիօն նուաղած ձայնով,
դու աղատուած ես, սիրելի տատի, նրանք փող
տարան. . . . սակայն հայրը այստեղ քիչ բան էր
թողել։

Պառաւն աղատ շունչ քաշեց։ — Տատի, խօսեց
ծնկաչոք Ֆերուչիօն. թևերով նրան փաթաթուած,
տատի ջան. . . . դու ինձ սիրում ես, չէ։ — Ա՛խ,
Ֆերուչիօն, իմ խեղճ զաւակ, պատասխանեց պա-
ռաւը ձեռները նրա զիսին դնելով, ի՞նչ սարսափ
պէտք է կերած լինես։ Ա՛խ, ողորմած Աստուած։
Վերկաց, ճրագ վասիր. . . . բայց չէ, աւելի լաւ
է, մնանք մթան մէջ, ես դեռ վախում եմ։ — Տատի,
շարունակեց խօսքը տղէն, ես քեզ անչափ եմ
վշտացրել։ — Չէ, Ֆերուչիօն, այդպէս մի՛ խօսիլ,
զրա վրայ էլ չեմ մտածում, քեզ հոգուցս աւելի
եմ սիրում։ — Քեզ ամեն Աստծու օր վշտացրել
եմ, շարունակեց Ֆերուչիօն գժուարութիւնով և
դողդոջուն ձայնով, բայց, տատի, հաւատա, քեզ
միշտ սրտիս մէջ սիրել եմ։ Ինձ ներում ես թէ
չէ. . . . ներիր ինձ, տատի, ինզրում եմ։ — Այն, նե-
րում եմ, աչքիս լոյս, ներում եմ քեզ բոլոր սրբ-
տով։ Ի՞նչպէս կարող էի քեզ չըներել։ Վերկաց,
սիրելի թոռնիկ, խոստանում եմ, էլ քեզ ոչ մի
անգամ չեմ յանդիմանիլ։ Դու բարի սիրտ ունես,
այսպէս անուշ զաւակ ես։ Արի ճրագ վառենք։
Հարկաւոր չէ վախենալ։ Վերկաց, Ֆերուչիօն։ —
Ծնորհակալ եմ քեզանից, տատի, խօսեց տղէն

հետզհետէ նուազող ձայնով։ Այժմ... սրառվ գոհ եմ. դու ինձ այլ ևս չես մոռանալ, տամի, այնպէս չէ։ Դու միշտ ինձ կը յիշես... քու ֆիրուչիոյին։ — Ի՞նչ է պատահել քեզ, իմ ֆերուչիօ, գոչեց պառաւը զարմացած և շփոթուած։ Ճեռները դրեց նրա ուսերին, գլուխը կռացրեց, որ երեսին մտիկ անի։ — Յիշիր ինձ, տամի, մեղմ շըշնջաց մանուկը սպառուած ձայնով, կարծես շունչը պարզելիս։ Իմ կողմից համբուրիր մայրիկիս, հայրիկիս, իմ քոյր լուիջինային... մնաս բարով, տամի։ — Ասա, իսէր Աստծու, ի՞նչ է պատահել քեզ, աղաղակեց պառաւը զարհուրած շոշափելով տղայի գլուխը, որ անզօր ընկած էր իւր ծնկների վրայ։ Ի՞նչքան որ ոյժը պատում էր ճշաց։ — Ֆերուչիօ, Զուլիօ, Ֆերուչիօ, աչքի լոյս զաւակ, իմ ինդութիւն, ի՞նչ պատահեց քեզ։ Ո՞վ երկնային հրեշտակներ, օգնութիւն հասէք։

Բայց ֆերուչիօն այլ ևս չըպատասխանեց։ Փոքրիկ հերոսը, իւր տատի ազատիչը թիկունքից դանակի հարուած ստանալով, սիրուն և աներկիւդ հոգին աւանդել էր Աստծուն։

ՀԵՐՈՍ ՏՂԱՅ

Ջամներկու ժամին ուսուցչի հետ գնացել էինք քաղաքային տան առաջը. քաղաքացիական շքանշան պէտք է մատուցանէին մի տղայի, որ Պօ գետից մի մանուկ էր ազատել։ Տան ճակատի կողմից սանդուխների մօտ ծածանւում էր

մեծ եռագոյն դրօշակը։ Մենք մտանք խորհրդաբանի բակը, որ մարդկանցով լիքն էր։ Բակի խորքում երեսում էր մի սեղան, վրէն կարմիր գորգ փռած, նրա վրայ էլ թղթեր դարսած։ դրա ետել մի շարք ոսկեզօծ աթոռներ քաղաքագլխի ու վարչութեան անդամների համար։ Այնտեղ կանգնած էին խորհրդաբանի գոնապանները կապոյա բաճկոնակ և սիպտակ գուլպաններ հագած։ Բակի աջ կողմը շարուած էին մի խումբ քաղաքացի զինուորներ՝ կրծքները մեղայներով զարդարած։ Նրանցից գէնը մի շարք մաքսային պահակներ, միւս կողմը կանգնած էին հրդեհաշէջները և շատ զինուորներ՝ հեծելազօրից, թնդանօդիգներից, որսորդներից խառնի խուռն, որոնք նոյնպէս եկել էին հանդէսը տեսնելու։ Յետոյ շուրջ բոլորը պարոններ, քաղաքացիք, մի քանի զինուորականներ, կանայք, տղաներ, որոնք իրար հրելով առաջ էին գալիս։ Մենք քաշուեցինք ետեի կողմը, ուր արդէն ուրիշ բաժանմունքների շատ աշակերտներ իրանց ուսուցիչների հետ տեղ էին բռնել։ Մեզանից մօտիկ մի խումբ հասարակ տղէք կային 10—18 տարեկան։ Նրանք հրհուալէ ծիծաղում ու խօսում էին, երեսում էր որ նրան Պօ թաղից էին և ընկեր ու ծանօթ այն տղայի, որ շքանշան էր ստանալու։ Վերեկի լուսամուտներից երեսում էին վարչութեան ծառայողները. գրադարանի պատշամբն անգամ լիքն էր մարդկանցով, որոնք խիտ կպել էին սանդու-

խի ճաղին. հանդէպի կողմի պատշգամբում, որ
մեծ դռան վերևն էր, իրար խիտ կպած կանգ-
նած էին բաւական թուով օրիորդներ քաղաքա-
յին ղպրոցներից, այլ և շատ զինուորականների
դուստրներ իրանց կապոյտ շղարշներով։ Նման էր
թէ մարդ թատրոնում լինէր. ամենն էլ ասում,
խօսում էին ուրախ, ամեն բովէ նայելով կար-
միր սեղանի կողմը. արդեօք ոքմին չի՞ գալիս. Ե-
րաժշտութիւնը ցածր նուազում էր սիւների ե-
տևի կողմը։ Բարձր պատերը շողշողում էին ա-
րեկ տակ։ Տեսարանը հրաշալի էր։ Ահա բոլորե-
քեան ծափ տուին բակի մէջ, պատշգամբների,
լուսամուտների վրայից։ Ես ոտիս ծայրերի վրայ
կանգնեցի, որ տեսնեմ ի՞նչ է։ Կարմիր սեղանի
ետև կանգնած բազմութիւնը երկու բաժանուե-
լով տեղ տուեց մի մարդու և մի կնոջ։ Մարդը
բռնած էր մի տղայի ձեռից։ Աս էր որ ընկերին
ազատել էր։ Մարդը նրա հայրն էր, մի որմնա-
դիր տօնական շորեր հագած։ Կինը, որ նրա
մայրն էր, շէկ էր ու կազմուածքով փոքր. հա-
գած ունէր սև շորեր։ Տղէն նոյնպէս շէկ էր ու
փոքրիկ, հագին ունէր մի մոյգ վերնազգեստ։


Այսքան մարդկանց նայելուց, ծափահարելուց
նրանք երեքով շշմուեցին ու մնացին կանգնած,
ոչ կարողանում էին գլուխ բարձրացնել և ոչ շար-
ժուել։ Վարչութեան սպասաւորներից մինը նը-
րանց հրեց դռան կուշտը դէպի աջ։ Մի վայր-
կեան հանդիսականները մնացին հանդարտ ու յե-

տոյ կրկին ուժգին ծափահարեցին ամեն կողմից.
տղէն նայեց վերև լուսամուտներին և ապա պատշ-
գամբներին, ուր զինուորականների աղջիկներն
էին։ Նա գդակը պահում էր ձեռի ափերի մէջ
սղմած, երկում էր, որ նա իսկապէս չգիտէ թէ
ուր է եկել։ Ինձ թուաց թէ նա երեսով նման է
իմ գասընկեր Կորէտառուն, բայց նա աւելի կար-
միր էր։ Նրա հայրն ու մայրը ուղղակի նայում
էին սեղանի վրայ։ Մէր կողքին կանգնած Պօ թաղի
տղէքը շարունակ բոթքոթում էին դէպի առաջ,
իրանց ներկայութիւնն իմաց անելու համար ձեռ-
ները շարժում էին դէպի իրանց ընկերը և ցածր
ձայնով նրա անունը տալիս. — Պին, պին, Պինօտ։
Երկար կանչելուց վերջն իրանց նպատակին հա-
սան, տղէն նրանց վրայ նայելով ժպտաց ու գը-
դակը պնչին մօտեցրեց։

Մէկ էլ յանկարծ զինուորները ուղղուեցին
և նրան պատիւ տուին։ Քաղաքազուխը բազմա-
թիւ պարոնների հետ ներս եկաւ։ Նա կրում էր
մի մեծ եռագոյն ժապաւէն, մօտեցաւ սեղանին,
միւս պարոնները նրա ետև և երկու կողմը շա-
րուեցին։ Երաժշտութիւնը գաղաքեց, քաղաքազը-
լուխը նշան արեց, ամեն կողմ լութիւն տիրեց։
Նա սկսեց խօսել, առաջին բառերը ես լաւ չը
հասկացայ, բայց ես լսեցի, որ նա տղի քաջա-
գործութիւնն էր պատմում։ Յետոյ բարձրացրեց
ձայնը, այնպէս պարզ և հասկանալի էր հնչւում
ամբողջ բակում, որ ես ոչ մի խօսք չը թոցրի։

«Երբ նա ամիկց ընկերին տեսաւ, որ սարսափահար եղած ջրի մէջ մահուան հետ կռւում է, իսկոյն շորերը վրից հանելով դէն շպրտեց ու առանց մի բոսկէ ուշանալու մօտ վազեց։ Ամեն կողմից նրան ձայն էին տալիս.— կը խեղդուես, ինչ ես անում։ Նա պատասխան չըտուեց։ Նրան բռնեցին որ չթողին։ Նա ձեռներից բաց ընկաւ։ Նրա անունը տալով ետ էին կանչում։ Նա առանց լսելու թուաւ, ջուրն ընկաւ։ Դետն ուռած վարարած էր, խիստ վտանգաւոր մինչև անգամ՝ չափահաս մարդու համար։ Բայց նա իւր փոքրիկ մարմնի և մեծ սրտի բոլոր թափով ջուրն ընկնելով վազեց մահի դէմ։ Նա հասաւ և լաւ վայրկեանին բռնեց ջրի մէջ ընկղմուած թշուառ ընկերին և քաշեց վերև։ Նա ուժգին մաքառում էր մէկ ալիքների դէմ, որ կամենում էին իրան սկել, քշել, մէկ խեղդուողի հետ, որ ուզում էր նրա վզով փաթաթուել և լողալն արգելել։ Շատ անգամ կորաւ, անյայտացաւ ջրի տակ և յուսահատ ջանքեր անելով դարձեալ լոյս ընկաւ վերև, անյողգողդ, անյաղթելի իւր մտադրութեան մէջ, ոչ թէ իւրեւ մի տղայ, որ մի ուրիշ տղայի ազատել է կամենում, այլ ինչպէս մի տղամարդ, ինչպէս մի հայր, որ կռւում է իւր որդուն ազատելու, որ իւր յոյսը, իւր կեանքն է։ Վերջապէս Աստուած չէր ուզում, որ այսպիսի անվախ մեծահոգութիւնը ապարդիւն անցնէր։ Պատանի լողնորդը վարար գետի բերանից խլեց նրա դոհին,

կրկին բերեց ցամաք և ուրիշների հետ միասին, ինչ որ հարկաւոր էր առաջին օգնութեան հա-



մար, արեց. ապա թէ հանգարտ դարձաւ տուն և առանց պարձենալու պատմե ծնողն երին և լութիւնը։

Պարոններ, հերոսութիւնը, դիւցազնութիւնը
սիրուն, հիացման արժանի գործ է տղամարդի
մէջ, բայց մի մանուկի մէջ, ուր դեռ փառասի-
րութեան կամ այլ շահի հետք չկայ, մի մանուկի
մէջ, ուր որքան քիչ է ուժը, այնքան աւելի
պէտք է լինի քաջարասութիւնը, մի մանուկի մէջ,
որից մենք ոչինչ չենք պահանջում, որը ոչնչով
չնորհապարտ չէ, որը մեր աչքում վեհանձն ու
սիրելի է թւում, երբ նա ոչ թէ տալիս է, այլ
երբ ուրիշի անձնազոհութիւնը ըմբռնում է: Հե-
րոսութիւնը մանուկի մէջ աստուածային է: Ես
աւելի բան չեմ ասում, պարոններ: Չեմ կամե-
նում աւելորդ խօսքերով այսպիսի անպաճոյն մե-
ծութիւնը զարդարել: Ահա ձեր առաջ կանգնած
է քաջ և վեհանձն ազատողը: Զինուորներ, ող-
ջունեցէք սրան իբրև եղբօր. դուք մայրեր, օրհ-
նեցէք սրան իբրև հարազատ որդու. դուք մա-
նուկներ, միտներդ պահեցէք սրա անունը, լաւ
տպաւորեցէք ձեր յիշողութեան մէջ սրա պատ-
կերը, որ ձեր հոգու և ձեր սրտի մէջ յաւիտեան
անջինջ մնայ: Մօտիկ արի, հերոս տղայ: Խոալա-
կան թագաւորի անունից շնորհում եմ քեզ այս
քանշանը, որին արժանանում ես իբրև քաղաքացի:
Հանդիսականների միահամուռ կեցցէներից
խորհրդաբանի ողջ շինութիւնը դղբդաց: Քաղա-
քագլուխը սեղանի վրայից վերցրեց շքանշանը և
ամրացրեց տղի կրծքի վրայ: Յետոյ առնելով նը-
րան իւր թերերի մէջ համբուրեց երեսը: Մայրը

ձեռը աչքերին դրեց. իսկ հայրը գլուխը կախեց
կրծքի վրայ: Քաղաքագլուխը երկուսի ձեռները
սեղմելով, ժապաւէնով փաթաթած վկայականը
յանձնեց մօրը: Յետոյ դարձաւ նա տղային և այս-
պէս խօսեց: — Թո՞ղ այսօրուան յիշատակը, որ քեզ
համար այսպէս փառապանծ էր, իսկ ծնողներիդ
համար այսպէս երջանկաւէտ, քանի շունչ ունես,
քեզ հաստատ պահպանի առաքինութեան և պա-
տուի ճանապարհի վրայ. մնաս բարով:

Քաղաքագլուխը դուրս գնաց. երաժշտու-
թիւնը նուագեց և կարծեցինք թէ ամեն ինչ վեր-
ջացաւ. յանկարծ հրդեհաշէջների շարքը ճեղքուեց.
մի կին մի 8 թէ 9 տարեկան երեխայի առաջ
բոթեց ու ինքը թագնուեց: Երեխան վագեց ու
ընկաւ շքանշան ստացող տղի խտիտը: Բակը նո-
րից դղբդաց որոտազին կեցցէների ու ծափահա-
րութիւնների ճայնից: Ամենն էլ գուշակեցին, որ
սա գետի միջից ազատուած երեխան է, որ ե-
կել է իւր ազատողին շնորհակալութիւն անելու:
Նրան համբուրելուց ետ թերնկէց արեց, որ հետը
միասին դուրս գայ: Առաջ նրանք, յէտոյ հայրն
ու մայրը մօտեցան դռանը, դժուարութեամբ կա-
րողացան պատի պէս կանգնած բազմութեան մէջ
ճղելով անցնել. պահակներ, տղաներ, զինուոր-
ներ, կանաք—բոլորն իրար զիսի կիտուած էին:
Ամենն էլ քոնչում էին դէպի առաջ և բարձրա-
նում ոտի ծայրերի վրայ, որ տղային տեսնեն:
Դռան մօտիկ եղողները նրա ձեռը բոնում սեղ-

մում էին, երբ նա դպրոցի աշակերտների դէմը
հսսաւ, ամենն էլ իրանց գդակները ճոճեցին օդի
մէջ: Պո թաղի տղէքը մեծ աղմուկ էին սարքել,
շատերը նրա թեր և բաճկոնը քաշելով աղաղա-
կում էին.

—Պին, կեցցէ Պին, բրափօ Պին:

Ես նրան յաւ գիտեցի, երբ մօտիկ առջեռվս
անցնում էր. նրա երեսը լոյսի պէս փայլում էր.
Նա երջանիկ ու բազգաւոր էր: Շքանշանն ունէր
մի սիպտակ-կարմիր կանաչ ժապաւէն: Նա մայրը
համ լալիս էր, համ ծիծաղում: Նրա հայրը յուղ-
մունքը ծածկելու համար ոլորում էր բեղերը,
բայց նրա ձեռն այնպէս զողում էր, կարծես ջերմ
ունենար: Վերև լուսամուտների մօտ և պատշ-
գամբների վրայ կանգնողները շարունակ դէպի
դուրս էին թեքւում ու ծափահարում: Երբ սիւ-
նազարդ գուանը հասան, մէկ էլ տեսնես զինուո-
րականների աղջկերանց պատշգամբից փնջերով
անմոռուկ, մանուշակ, մարգարիտ ծաղիկների կա-
տարեալ տարափի եկաւ ու թափուելով տղայի,
հօր, մօր գլխների վրայ, գետինը ծածկեց: Շա-
տերը շտապ շտապ ժողովում էին ծաղիկները ու
մատուցանում մօրը: Բակի ետեկի կողմում երա-
ժառութիւնը նուազում էր մեղմ ու հանդարտ մի
շատ անուշ եղանակ. կարծես բազմաթիւ արծա-
թահնչիւն ձայներ իրար հետ երգելով ծանր ու
բարակ հեռանում են գետի ափն ի վեր...

ՄՈՐԸ ԺՆԴԱՌԴ ՓՈՔՐԻԿ ՏՂԱՆ

Ճատ տարի առաջ մի տասներեք տարեկան
տղայ, բանուորի որդի, Գենուա բաղաքից գնում էր
Ամերիկա իւր մօրը փնտոելու: Նրա մայրը երկու
տարի առաջ զնացել էր Բուենոս-Այրես, Արգեն-
տինեան հասարակապետութեան մայրաքաղաքը,
մի հարուստ տան մէջ պաշտօն գտնելու և կարճ
միջոցում բաւականաշափ փող վաստակելու իւր
բնտանիքին օգնուլու համար, որ զանազան քամ-
բաղդ հանգամանքների երեսից չքաւորութեան ու
պարաքերի մէջ էր ընկել:

Քիչ չէ արիասիրտ կանանց թիւը, որոնք
աչքի առաջ ունենալով այդ նպատակը երկար ու-
ղերութիւն են անում և այնտեղ սպասաւորնե-
րին արուող առատ վարձատրութեան շնորհով,
երկու երեք տարի չքաշած մի քանի հազար ֆր-
քանկ գրավանները զրած վերադառնում են հայ-
րենիք: Խեղճ մայրն արիւն արտասուր էր թա-
փել որդիերանցից բաժանուելիս. որոնց մէկը
տասնութ տարեկան էր, միւսը տասնումէկ: Բայց
սա սրտոտ կին էր, վառ յոյսերը ծոցին զնաց
հեռաւոր աշխարհ: Առաջին օրից ուղերութիւնը
յաջողակ էր. նոր էր Բուենոս-Այրես հասել, մի
գենուացի խանութպանի միջնորդութեամբ, որ
իւր ամուսնու ազգականն էր և վաղուց այնտեղ
էր ապրում, մի շէն ընտանիքում տեղ գտաւ,
նրան առատօրէն վարձատրում էին և հետը քաղցր

վարւում։ Առ ժամանակ նա իւր տաճնեցոց հետ
կանոնաւոր նամակազրութիւն ունէր։ Ինչպէս
խօսք էին տուել, ամուսինը նամակներն ուղ-
ղում էր իւր ազգականին. սա իւր ձեռով տալիս
էր նրան, պատասխան ստանում, մի քանի խօսք
էլ ինքը տակին աւելացնում ու առաքում դէպի
Գենուա։ Կին ամսական վաստակում էր 80 ֆր.
իւր համար ոչինչ չէր ծախսում, ուստի իւրաքան-
չիւր երեք ամիս մի կլոր գումար էր ուղարկում
տուն, որի միջոցով ամուսինը, որ ազնիւ սրտի
մարդ էր. կամաց-կամաց վճարում էր ստիպողա-
կան պարտքերը և իւր բարի անունը վերականգ-
նում։ Միենոյն ժամանակ ինքն էլ աշխատում էր
ու գոն էր իւր վասակով. յոյս ունէր որ կինը
շուտ կըվերագառնայ. տունն առանց նրան ամայի
էր թւում և որ գլխաւորն է, փոքր որդին մօրն
անչափ սիրելուց շարունակ տիրում էր ու հալ
ու մաշ լինում. չէր կարողանում այլևս մօր բա-
ցակայութիւնը տաճնել։ Ուղերութիւնից մի տա-
րի անցկացած կինը մի կարճ նամակ գրեց. յայտ-
նում էր որ տկար է. նրանից ետ լուրը կարուեց,
էլ տունը նամակ չեկաւ. Ամուսինը երկու ան-
գամ իւր ազգականին գրեց, սրանից էլ պատաս-
խան չեկաւ. Դրեցին արգենտացի ընտանիքին, որի
մօտ կինը ծառայում էր, դարձեալ ոչ մի պա-
տասխան։ Մտածում էին. գուցէ նամակը տեղ չի
հասել կամ հասցէն սիալ է գրուած։ Նրանք վա-
խենում էին, չինի թէ զլիին փորձանը եկած

լինի. ուստի գրեցին Բուենոս Այլեսում նստող
իտալական հիւպատոսին, որ հարց ու փորձ անի։
Երեք ամսից ետ հիւպատոսից պատասխան ստա-
ցան, որ չնայած լրագիրներում տուած յայտա-
բարութիւններին, մարդ չյայտնուեց, որ մի լուր
տայ նրա մասին։ Ուրիշ ի՞նչ կերպ բացատրել։
Երեկի բարեսիրտ կինը կարծելով թէ աղախին դառ-
նալը ամօթ կըբերի իւր ամուսնու անուան, ար-
գենտացի ընտանիքի մօտ իւր իսկական անունը
ծածկել է։ Դրանից ետ անցաւ դարձեալ երեք
ամիս, պատասխան չստացան։ Հայր և որդիք տա-
րակուսել էին, մնացել։ Փոքր տղէն հօ վշտից
այնպէս էր կոտրուել, որ ճանաչել չէր լինում։
Ի՞նչ հնար կար, ի՞նչ անէին, ում դիմէին։ Հօր
առաջի մտած մունքն էր ճանապարհ ընկնել, գնալ
Ամերիկա կնոջը փնտուելու։ Բայց իւր գործն ի՞նչ
անէր. տղերանց ով պահէր։ Մեծ տղէն նոյնպէս
չէր կարող հեռանալ. որովհեակ նա հէնց այժմ
էր վաստակ բերում. ընտանիքին պէտք էր։ Այս
հալ ու մաշ կեանքի մէջ էին անցկացնում օրերը
և ամեն անգամ միենոյն սրտածմլիկ զրոյցները
կըկնում, մէկը միւսի երեսին նայում, սուս կե-
նում։ Յանկարծ մի երեկոյ Մարկոն, փոքր տղէն
վճռական ասեց.—ի՞նչ կլինի, կլինի, ես գնալու
եմ։ Ամերիկա մայրիկիս փնդուելու։ Հայրը տիրա-
գէմ օրօրեց զլուխը և ոչինչ չպատասխանեց։ Սա
ազնիւ միտք էր, բայց դժուար զլուխ գալու։ Ի՞նչ
պէս կարող էր 13 տարեկան տղէն մենակ սիրտ

տնել, Ամերիկա գնալ, միայն ճանապարհորդութիւնը մի ամիս է քաշում: Բայց տղէն իւր խօսքի տէրնէր. ասել էր ու պինդ կանգնել: Կրկնեց իւր մտադրութիւնը մի օր, երկու օր. իրար ետնից հիմունքներ առաջ բերեց ինչպէս մի չափահաս մարդ: Ուրիշներն էլ գնացել են այնտեղ. որքան իմացել եմ, ինձնից փոքրերն էլ: Ինձհամար դժուարը շոգենաւնստեն է, այնուհետև ապահով եմ, որ ուրիշների պէս ես էլ կը համնեմ այնտեղ: Հասնելուց ետ դժուար չէ մեր ազգականի խանութ գտնելը: Այնտեղ անթիւ իտալացիներ կան, նրանցից մէկը փողոցը ցոյց կը տայ: Երբ ես մեր ազգականին գտնեմ, էլ ի՞նչ դժուար է մայրիկիս գտնելը: Եթէ ազգականին չգտնեմ, կը գնամ հիւպատոսի մօտ և նրա միջոցով արգենտացի ընտանիքը կը փնտռեմ: Ինչ էլ պատահի, յուսահատողը չեմ: Այնտեղ, ասում են, ամենի համար էլ աշխատանք կայ, ես նոյնպէս գործ կը ճարեմ, այնքան կը վաստակեմ, որ վերադառնալու վտունենամ:

Այսպէս օր օրի վրայ այնքան խօսեց, որ համարեա հօրը համոզեց: Հայրը նրա վրայ վրատահ էր, զիտէր որ Մարկօն խելօք ու կտրիճ է, որ նա զրկանքի ու նեղ օրի սովոր է, որ նրա սրտում այս գովանի յատկութիւնները կրկնակի ուժ են ստացել սրբազնն նպատակի համար, իւր պաշտելի մօրը վինտուելու համար: Գործին նպատեց և այս հանգամանքը. իւր ծանօթի բարեկա-

մը շոգենաւի կապիտան էր, սա լսելով երեխայի մտադրութեան մասին, խոստացաւ Արգենտինիա գնալու համար երրորդ կարգի մի ծրի տոմսակ տալ: Դրանից ետ հայրը փոքր ինչ տատանուեց, բայց վերջը կակղելով յօժարուեց, որ տղէն ուղիորուի: Մի տոպրակ սպիտակեղէնով լիք, ճանապարհածախս և ազգականի հասցէն տուին Մարկօյին և ասլրիլ ամսի մի զեղեցիկ երեկոյ տարան նաւը: Սանդուխի վրայ հայրը տեսնելով, որ շուտ պէտք է բաժանուածի, արտասուալից աշքերով որդուն համբուրեց ու այս խօսքերն ասեց. — Քաջ եղիր, Մարկօ, դու սրբազն գործի պատճառով ես ուղերուում. Աստուած քեզ օգնական կը լինի:

Խեղձ ու կրակ Մարկօ, ճիշտ է, նա ունէր մի ամուր սիրտ, ուղերութեան ամենադաժան փորձանքների համար նախապատրաստուած սիրտ. բայց երբ տեսաւ, որ սիրուն Գենուան հորիզօնի ետեր անյայտացաւ, իրան թողեց ընդարձակ ծովի վրայ. հեռաւոր աշխարհներ չուող զիւղացիներ լիքը մեծ նաւի վրայ, ինքը մենակ, ոչ մի ծանօթ չկայ, կողքին էր միայն իւր փոքր տոպրակը — իւր բոլոր հարստութիւնը. — այդ ժամանակ նրա վրայ մի տեսակ վհատութիւն եկաւ: Երկու ամբողջ օր մնաց նաւի առաջամասում պարկած, ինչպէս մի շուն առանց մի բան ուտելու: Խիստ պահանջ էր զգում լալու և լալիս էր: Ի՞նչ

տեսակ տիսուր մտքեր ասես, գալիս էին ու անցնում նրա գլխով, բայց ամենատխուրն ու ամենասարսափելին յամառութեամբ դառնում էր նրա մօտ. այդ այն մտածմունքն էր, թէ իւր մայրը մեռած է: Անհանգիստ և միշտ ընդհատող քնի մէջ շարունակ տեսնում էր մի անձանօթ դէմք, որ նրան կարեկցութեամբ դիտում էր ու ապա աւ կանչին շշնջում: — քու մայրը մեռած է: Իսկոյն հեկեկալէ աղաղակում էր ու դարթնում: Երբ Զիբրալտարի նեղուցն անցնելով Ալլահնդեան ովկիանոսն ընկան, այդ տեսարանը Մարկոյին մի քիչ յոյս ու քաջութիւն ներշնչեց. բայց դա նրա սրտի համար կարճատեև մխիթարութիւն էր: Լայնատարած, միշտ միանման ծովը, հետզնետէ աճող շորը, նրան շրջապատող չքաւոր մարդկանց տիրութիւնը, իւր մենակութիւնը — այս բոլորը նրան այնպէս էին ձնշում, որ քիչ էր մնում յուսահատուի: Սին ու միակերպ անցնող օրերը նրա հոգու մէջ խառնուփնթորում էին, ինչպէս հիւանդների մօտ է պատահում: Այնպէս էր թւում, թէ ամբողջ տարի է ծովի վրէն: Ամեն առաւօտ գարթնելիս սարսափը շատանում էր, որ ինքը միայնակ անվերջ ու անհուն ալիքների միջով Ամերիկա է ուղերւում: Տախտակամածի վրայ յաճախ ընկնող թըռչան ձկներին տեսնելիս, արևադարձի զարմանահրաշ վերջալոյսերը հրաթաթախ ու արիւնաթաթախ ամպերի վրայ դիտելիս, գիշերուայ ֆոսֆորային պէծպէծումները, որոնցից ամբողջ ովկիա-

նոսը լուսաւորւում, լաւայի հրահոսան ծով էր դառնում, — այս երեսյթներընկատելիս նա չէր կարծում թէ ստոյգ օրեր են. այլ կարծում էր թէ այս բոլորը երազումն է տեսնում: Վատ եղանակներին մնում էր իւր խցի մէջ փակուած. այնտեղ ամեն ինչ օրօրուում, վեր ու վար էր թոչում. ամեն կողմից լուում էին գանգատ, ախ ու նի, անէծք և այլ սարսեցնող ձայներ: Մարկօն հաւատացած էր թէ իւր վերջի ժամը հասել է: Հետեւալ օրը ծովը հանգարտ էր և զեղնագոյն. միայն անտանելի շոք էր և տաժանելի ձանձրալի: Անվերջ տիսուր ժամերին քրտնքի մէջ պճպճող ուղևորները մնում էին սեղանների վրայ անշարժ պարկած, կարծես մեռեներ: Ճանապարհորդութիւնը կասես վերջ չունէր. միշտ ջուր ու երկինք, երկինք ու ջուր, այսօրը երեկուայ պէս, վաղն էլ կլինի ինչպէս այսօր, այժմ, միշտ և յաւիտեան: Երկար ժամերով նաւի ծնօտի տախտակի վրայ յենուած՝ դիտում էր անսահման ծովը, վշտահար և անհանգիստ սրտով մտածում իւր մօր վրայ, մինչև որ աչքերը յոգնելուց փակւում էին և թմրած զլուխը ուսերի վրայ կախ էր ընկնում: Քնի մէջ դարձեալ երեսում էր անձանօթ դէմքը, նրան ցաւակցութեամբ դիտում էր ու ականջին փափսում: — քու մայրը մեռած է: Այս ձայնի վրայ յանկարծ վեր էր թոչում, զարթնելով աչքերը բաց, ցնորքների մէջ պտըտում և անփոփոխ հորիզոնին նայում:

Քսան եօթ օր տեսց ճանապարհորդութիւնը, միայն ամենալաւը վերջին օրերն էին. ողանակը գեղեցիկ էր, օղը թարմ: Նա ծանօթացել էր մի բարի ծեր լոմբարդացու հետ, որ Ամերիկա էր գնում իւր որդուն տեսնելու. որդին երկրագործ էր, Բողարիօ քաղաքի մօտակայքում հաստատուած: Մարկօն իւր ընտանիքի մասին միասմի պատմել էր. ծերը ձեռով շուտ-շուտ նրա ծոծրակին խփում էր և ասում.—քաջ կաց, պստիկ, դու մայրիկիդ գտնելու ես ողջ առողջ:

Ծերի ընկերութիւնով նրա սիրու բացուեց, տխուր նախազգացումները չքացան: Նաւի առաջամասում ծեր գիւղացին չիրուխը փստացնելով քաշում էր. Մարկօն կողքին նստած, սիրուն աստղազարդ երկնքի տակ, երգող գիւղացիների խմբի մէջ.—հարիւր անգամ երևակայել էր մտքում, թէ հասել է Բուենոս-Այրես, տեսել է ցանկացած փողոցը, գտել է խանութը, վագել է գէպի ազգականը և ասել.՝ի՞նչպէս է մօրս առողջութիւնը, ո՞րտեղ է նա. եկէք հետս, ուզում եմ նրա մօտ գնալ: Նրանք վազում էին միասին, սանդուխով վերև բարձրանում. մի դուռ էր բացւում: Այստեղ գաղարում էր նրա մենախօսութիւնը, նրա երևակայութիւնը տեղի էր տալիս մի անասելի քնքոյշ զգացմունքի, վզից կախած փոքրիկ խաչը հանում էր դուրս, համբուրումէր և աղօթք մրմիջում:

Ուղեորութիւնից քսան եօթ օր անցած նըր-

բանք տեղ հասան. մայիսի մի պայծառ առաւօտ շոգենաւը խարիսխ իջեցրեց լայնածաւալ Ռիօ գէլա Պլատայի մէջ. դրա ափին էր փոռւած արգենտինեան հասարակապետութեան Բուենոս-Այրես մայրաքաղաքը: Սյդ սքանչելի եղանակը Մարկօյին թուաց մի բարեգուշակ նշան նրա ուրախութեանն ու անհամբերութեանը չափ չկար. մայրը նրանից միայն մի քանի մղոնով էր հեռու. քէչ ժամանակից ետ տեսնելու էր: Վերջապէս նա գտնուում էր Ամերիկայի պէս նոր աշխարհում և նու այնքան քաջասիրան էր, որ մենակ էր եկել այդտեղ: Անվերջ երկար ճանապարհը հալուել էր էլ չկար: Կարծում էր թէ քնած միջոցին թռել է և հէնց այս վայրկեանիս աչքան շատ էր, որ երբ գրպանները մանգալով քսակը չըգտաւ, նա ոչ զարմացաւ և ոչ տխրեց դրա վրայ: Խեղճն իւր չնշին գումարը երկու մաս անելով ջոկ-ջոկ էր փաթաթել, որ կորցնելուց ապահով լինի: Երկու փաթեթն էլ գողացել էին գրպանից. մօտը մնացել էր միայն մի քանի փրանկ: Դրա համար ինչու պէտք է դարդ անէր, չէ՞ որ մայրը մօտիկ էր: Տռպանկը ձեռին ուրիշ շատ իտալացիների հետ իջաւ մի փոքր շոգենաւ: Դա նրանց հասցրեց ափի մօտերքը. նաւից իջաւ մի մակոյկի վրայ, որ Անդրէա Դօրէա էր կոչւում, յետոյ նաւահանգստի թումբը ելնելով մնաս բարով ասեց իւր ծեր լոմբարդացի բարեկամին և շտապ քայլերով ուղեորուեց գէպի քաղաք:

Առաջին փողոցը հասնելուն պէս անցնող մարդուն կանգնացրեց և խնդրեց. — բորեկոմ, որ կողմով գնամ, որ Ֆէլօն Արտէս փողոցը հասնեմ: Նրա բախտից այդ մարդը իտալացի բանուոր էր: Տղին ոտից զլուխ աչքով չափեց ու հարցրեց. — Դու կարդալ զիտես: Տղէն զլխով տմբացրեց, այսինքն այս: — Երբ զիտես, լաւ, ասեց բանուորը, մատը մեկնելով այն փողոցի վրայ, որով ինքն էր եկել. — այսպէս գնա շարունակ դէպի վերև, տմեն մի անկիւնի վրայ փողոցների անունները կարդալով կըգտնես քու ուզածը: Տղէն շնորհակալութիւն արեց, առաջը բացուած փողոցը բըռնելով գնաց: Սա մի ուղիղ, անծայր և նեղ փողոց էր. երկու կողմից շարուած ցածրիկ, սիպտակ աներ, որոնք շատ նման էին ամարանոցների. անվերջ անց ու դարձ էին անում մարդիկ, կառքեր, բեռնասայլեր և ականջ խլացնող աղմուկ գոյացնում. օդում այս ու այն կողմ ծածանում էին գոյնզգոյն մեծ զրոշակներ, որոնց վրայ խոչը տառերով ծանուցուած էր շոգենաւերի այլ և այլ քաղաք մեկնելու ժամանակը: Մի փոքր տեղ գնացած՝ Մարկօն տեսնում էր աջ ու ձախ ուրիշ փողոցներ, որոնք ուղիղ ձգւում էին որքան մարդու աչքը կտրում է. նոյն ցածրիկ, սիպտակ աները երկու կողմից, էլի մարդիկ ու կառքեր տաք տաք գնում, գալիս էին. փողոցների ծայրերը կըտրուած էին ամերիկական անծայր դաշտավայրի ուղիղ գծով, կարծես ծովի հորիզոն, նրան թւում

էր թէ քաղաքը սահման չունի: Նա հաւատացած էր, որ եթէ օրերով, շաբաթներով ման գայ, շարունակ փողոցներ է տեսնելու. կարծես ողջ Ամերիկան դրանցով ծածկուած լինէր: Նա ուշադրութեամբ զիտում էր փողոցների անունները. ամենն օտար անուններ էին, դժուար էր կարդում: Ամեն մի նոր փողոց ընկնելիս սիրտն սկըսում էր տրոփել. մտածում էր՝ ահա իւր ուզածը սա է. բոլոր կանանց ուշի ուշով զիտում էր մտածելով՝ ահա որտեղ որ է, իւր մօրը կըհանգիպի: Մի կին նրա սիրտը շատ վեր թռցրեց, ետնից վազեց, մտիկ արաւ, տեսաւ մի ներքունի է: Հասաւ մի խաչմէրուկ փողոց, կարդաց ու մնաց մայթի վրայ շշմուած. դա հէնց «զեղարուեսների փողոցն» էր: Ծոռւեց այն կողմը, նկատեց 117 №. իսկ իւր ազգականի խանութի №-ը 175 էր: Քալերն արագացրեց, նա աւելի թռչկոտում էր քան թէ վազում. 171 №-ի մօտ ստիպուած էր կանգնել. որ շուտ առնի: Ինքն իրան ասում էր. — Ասի, մայրիկ ջան, միթէ ճշմարիտ է, որ մի քանի բոպէից քեզ տեսնելու իմ: Առաջ վազեց և եկաւ մի փոքր խանութի մօտ: Իսկ դա էր իւր ուզածը, ներս մտաւ, տեսաւ մի ակնոցաւոր պառաւ կին: — Ի՞նչ ես կամենում, այ տղայ, հարցրեց պառաւը իսպաներէն: — Արդեօք սա չէ ֆրանչեսկօ Մերելիի խանութը, ասեց տղէն հացիւ հազ խօսքերը արտասանելով: — Ֆրանչեսկօ Մերելին մեռած է, չկայ, պատասխանեց կին:

իտալերէն։ Տղին այնպէս թուաց թէ սրտին դաշնակ դիպաւ։ — Ե՞րբ է մեռել։ — Է՛, բաւական ժամանակ է. մի քանի ամիս կը լինի, ասեց կինը։ Գործր լաւ չէր գնում, կամեցաւ բախտը հեռու տեղ փորձել։ Ասում էին. նա Բահիա Բլանկա է գնացել և այնտեղ համելուն պէս մեռել է։ Այս խանութին ինձ է պատկանում։ | Տղի երեսի գոյնը թուաւ։ Յետոյ խօսքերն արագ վրայ տուեց. — Մերելին ճանաչում էր իմ մօրը. իմ մայրը ծառայում էր պարոն Յեգուինեցի տանը, միայն նա կարող էր ինձ ասել, թէ ուր գտնեմ մօրս։ Ամերիկա եմ եկել մօրս գտնելու համար։ Մեր նամակները Մերելին էր յանձնում մօրս։ Ես պէտք է մօրս ման զամ, փնդում։ — Խեղճ տղայ, խօսեց կինը, ինչպէս անենք, որ լաւ լինի. սպասիր, աշակերտիս հարցնեմ. նա ճանաչում էր Մերելիի սպասաւորին, շատ կարելի է այդ մասին նա բան իմանայ։ | Գնաց խանութի ետևի մասը և ձայն տուեց տղային։ Նա իսկոյն եկաւ։ Պառաւը հարցրեց. — Ապա ասա, յիշում ես Մերելիի պատանի սպասաւորին, որ երբեմն-երբեմն նամակներ էր տանում մի կողջ, որ Մեգուինեցի ատան ծառայում էր։ — Այն, ինչպէս չէ, տիկին, մի քանի անգամ եմ տեսել «զեղարուեստների փողոցի» ծայրին։ — Ա՛, շատ շնորհակալ եմ, բարի տիկին, գոչեց Մարկօն, ասեցէք ինձ տան № . . . միթէ չէք իմանում. ինձ մի առաջնորդ տուեք. հէնց

դու արի հետո, տղայ, ես դեռ գրանումս սոլդիներ ունեմ, քեզ կըտամ։

Եւ նա այս խօսքերն այնպէս զգացուած ասեց, որ աշակերտն առանց տիկնոջ թոյլուութեան սպասելու ասեց. — Գնանք և վոազ քայլելով առաջ ընկաւ։ Նրանք վաղէ-վազ առանց մի խօսք արտասանելու գնացին, հասան մի շատ երկար փողոցի ծայր։ Մի փոքր սիպտակ տան բակի դոնով ներս մտան և կանգ առան գեղեցիկ երկաթէ վանդակի առաջ, որի միւս կողմը մեծ քանակութեամբ ծաղկի պտուկներ կային։ Մարկօն գանգը քաշեց. մի օրիորդ երևաց։ — Այստեղ է ապրում Մեգուինեց ընտանիքը, չէ, հարցրեց տղէն վախվախելով։ — Ապրում էր այստեղ, պատասխանեց օրիորդը իտալերէն իսպանական շեշտով։ Այժմ մենք ենք ապրում այստեղ, մեր ազգանունն է Յերալլօս։ — Բայց ուր է գնացել Մեգուինեց ընտանիքը, հարցրեց Մարկօն սրտատրով։ — Կորդովա է գնացել։ — Կորդովա, գոչեց Մարկօն. որտեղ է այդ Կորդովան, Հապա այն կինը որ նրանց մօտ ծառայում էր, նա էլ է գնացել։ Նրանց այդ աղախինը իմ մայրն էր. միթէ մայրիկիս էլ են հետները տարել։

Օրիորդը դիմեց տղային և ասեց. — Ես այդ չպիտեմ. կարելի է հայրս իմանայ, նա ընտանիքին առաջուց ծանօթ էր. մի վայրկեան սպասեցէք։

Նա գնաց ու շուտ վերադարձաւ իւր հօր հետ, որ մի սիպտակամօրուս, բարձրահասակ

պարոն էր: Սա մի վայրկեան նայեց շիկահեր և
և արծուաքիթ գենուացու դռւրեկան պատկերին
և հարցըեց գուեհիկ իտալերէնով.—քու մայրը գե-
նուացի է: Մարկօն ասեց: —Այս: —Գենուացի աղա-
խինը նրանց հետ գնաց, այդ ես հաստատ գիտեմ:
—Ո՞ր կողմն են գնացել: —Մի քաղաք, որի անունն
է Կորդովա:

Տղէն հառաչեց և յետոյ խոնարհութեամբ
վրայ բերեց. —ինչ արած, ես էլ նրա ետնից կը
գնամ կորդովա: —Խեղճ տղայ, գոչեց պարոնը
նրան կարեկցութեամբ դիտելով, կորդովան հա-
րիւրաւոր մղոններով հեռու է այստեղից:

Մարկօն մեռելի պէս սփարթնեց և մի ձեռով
յենուեց երկաթէ վանդակին: —Սպասիր, տեսնենք,
սպասիր, տեսնենք, ասեց պարոնը կարեկցաբար և
բաց արեց դուռը. Մի բոպէ ներս արի, տեսնենք,
ինչ հնար կարելի է գտնել:

Նա նստացրեց, պատմել տուեց՝ ինչ որ
գլխովն անց էր կացել, լսեց նրան ուշի-ուշով. մի
քիչ լուս մնալուց ետ հարցըեց կարճ. —փող ու-
նես, թէ չէ: —Մի քիչ ունեմ, պատասխանեց Մար-
կօն: Պարոնը կրկին մի հինգ բոպէ լոեց, յետոյ
նստեց սեղանի մօտ, մի նամակ գրեց, փակեց և
տղային տալով ասեց. —Լսիր, փոքրիկ իտալացի,
այսնամակով դու կը գնաս Բոկա, դա մի փոքր, կէս
գենուական քաղաք է, երկու ժամուայ ճանապարհ
այստեղից հեռու: Ամեն մինը կարող է քեզ ճա-
նապարհը ցոյց տալ: Գնա այնտեղ և փնտովիր այն

պարոնին, որին այս նամակը գըել եմ: Ամենը
նրան ճանաչում են: Յանձնիր նրան այս նամակը.
նա հոգ կըտանի, որ դու վաղն և եթ թողարիօ
քաղաքն ուղեկորուես. այնտեղ էլ մի մարդու կը
յանձնարարի, որ հնար տայ քեզ մինչև կորդովա
ճանապարհդ շարունակես Այդտեղ Աստծօվ կը-
գանես թէ Մեքուինեց ընտանիքին և թէ մայր-
կիդ: Առայժմ վերցրու այս: | Նրա բուան մէջ դրեց
մի քանի ֆրանկ: —Գնա, քաջ կաց, ամեն տեղ
հայրենակիցներ կը գտնես, անօգնական չես մնալ:
Գնաս բարով:

Տղէն պատասխանեց. —շնորհակալ եմ: | Ել
ուրիշ խօսք չգտաւ, դուքս եկաւ առպրակն ու-
սին: Իրան ուղեկցող տղային մնաս բարով տաե-
լուց ետ ճանապարհ ընկաւ ծանր քայլերով դէպի-
Բոկա. սիրտը տխուր էր, բայց մնացել էր զար-
մացած այդ հոյակապ, աղմկալի քաղաքի վրայ,
որի փողոցները կտրելով անց էր կենում:

Այդ բոպէից մինչև հետեւեալ օրուայ երեկոյ
պատահած բաները մասամբ խառնուշիոթ էր
տպւում նրա յիշողութեան մէջ, մասամբ էլ լու-
սում անցնում էին ինչպէս ջերմուտի զառանց-
ներ, այնքան նա յոգնած, վախակալած, վրդովու-
ած ու լքուած էր: Գիշերը նա քնել էր Բոկայում
մի կեղտոտ սենեակի մէջ նաւահանգուտի բեռնա-
կիրներից մէկի կողքին, յետոյ ամբողջ օրը գե-
րանների վրայ նստած, ինչպէս երազում դիտում

Էր իւր առաջով անցնող հ սպարաւոր մեծ նաւերը, մակոյկները և փոքր շոգենաւերը: Հետևեալ օրը գիշերհանայ գտնուում էր մըզերով բեռնած մի առագաստանաւի վրայ, որ գնում էր Ռոզարիօ: Նրա թիավարներն էին երեք ուժեղ, արևակէզ գենուացիք: Հայրենակիցների ձայնը և սիրելի բարբառը, որով խօսում էին, նրա սիրու քիչ միտիթարեցին:

Նրանք ուղեորուեցին. ճանապարհորդութիւնը քաշեց երեք օր ու չորս գիշեր և մեր փոքրիկ ուղեորին կատարելապէս ապշեցրեց. ամբողջ երեք օր և չորս գիշեր այս զարմանալի Պարանա գետի վրայ էր, որի համեմատութեամբ մեծ Պօ գետը սոսկ մի առուակ է. նրա ընթացքի լայնութիւնը շատ տեղ կարող էր իտալիայի լայնութիւնից աւելի լինել: Նաւը գնում էր ծանր ու բարակ այն լայնարձակ ջրէնրապարակով վերև: Գնում էին երկար ու մէկ ձգուած կղզիների կողերով, որոնք երբեմն օձերի ու վագրերի ողջեր են եղել և այժմնարնձի և ուռի ծառերով ծածկուած, ջրերի մէջ լողացող անտառների էին նմանուում: Երբեմն մտնում էին այնպիսի նեղ ջրանցքներ, որոնցից դուրս գալու ամենեին յոյս չկար, երբեմն ընկնում էին այնպիսի ընդարձակ ջրամասեր, որոնք տեսքով մեծ, հանգիստ ծովի էին նմանուում: Յետոյ կրկին մըտնում էին կղզիների արանքը, նեղ ոլորապառյա ջրանցքների մէջ, անվերջ թանձր անտառների

ծոցը: Խոր լոռութիւն էր տիրում ամեն կողմ. որքան առաջ էին գնում, այնքան Մարկօն վախ էր զգում այդ լայնասպիւռ գուտից. նա երևակայում էր, թէ իւր մայրը գետի ակների մօտ է գտնուում և մինչև այստեղ համնելը մի տարի է քաշելու: Օրէնը երկու անգամ մի քիչ հաց ու ապուխտ էր ուտում թիավարների հետ: Նաւի մարդիկը նրան տխուր տեսնելով ամենկին չէին խօսեցնում: Գիշերները քնում էր չոր տախտակամածի վրայ և շատ անգամ յանկարծ զարթնում, զարհուրած լուսնի պայծառ շողերից. որ լուսաւորում էր անհուն ջրերը և հեռաւոր ափերը: Կորդովան յիշելիս սիրաը կծկում էր, անդադար կրկնում էր այդ անունը. Կորդովան թւում էրնրան այն հրաշալի քաքարներից մինը, որոնց մասին լսել էր հէքեաթներում: Յետոյ մտածում էր ինքն իրան. — իմ մայրը այս տեղերով անցել է, այս կղզիները, այս ափերը տեսել: | Նրանից ետ այն տեղերը, որոնց վրայ իւր մօր հայեացը կանգ էր առել, նրան օտար, անհրապոյր չէին թւում...: Գիշերուայ ժամին նաւորդներից մինը երգում էր. այդ ձայնը յիշեցնում էր այն երգերը, որոնցով մայրն իրան մանուկ ժամանակ օրօրել, քնացրել էր: Վերջին գիշերը այս երգի հնչիւնները լսելիս լաց եղաւ: Նաւորդը ընդհատեց իւր երգեցողութիւնը և բարձրաձայն ասեց.— Քաջ կաց, այ տղայ: Սատանէն նզովուի, միթէ գենուացին լաց կրինի տանից հեռանալու պատճառով: Գենուացիք աշ-

խարհի տակից տալիս են, գլխում դուրս դալիւ
փառքով ու յաղթանակով:

Այս խօսքերից Մարկոյի կուրծքը լայնացաւ,
զգաց, որ գենուական արիւն է հոսում իւր երակ-
ներում: Կոռուփով խփելով թիակին ճակատը գո-
ռոգութեամբ բարձրացրեց.— Արդար է ասում,
խօսեց ինքն իրան, եթէ կարիք լինի ամբողջ աշ-
խարհը տակ ու զլուկա անել, տարիներով ճամ-
բորդել, հարիւրաւոր մղոններ ոտով շրջել, առանց
երես թեքելու կը զնամ, մինչև մայրիկիս զըտ-
նեմ: Թող շունչս կտրուելիս տեղ համսեմ ու նը-
րա ոտների առաջ մենամ: Միայն թէ նրան մի
անգամ, մի հատիկ անգամ տեսնեմ: Միլտ առ,
Մարկօ:

Այսպէս ոգեսրուած մի արեշող առաւօտ հա-
սաւ Պարանայի բարձր ափին տեղաւորուած թո-
գարիօ քաղաքը, որի ջրերի մէջ ամեն երկրների
հարիւրաւոր նաւերը զըուշագարդ կայմերով ար-
տացոլում էին: Ժամանակ չկորցրեց, նաւից իջ-
նելուն պէս տոպրակը ձեռին շտապեց քաղաք
արգենտացի պարոնին գտնելու, որի վրայ բոկա-
ցի հովանաւորից մի յանձնարարական տոմսակ
ունէր: Իոդարիօ մտնելիս թուաց թէ արդէն մի
ժանօթ քաղաք է եկել: Դարձեալ նոյն անվերջ,
ուղիղ փողոցները. նոյն ցածլիկ, սոլիտակ տնե-
րը երկուստէք. կտրների վրայով ամեն ուղու-
թեամբ հեռազրի ու հեռախօսի թելեր էին մեկ-
նած, կարծես ահագին սարդի ոստայն. ամեն

կողմլսելի էր մարդկանց, ձիաների, կառքերի սաս-
տիկ աղմուկ ու զրգուց: Նրա ուշադրութիւնը ցըր-
ւում էր. կարծում էր թէ դարձեալ Բուենոս-Այ-
րեսի մէջ է և իւր ազգականին է փնտռում: Մի
ամբողջ ժամ գէս դէն ման եկաւ, շուռմուռ տուեց,
կարծում էր թէ նոյն փողոցներն է վերադառ-
նում, շատ հարց ու փորձից ետ վերջապէս գը-
տաւ իւր նոր հովանաւորի տունը: Զանգը քա-
շեց, գուան շէմքում երեաց բարձր, շէկ, մաղ-
ձոտ մարդ, որ կառավարչի տեսք ունէր. անքա-
ղաքավարի և օտար առողանութեամբ հարցրեց.
— Ումն ես կամենում: | Տղէն ասեց պարոնի ա-
նունը: Կառավարիչը պատասխանեց.— Քու ու-
զած պարոնը երէկ իրիկուն ողջ ընտանիքով
Բուենոս-Այրես ուղկորուեց:

Տղէն մնաց պապանձուած: Յետոյ թոթովեց.
— Բայց ես... ես այսեղ ոչ ով չունեմ, մեն
մենակ եմ: | Այս ասելով տոմսակը տուեց նրան:
Կառավարիչը կարդաց և մաղձութեամբ վրայ
բերեց.— Ես ոչինչ անել չեմ կարող. մի ամսից
ետ վերադառնաւու է, եթէկուզես այս տոմսակը նը-
րան կրտամ:— Բայց ախը ես մենակ եմ, կարիք
ունեմ, գոչեց Մարկօն աղերսալի ձայնով:— Այդ
բոլորովին իմ զործ չէ, ասեց կառավարիչը, քու
երկրից թափառականներ քիչ էին Իոդարիօյում,
դու էիր պակաս: Գնա, քաշուիր իտալիա և այն-
տեղ մուրացկանութիւն արա:

Այս ասելով դուռը քթի առաջնկակեց: Տղէն

մնաց քարացածի պէս կանգնած։ Քիչ յետոյ սուս փուսվերցրեց իւր տոպրակը, փշրուած սրտով հեռացաւ այդ տանից, յուղուած, հազարաւոր դառն մտքերով պաշարուած։ Ի՞նչ անէր, ուր գնար, ինքն էլ չգիտէր։ Իոդարիօյից մինչև կորդովա երկաթուղով մի օրուայ ճանապարհ էր, զրպանում նա միայն մի քանի ֆրանկ ունէր։ Այսօրւայ ծախսերը հոգալուց ետ մօտը բան չէր մնալ։ Ո՞րտեղից փող գանէր ճանապարհածախսի համար։ Նա կարող էր աշխատել, բայց ի՞նչպէս, աշխատանք գտնելու համար ում դիմէր։ Մուրացկանութիւն անի։ Այս, ոչ, կը հայիոյեն, կը նուստացնեն, դուռն այնպէս կը փակեն ինչպէս քիչ առաջ եղաւ։ Ո՞չ, ամենաին, մեռնեն աւելի լուէ։ Այս մտածելիս երբ կը կին նայեց երկար փողոցի վրայ, որի ծայրը գնում էր անհուն դաշտավայրում կորչում, զգաց որ ոտները թուլացան, սիրաը պակասեց, տոպրակը գցեց մայթի վրայ, նստեց վրէն, մէջքը պատին յենած, երեսը ձեռներով ծածկեց։ Նա չէր լալիս, այլ լուռ մտածում էր իւր յուսահատ վիճակի վրայ։

Անցուղարձ անող մարդիկ դիպչում էին նըրան ոտներով, կառքի դղրդոցից փողոցը թնդում էր. մի քանի մանուկներ լուռ կանգնել, նրան էին դիտում։ Այսպէս նստած մնաց մի առժամանակ։ Յանկարծ մի ձայնից ցնցուեց։ Այդ ձայնը իտալերէն ու լոմբարդերէն խառը հարցնում էր.

—Այս դու ես, իմ պուճուր, ի՞նչ ես անում։

Այս խօսքի վրայ Մարկօն ձեռները հեռացրեց դէմքից ու վեր ցատկելով տեղից դոչեց։ — Դուք այստեղ և ի՞նչպէս նեղ միջոցին վրայ հասաք։

Սա ծեր լոմբարդացի գիւղացին էր, որի հետ ծովի վրայ ծանօթացել էր։ Դիւղացու զարմանքն վրա վրայ աւելի էր գալիս, բայց աղէն անհամբեր էր, հարցնելուն չսպասեց, վռազ վռազ պատմեց նրան իւր գլխի եկածները։ — Այժմ մնացել եմ առանց փողի, աշխատել եմ ուղում, ինձ համար գործ գտէք, որ կարենամ մի քանի ֆրանկ վաստակել։ Ես ամեն բան կարող եմ անել, բեռ կրել, փողոցներ սրբել, յանձնարարութիւններ կատարել, նոյնպէս դաշտում բանել, գոհ կը մնամ մենակ սև հաց ուտելով, միայն թէ կարենամ շուտ ճանապարհ ընկնել, ժամ առաջ իմ մայրիկին գտնել։ Լաւութիւն արէք, գործ, գործ գորտէք ինձ համար, թէ Աստուած կմիրէք, թէ չէ կորած եմ։ — Սատանի աչքը գուրս գայ, խօսեց գիւղացին չորս կողմ աչք ածելով և կզակը բռրելով։ Այս ի՞նչ բաներ ես պատմում... գործ գտնելը հեշտ բան չէ. սպասիր, տեսնեմ, արդեօք չի կարելի այսքան երկրացիների մէջ մի երեսուն ֆրանկ ճարել։

Տղէն նայում էր ծերի վրայ յոյսի շողով կարդուրուած։

— Արի հետս, ասեց գիւղացին։ Ո՞ւր ես

գնում, հարցը եց տղէն տոպրակը խտաելով։ Գիւղացին գնում էր, Մարկօն նրա ետևից։ Երկուսով բաւական տեղ գնացին անխօս, անմռունչ։ Գիւղացին կանգառաւ մի պանդոկի առաջ, որի ցուցանակի վրայ գրած էր «Խտալիայի աստղ»։ Նա զլուխը վրա մեկնեց և դէպի տղէն դառնալով ցնծաղին ասեց. — շատ լաւ ժամանակին եկանք։

Մտան մի մեծ սենեակ, ուր բազմաթիւսեղանների շուրջը շատ մարդիկ նստած խմում ու բարձր բարձր խօսում էին։ Ծեր լոմբարդացին մօտեցաւ առաջին սեղանին և այնտեղ նստող վեց հոգուն ողջունեց։ Հանդից երեաց, որ քիչ առաջ նրանց ընկերութեան մէջ է եկել. կարմրած երեսնելով բաժակները չըլխկացնելով բարձրածայն զրոյց էին անում ու ծիծաղում։ Ծերը Մարկօյին ներկայացնելով՝ առանց այլեայլի ասեց. — ընկերներ, ահա ձեր առաջ մի աղքատ տղայ, մեր երկրացի, որ Գենուայից մինչև Բուենոս-Այրես եկել է իւր մօրը փնտուելու համար։ Բուենոս-Այրեսում նրան ասել են. — մայրդ այստեղ չէ, Կորդովա է գնացել։ Նաև է նստել երեք օր. չորս գիշեր ճանապարհ կտրելով Ռոզարիօ եկել երկուող յանձնարարականով. նա յանձնել է տոմսը, նրան թթու երեսով են ընդունել։ Նա ոչ մի չենիցիմո (փոքրիկ գրամ) չունի, նա այստեղ հասել է յուսահատութեան դռանը, բայց գիտէք թէ ինչ սրտի տղայ է։ Եկեք մեր մէջ փող ժո-


ղովենք, տոմսակ առնենք, նրան կորդովա ճամբու գնենք, որ մօրը փնտոի։ Միթէ ամօթ չէ մեզ, որ թողենք նրան իբրև շուն այստեղ վէր ընկնի։ — Ո՞չ երեք, Աստուած վկայ, ամօթ է։

— Մեղանից ոչ ոք այդպիսի բան չի կարող ասել, գոչում էին բոլորը միասին և կոռովիներով սեղանին խփում։ — Միթէ դա մեր երկրացի է։ — Արի այստեղ, պուճուլիկ։ — Մենք էլ քեզ պէս զաղթականներ ենք։ — Տես, ինչ սիրուն տղայ է։ Դէ, ով չենափիմի ունի, ընկերներ, թող հանի։ — Կեցցես, մենակ է եկել, ինչ սրտոան է։ — Խմիր մի կում, մեր երկրի մանուկ։ — Մի վախենալ, մենք քեզ պէտք է քո մայրիկի մօտ ուղարկենք։

Մէկը մատով նրա թուշը կմշտեց, միւսը ձեռը նրա ուսին դրեց, երրորդը տոպրակը նրա ուսից վերցրեց, ուրիշ գաղթականներ վեր կացան կողքի սեղաններից և մօտկացան։ Տղայի պատմութիւնը պանդոկի մէջ բերանէ բերան անցաւ։ Կից սենեակից երկու արգենտացի մարդիկ խանունուեցին նրանց։ Մի տաս ըոպէի մէջ ծեր լոմբարդացին զգակ պտտեցնելով քառասուն չորս ֆըանկ ժողովեց։ Դանալով Մարկօյին ասեց. — տեսնում ես թէ Ամերիկայում մի գործ ի՞նչպէս է շուտ զլուխ գալիս։

Մի ուրիշը բաժակը նրան մեկնելով կանչում էր. — Խմիր քու մայրիկի կենացը. | Ամենն էլ բաժակները բարձրացրին։ Մարկօն ևս ուղում էր կրկնել հետները — ի՞մ. . . բայց չկարաց խօսքը վեր-

ջացնել, ուրախութեան արտասուքը նրա կոկորդը
բռնեց, բաժակը սեղանին դնելով, փաթաթուեց ծե-




բռնու վզով և լաց եղաւ:
Հետեւալ առաւօտինդումներես, համարձակ, բախ-

դաւոր նախազգացումով լիք ուղեռուեց դէպի
կորդովա: Բայց չկայ այնպիսի ուրախութիւն, որ
կարենայ բնութեան տիսուր պատկերին դիմանալ:
Եղանակը չանդ էր ու մառախլապատ, գնացքը
համարեա կարդակ սլանում էր ընդարձակ ա-
մայի դաշտի միջով: Մարկօն մենակ էր մի մեծ,
շատ երկար շոգեկառքի մէջ, շատ նման վիրաւոր-
ներին յատկացրած կառքերին: Աջ ու ձախ նա-
յեց, բացի անսահման ամայութիւնը ոչինչ չտե-
սաւ, ուր ցիր ու ցան կանգնած էին փոքր, տճկ
ծառեր, ծուռ մուռ բներով ու ճներով, որոնց
նման երբէք չէր տեսել: բուսականութիւնը նոյն-
պէս աղքատ ու թխագոյն, դաշտավայրին տալիս
էր մի անվերջ հանգստարանի տեսք: Մի կէս ժամ
ննջում էր ու դարձեալ այն կողմը նայում: միշտ
նոյն տեսարանն էր: Երկաթուղու կայարանները
այնպէս ամայի էին, և արծես ճգնաւորների կացա-
րաններ: գնացքը կանդ առնելիս ոչ մի ձայն չէր
լսւում: Երկաթուղու գնացքի մէջ նա իրան հա-
մարում էր կորած և անապատի մէջ թողնուած:
Ամեն մի կայարան հասնելիս կարծում էր թէ
վերջինն է և նրանից ետ գալու է վայրենիների
խորհրդաւոր, սարսափելի երկիրը: Սաոցանման
պաղ օգը փչում էր նրա երեսին: Գենուայից
ապրիլ ամսին դուրս գալիս հայրը ամառուայ շոր
էր հագցրել: Ի՞նչ կըկարծէր թէ տղէն Ամերիկա-
յում ձմեռ կը տեսնի: Մի քանի ժամ չանցած ըս-
կեց ցրտից դողդողալ: ցրտի հետ զգաց և խիստ

յոգնածութիւն, որ հետևանք էր անցած աղմկայոյդ օրերի, անքուն ու տագնապոտ զիշերների: Նա քնեց, բաւական երկար քնեց. զարթնելիս տեսաւ, որ ցըտից սառել, փետացել էր: Զգաց որ լաւ չէ: Սիրտն ահ ընկաւ, չինի թէ տկարանայ ու ձանապարհորդութեան միջոցին մեռնի, այս ամայի տխուր դաշտավայրում դէն գցուի, չներն ու ագռաւները գան նրա դիակը քըքըեն ձիաների ու կովերի դիակների պէս, որոնց նա կայարանին մօտիկ թափոտուած տեսել էր և սոսկումով երեսը շուռ տուել: Տկարանալու երկիւղից կը կնապատկուեց նրա վրդովմունքը, բնութեան մռայլ անդորրութեան շնորհով զըգուռեց նրա երեակայութիւնը և նա կորաւ Անհունի մէջ: Ճիշտ էր արդեօք, որ կորդովայում նա տեսնելու էր իւր մօրը: Վայ թէ նա այնտեղ չլինէր: Եթէ «գեղարուեստների վողոցի» վրայ ապրող պարոնը սիալուած լինէր. իսկ եթէ մայրը մեռած լինէր:

Այս մտածմունքներով նա քնի ծոցը մտաւ. երազում թուաց, որ նա արդէն կորդովա է ու բոլոր դոներից ու լուսամուտներից նրան ձայն են տալիս, — նա այնտեղ չէ, նա այնտեղ չէ: Մարկօն սարսափած զարթնեց և տեղից վեր թռաւ, տեսաւ շոգեկառքի խորքում երեք միրուքաւոր մարդիկ, գունաւոր շալի մէջ փաթաթուած նրան դիտում էին և իրար մէջ կամաց փսփսալով խօսում: Մարկօն կարծեց, որ նրանք մարդասպաններ են, նրան ուզում են սպանել, որ տոպ-

քակը գողանան: Ցըտին, տկարութեանը ընկե-



բացաւ այժմ և երկիւղը. վախակալած երեակա-

յութիւնը տուեց, ամեն սահման անց կացաւ.
Նրա աչքին երևում էր, որ այն երեք մարդիկը
նրան շարունակ դիմում են. ահա մէկը նրանցից
յարձակուեց վրէն։ Մարկօն խելքը կորցրած, թե-
ւերը բարձրացրած, դէպի նա վագելով աղաղա-
կեց. — Ես ոչինչ չուեմ, ես մի աղքամ տղայ եմ,
գալիս եմ իտալիայից և գնում եմ մայրիկիս ո-
րոնելու, ես մենակ եմ, փւաս միք տալ ինձ։

Նրանք իսկոյն հասկացան բանն ինչումն է.
կարեկցութիւն ցոյց տալով գուրգուրեցին, հան-
դարտեցրին։ Նրանց ասածը չէր կարողանում
հասկանալ. ցրտից վրվթում, անլամներն իրար
էր խփում։ Մարդիկն իրանց շալը զցեցին նրա վրայ
և ասին, որ քնի։ Նա մինչև մութ ընկնելը քնեց։
Նրան զարթեցրին այն ժամանակ, երբ արդէն
կորդովա էին հասել։

Ա՛հ, ինչպէս ազատ կրծքով շունչ բաշեց
նա և ինչպէս արագութեամբ դուրս թռաւ շո-
գեկառքից։ Կայարանի պաշտօնեային մօտենուվ
հարցրեց. — Խնդրեմ ասէք, ո՞րտեղ է քնակւում
ճարտարապետ Մեղուինեցը։ | Նա մի եկեղեցու
անուն տուեց։ Մարկօն իսկոյն ծլկեց այն կող-
մը. Մութն էր. հասաւ քաղաք ու կարծեց թէ
երկրորդ անգամ Ռոգարիօ է եկել, երբ ուղիղ
փողոցները, երկու կողմից փոքր, սպիտակ տը-
ները տեսաւ. այդ փողոցները կտըրտւում էին
ուրիշ աւելի ուղիղ ու երկար փողոցներով։
Բայց փողոցների մարդիկը քիչ էին, սակա-

ւաթիւ լապտերների լուսով նկատում էր օտա-
րոտի դէմքեր անծանօթ գոյնի, սեի ու կանաչի-
մէջտեղը։ Գլուխն այս ու այնկողմ դարձնելիս պա-
տահում էր տարօրինակ ձևի տաճարների, որոնք
անչափ մեծ էին և կատարները երկնքում սեին
էին տալիս։ Քաղաքը մութ էր և լուռ, սակայն
այնքան ընդարձակ անապատներն անցնելուց ետ-
քաղաքն երեաց նրան զուարթ։ Մի քահանայի
դիմելով գտաւ եկեղեցին ու տունը, մի դողդո-
ջուն ձեռով զանդակի լարը քաշեց, միւս ձեռը
դրեց կրծքի վրայ, որ ուժգին տրոփող սիրտը
հանգստացնի։

Մի պառաւ մի մոմ ձեռին եկաւ դուռք բաց
արեց։ Մարկօն չկարողացաւ խսկոյն խօսել։ — Ում
ես որոնում, հարցրեց պառաւն խսպաներէն։
— Ճարտարապետ Մեքուինեցին, ասեց տղէն։ Պա-
ռաւը ձեռները կրծքին զարսելով, գլուխն օրօրեց
և խօսեց. — Ուրեմն դուռ էլ ես ճարտարապետ Մե-
գուինեցին կամենում։ Տէ՛ր ողորմած Աստուած,
երբ պէտք է վերջանան այս հարցմունքները։ Ե-
րեք ամիս է, գնացող եկողները մեզ ձանձրացրին.
Կարծես բաւական չէ լրազիրներում յայտարա-
րելը, պէտք է փողոցների պատերին էլ կպցնել,
թէ պարոն Մեգուինեցը Տուկումանումն է ապ-
րում։

Տղէն մի յուսահատ շարժում արեց, յետոյ-
խելքը կորցրածի պէս բացականչեց. — Այս ինչ-
նզովք է, որ գլխիս ձանրացած է։ Միթէ ես

փողոցներում թափառելով պէտք է մեռնեմ առանց
մայրիկիս տեսնելու։ Ես կը գժւեմ. աւելի լաւ է
ինձ սպանեցէք։ Ա՛խ Աստուած։ Ի՞նչպէս է այն
քաղաքի անունը, ո՞րտեղ է, ո՞րքան է հեռու
այստեղից։—Ա՛, խեղճ տղայ, խօսեց պառաւը
զթաշարժուելով, այնքան հեռու չէ այստեղից,
շատ որ լինի, չորս հինգ հարիւր մղոն հազիւ
կը լինի։

Տղէն երկու ձեռը երեսին դրեց, հեկեկաց
ու խօսեց. — Այժմ... Բ'նչ անեմ ես։ — Ի՞նչ ա-
սեմ. խեղճ տղայ, ես էլ չը գիտեմ, պատասխա-
նեց պառաւը։ Բայց քիչ յետոյ յանկարծ գլխով
բան անցկացաւ, արագ վրայ բերեց. — Լսիր, տը-
ղայ, մի բան յիշեցի. գնա այսպէս փողոցի աջ
կողմը, վրայ երրորդ դռւուը մի բակ կըպատա-
հի, այնտեղ մի «կապատաց»՝ վաճառական կայ.
վաղը նա իւր եզնասայլով Տուկուման է ուղեր-
ւում։ Գնա, տես, կարելի է քեզ հետը վեցնի,
եթէ խոստանաս նրան ծառայութիւն անել, մի
տեղ կը տայ քեզ իւր սայլերի վրայ։ Շուտ վա-
զիր մօտը։

Տղէն տոպրակը վերցրեց, վոազ վոազ շնոր-
հակալութիւն արեց և երկու բոպէի մէջ հասաւ
լապտերներով լուսաւորուած մեծ բակ, ուր բազ-
մաթիւ մարդիկ զբաղուած էին մրգի տոպրակնե-
րը ահազին սայլերի վրայ բարձելով, որոնք ի-
րանց կլոր ծածկոցով և խիստ բարձր ակներով

նման էին լարախաղացների շարժուն տներին։
Ամենին բան ու գլխու էր դնում մի բարձր,
բեխաւոր մարդ, ուսերին սև ու սիպտակ շերտե-
րով թիկնոց զցած, ոտներին երկար կոշիկներ
հազած։ Տղէն մօտեցաւ նրան և վախվախելով
հարցրեց. — Արդեօք ինձ Տուկուման չէք տանիլ,
ես իտալիայից եմ գալիս և մօրս եմ վինտոում։

Կապատացը, որ նշանակում է կարաւանի
զլսաւոր, ոտքից զլուխ նրան աչքով չափեց ու
սառնասիրտ պատասխանեց. — Ոչ մի ազատ տեղ
չունեմ։ — Տանուհինգ ֆրանկ փող ունեմ, խօսեց
տղէն աղերսալի ձայնով, այդ բոլորը ձեզ կըտամ,
բացի այդ ճանապարհին ինչ ծառայութիւն ասէք,
կը կատարեմ, ջուր կը բերեմ, եզներին կերա-
կուր կըտամ, ամեն տեսակ ծառայութիւն կա-
նեմ։ Կտոր հացն ինձ բաւական է, աղաչում եմ,
ողործած պարոն, մի տեղ տուէք ինձ ձեր սայլի
վրայ։

Կապատացը նրան կրկին աչքով չափեց և
քաղցր կերպով առեց. — Առաջին որ տեղ չկայ...
երկրորդն էլ մենք Տուկուման չենք գնում, ու-
րիշ բաղաք ենք գնում, նա կոչւում է Սանտիագօ
դէլ Խստերօ։ Ճանապարհին որևէ է տեղ քեզ մենակ
ենք թողնելու և դու պէտք է ահազին տեղ ո-
տով գնաս։ — Ա՛խ, երկու այնքան էլ լինի, կըգը-
նամ, գոչեց Մարկօն։ Ես կըգնամ, դրա վրայ հոգս
մի անէք. ինչ կերպ էլ լինի, տեղ կը հասնեմ,
միայն ինձ մի փոքր տեղ տուէք, պարոն, իսէր

Աստծու։ Թէ Աստուած կը սիրէք, ինձ այստեղ
մենակ մի թողէք։—Այ աղայ, միտք արա, քը-
սան օրուայ ճանապարհ է, հանար բան չի։—
Վնաս չկայ։—Ճանապարհին չափազանց դժուա-
րութիւններ կան։—Հոգ չէ, ամեն բանի կը համ-
բերեմ։—Յետոյ դու պէտք է երկար տեղ մենակ ո-
տով գնաս։—Ոչ մի բանից չեմ վախենում, միայն
թէ կարենամ մայրիկիս գտնել։ Գութ ունեցէք, ա-
ղաչում հմ։

Կապատացը լապտերը մօտ պահեց նրա գէմ-
քին և դիտեց։ Յետոյ ասեց։—Լաւ, արի։ | Տղին
վրայ թուաւ, նրա ձեռքը համբուրեց։—Այս գի-
շեր դու կը քնես այս սայլի մէջ, ասեց Կապա-
տացը մատովցոյց տալով, առաւօտը վաղ չորս
ժամինես կը գամքեղ զարթեցնելու։ Բարի գիշեր։

Առաւօտ չորս ժամին աստղերի լուսով սայ-
լերի կարաւանը շարժուեց մեծ ճռոցով ու գրո-
գոցով։ Ամեն մի սայլի վրայ վեց եղն էր լծած.
յողնող եղները փոփոխելու համար գնացքի ետ-
նից տաւարի ահազին նախիր էր զնում։ Մար-
կօն սայլի վրայ կէս զարթուն էր, կարաւանը
ձամբայ ընկնելուն պէս տոսլրակների վրայ կըր-
կին նղղեց ու քնեց։ Երբ նա աչքը բաց արեց,
կարաւանը կանգնած էր մի ամայի տեղ։ Սայ-
լապանները չորս ու բոլոր նստեցին մի քառորդ
հորթի շուրջ, որ բացօթեայ գետնում ցցուած
երկար շամփուրի վրայ խորովում էր. կրակը
քամուց վովոալէ բարձրանում էր։ Նրանք կե-

րան միատեղ, քնեցին և դարձեալ շարունակեցին
ճանապարհը։ Ուղևորութիւնը այնպէս կանոնա-
ւոր առաջ էին տանում, ինչպէս մի զինուորա-
կան արշաւանք։ Ամեն առաւօտ հինգ ժամին
տեղներից շարժուում էին, ինն ժամին կանգ առ-
նում հանգստանալու, երեկոյեան հինգ ժամին
ճանապարհը շարունակում, որ տաս ժամին դար-
ձեալ հանգստանան։ Սայլապանները ձիու վրայ
էին, եղներին քշում էին երկար մտրակներով։
Մարկօն կրակ էր անում խորովածի համար, տա-
ւարին կերակրում էր, լապտերները մաքրում,
խմելու ջուր բերում։ Երկրի մասը, որով անց-
նում էին, տղի վրայ խառնուշփոթ տպաւորու-
թիւն էր անում. ընդարձակ անտառներ մանր,
թխաւոն ծառերով, կէնդ ու մէնդ շէներ, ցիր ու
ցան տներով, ճակատները կարմրագոյն և ատամ-
նաձկ։ Ինչքան որ մարդու աչքը կը կտրի, տա-
րածուած էին մեծ դաշտավայեր, մակերեսը սը-
պիտակ, կարծես աղ ցանած։ Երկի մի ժամա-
նակ աղտոտ ծովի յատակ էին եղել։ Ամեն կող-
մի վրայ անվերջ դաշտավետիններ-ամայութիւն,
լոռութիւն։ Շատ հազիւ պատահում էին երկու կամ
երեք ձիաւոր ճամբորդներ, որոնց ետևից քաջքա-
քամու պէս թռած զնում էր տկլոր ձիաների մի ջոկ։
Օրերն անցնում էին բոլորովին իրար նման ինչ-
պէս ծովի վրայ, դժուարատար և անվերջ։ Ու-
ղիղ է, եղանակը սիրուն էր, բայց դրա հակա-
ռակ սայլապանները օր օրի վրայ Մարկօի վե-

րաբերմամբ դառնում էին խստապահանջ. կարծես իրանց մօտ վարձկան ծառայ լինէր: Միքանիսը հետը շատ կոպիտ էին վարւում սպառնալիքներ թափելով: Ամենն էլ ստիպում էին, որ իրանց ծառայի, եզներին կերակրելու համար ծանր շալակներ կրի, գնայ հեռու հեռու տեղերից ջուր բերի: Շատ բանելուց յոզնած, ջարդուած ուզում էր գոնէ զիշերը քնի, այդ էլ չէր լինում. սայլը մի գլուխ դիսդիկում, սաստիկ օրօրւում էր: Բացի այդ ակների, փայտէ սոնու խլացուցիչ ճոճուցը մարդու ուզեղը տեղից հանում էին: Այս ամենի վրայ աւելացաւ մի քամի: բարակ, կարմիր փոշին, որ ամեն ինչ պատել էր, թափում էր սայլի մէջ, մտնում նրա շորերի տակ, աչք ու բերան լցնում, շունչ քաշելն ու տեսնելը դժուարանում: Երկար տանջուելուց, անքուն մնալուց թուլացել էր, շորերը գզզուել էին, կեղտում կորել. առաւօտից մինչեւ իրիկուն թքում, մրում, գլխին ու մէջքին խփում էին. դրահետևանքն այն եղաւ, որ տղէն սկսեց օրէցօր ընկճուել: Եւ նա բոլորովին կորած կը լինէր, եթէ կապատացը երբեմնապէս մի երկու խօսքով սիրտը չշահէր: Շատ անգամ սայլի անկիւնը քաշուած ծածուկ լաց էր լինում երեսը տոսպակի մէջ թաղած, որն այժմ քրքրուած փոխնորդներն էր պալունակում: Ամեն մի առաւօտ իրան զգում էր աւելի թոյլ, փհատած. շըջակայքը դիտելիս, երբ նոյն անվերջ ու անտանելի:

դաշտավայրն էր տեմնում հողէ ովկիանոսների պէս ձգուած, ինքն իրան ասում էր,—Ա՛խ, այս զիշեր ես չեմ լուսացնիլ, այս զիշեր ես չեմ լուսացնիլ: Այսօր ճանտպարհին կը մեռնեմ:

Խեղճի նեղութիւնն ու հոգսը հետզհետէ աճում էին, վատ վերաբերմունքը սաստկանում: Մի առաւօտ ջրի էր գնացել ու քիչ ուշացել. սայլապաններից մինը բննեց ու կապատացի աչքերի առաջ ծեծեց: Այնուհետև սկսան խաղալիքի տեղ բանեցնել. պատուէր տալիս մի ապտակ էլ երեսին էին չըխսպացնում ու ասում.—այս բանը կապիր, թափառաշրջիկ, այս բանը տար մօրդ.


Նրա սիրտը փշրուելու պէս եղաւ, էլ ոյժ չկար գիմանալու, հիւանդացաւ: Երեք օր պարկած էր սայլում վերմակի տակ, տենդից զընդըն զընդըն էր անում, ոչ ով վրէն ուշ չէր դարձնում. կապատացը միայն գալիս էր բան խմացնում և բազկերակը տնդղում: Իրան կարծում էր համարեակորած, յուսահատ ճշալով իւր մայրիկին էր կանչում, հարիւր անգամ նրա անուն տալիս.—Ա՛խ, իմ խեղճ մայրիկ, էլ ես քեզ չեմ տեսնելու: Իմ խեղճ մայրիկ, դու պէտք է ինձ գտնես ճանապարհի վրայ մեռած ընկած:

Այս ասելով ձեռները խաչում էր կրծքին և աղօթում: Կապատացի յոյց տուած խնամքի շընորհով նրա տկարութիւնը թեթևանում էր կամաց կամաց և վերջապէս առողջացաւ, բայց ա-

ոռղջութեան հետ հասաւ ամենասարսափելի օրը իւր ուղևորութեան բոլոր ընթացքում—այսինքն այդ օրը նա պէտք է մնար մեն մենակ, իւր յոյշով: Երկու շաբթից աւելի էր, նրանք ճանապարհ էին գալիս: Երբ հասան այն կէտը, ուր ճանապարհներից մէկը գնում էր Ցուկուման և միւսը Սանտիակօ գէլ էստէրօ, կապատացը իմաց արեց նրան, որ բաժանուելուեն իրարից: Ճանապարհի մասին մի քանի ցուցմունքներ տուեց, տոպրակն այնպէս կապեց ուսերի վրայ, որ գնալիս նրան չխանգարի և նկատելով, որ իւր սիրտը լըցուելու մօտ է, կարձ խօսքով նրան ողջերթ մաղթեց: Տղէն հազիւ ժամանակ գտաւ նրա ձեռը համբուրելու: Միւս մարդիկը, որ նրա հետ խիստ անողորմ էին վարուել, նոյնպէս զգացուեցին, երբ տեսան նրան միայնակ ուղեսորուելիս, համ հեռանում էին, համ զլխով նրան բարի ճանապարհ մաղթում: Մարկօն ողջունին պատասխանում էր ձեռով և կարաւանի ետնից նայում: Այնքան մտիկ արեց մինչև դաշտավայրի կարմիր փոշում մէջ կորաւ, յետոյ ինքը տիսուր սրտով շարունակեց իւր ուղին:

Մի բան սկզբից նրա սիրտը մխիթարում էր: Ուղեսորութեան անհամար օրերին, անվերջ ու միատեսակ դաշտավետինների միջով անցնելիս նկատում էր աչքի առաջ մի վիթխարի, բարձր, կապոյտ լեռնաշղթայ սիպտակ դագաթներով, որը յիշեցնում էր նրան Ալպեան լեռները և այն

զգացմունքն էր ներշնչում, թէ նա կը կին իւր հայրենիչին մօտենում է: Դրանք Անդիան լեռներն



էին, ամերիկական ցամաքի ողնաշարը, այն անագին լեռնաշղթան, որ Հրոյ երկրից մինչև հիւմիային սառուցեալ Ովկիանոսը, հարիւր տաս

աստիճան լայնութեամբ ձգւում է: Նրա համար մեծ մխիթարութիւն էր, որ հետզհետէ կլիման-օդը տաքանում էր, որա պատճառն այն էր, որ միշտ դէպի հիւսիս էր գնացել, այժմ մօտենում էր Այրեցեալ գուտուն: Իրարից հեռու տարածութիւնների վրայ հանդիպում էր տների մանր խմբակների, մի կեղտոտ կրպակ կողքներին, ուր կարողանում էր ուտելու բան առնել: Պատահում էր ձիւորների, յաճախ տեսնում էր կանայք, երեխաներ, դէմքները բոլորովին օտարութի, հողի գոյն, աչքերը ծուռ, թուշի ոսկորները դուրս պղծած, գետնի վրայ նստոտած անշարժ և լուրջ: Նրանք խէթ խէթ նայում էին նրա վրայ առանց աչքերը նրանից հեռացնելու, զլուխները կամանց ծուռմ ինչպէս ինքնաշարժ մեքենաներ: Դրանք հնդիկներ էին: Որքան որ ուժ կար ոտներում, առաջին օրը ճամբայ կտրեց. յոգնել դադարելուց ետ պարկեց մի ծառի տակ ու քնեց: Երկրորդ օրն աւելի քիչ տեղ գնաց. սրտի արիութիւնը պակասել էր. կոշիկները մաշուել պատառուուել էին, ոտները տեղ փշտած, տեղ պլոկուած, վատ և անկանոն սնընդուելուց ուժից ընկած: Իրիկուայ դէմ վախը նրան յաղթեց: Իտալիայում լսել էր, որ այս աշխարհում օձեր կան. երևակայում էր թէ լսում է նրանց շխշալէ սողալը, մէկ կանգ էր առնում, մէկ ընթացքը շարունակում, ցուրտ սարսուը նրա թիկունքով գնում էր գալիս: Երբեմն իրան խղճում կարեկցում էր, որ այդ

վիճակի մէջ է ընկել, լաց էր լինում անձայն և ոտները քաշ տալով ճանապարհ կտրում: Յետոյ գարձեալ մտածում էր.—Ո՞հ, ինչպէս կըվտանար իմ մայրիկը, եթէ իմանար, որ ես այսքան վախանն եմ:

Այդ միաքը նրան գարձեալ սիրտ էր տալիս: Յետոյ երկիւղն ու վախը փախցնելու համար մտածում էր միայն մայրիկի վրայ. յիշում էր նրա կեանքը Գենուայից ուղերուելիս, նրա սովորական վարմունքը, որ անկողնում պարկած ժամանակ գալիս էր վերսակն ուղղում՝ մինչև կըզակի տակ քաշելով և երբ նա դեռ երեխայ էր, ինչպէս էր մայրը նրան գիրկն առնում և սիրամիր ասում, — մնա փոքր ինչ այստեղ, ինձ մօտ — և ինչպէս նա գլուխը մայրիկին կպցրած այդպէս երկար մնում էր և բաներ մտածում: Այժմ ասում էր ինքն իրան. — արդեօք մի օր քեզ պէտք է նորից տեսնեմ, սիրելի մայրիկ: Արդեօք ուղերութեանս նպատակին պէտք է համեմ, մայրիկ ջան:

Այս ասում էր ու քայլերը փոխում, անդադար փոխում անծանօթ անտառների. շաքարեղէզի ընդարձակ արտերի միջով, անհատանում մարդագետինների միջով առանց աչքից զցելու վիթխարի կապոյտ լեռները, որոնց բարձրաբերձ կատարները ամպերի մէջ թաղուած էին: Չորս օր, հինգ օր, մի շաբաթ անցկացաւ նա ճանապարհ գնալիս: Օր օրի վրայ նրա ուժերը հատ-

նում էին, ոտները արիւնլուիկ դառնում։ Վերջապէս մի իրիկու արել մայր մտնելու միջոցին ասին նրան։ — Տուկուման այստեղից հինգ վերստէ հեռու։ | Նա ցնծաց ուրախացաւ և թեաւորուածի պէս քայլերը փոխեց, կասես կորցրած ոյժը մի վայրկեանի մեջ ետ եկաւ։ Յակայն այդ մի կարձատես պատրանք էր։ Յանկարծ ոյժը հատաւ և նա բոլորովին թուլացած մեկնուեց մի փոսի ափին։ Ի՞նչ կանես որ նրա սիրով ուրախութիւնից ցնծում էր, լուսափայլ անթիւ աստղերով զարդարուած երկնքը երբէք նրան այնպէս գեղեցիկ չէր թուլացել։ Խոսի վրա մեկնուած ուզում էր քնի. աչքերն աստղերին յառած մըտածում էր։ — Ո՞վ գիտէ, այս ըոպէին իմ մայրիկըն էլ այս աստղերին մտիկ է անում։ Բարձր կանչում էր։ — Ա՛խ, մայրիկ ջան, ո՞րտեղ ես, ի՞նչ ես անում այս վայրկեանին, արդեօք չես մտածում քու որդու վրայ, հապա չես մտածում քու Մարկօի վրայ, որ արդէն կուշտդ է հասել։
Խեղճ Մարկօ, եթէ կարենայիր տեսնել թէ ի՞նչ գրութեան մէջ է այս վայրկեանին քու մայրիկը, դու գերմարդկային ճիգ կըթափէիր։ որ տռանց շունչ առնելու վագէիր, մի քանի ժամ առաջ նրան հասնէիր։

Մայրը հիւանդ պարկած էր մի հոյակապ տան ներքեի յարկում, Մեգուինեցի ընտանիքն էր ապրում այնտեղ, նրանք հիւանդին շատ սիրում է-

էին և ոչ մի ճար ու հնար չէին խնայում նրանից։ Խեղճ կնիկն արդէն տկար էր, երբ ճարտարապետ Մեգուինեցը անակնկալ կերպով Բուենոս-Այրեսը ակամայ թողեց։ հիւանդին կորդովայի պատուական օդը չօգնեց։ Իսկ երբ այնունետե իւր նամակներին պատասխան չստացաւ ոչ ամուսնուց և ոչ նրա ազգականից, սիրով սարսափ ընկաւ. միշտ մտածում էր, որ իւր ընտանիքի գլխին մեծ քամբախտութիւն է եկել։ Շարունակ տաղնապի մէջ ապրելը, որ չէր իմանում՝ արդեօք իտալիա վերադառնայ թէ մնայ. ամեն օր նրան հալ ու մաշ անող երկիւղը, թէ որտեղ որ է, հորէս միգոյժ կստանայ — այս ամենը միախառնուած նրա վիճակը չափից դուրս վատացըել էին։ Վերջին ժամանակ նա մի ծանր ցաւ էլ ստացաւ — աղիքների բորբոքում։ Տամնչորս օր էր, նա անկողնում պարկած։ Նրա կեանքը փրկելու համար պէտք էր մի վերահատութիւն անել։ Այն ժամին, երբ Մարկօն մօր անունը տալով կանչում էր, այդ նոյն ժամին պարոն Մեգուինեցն ու իւր կինը հիւանդի մահճակալի մօտ կանգնած աշխատում էին քաղցրութիւնով համոզել նրան, ու թոյլ տայ վիրահատելու, բայց նա լաց լինելով չէր թողնում, մերժում էր։ Շաբաթ առաջ Տուկումանից մի հմուտ բժիշկ եկաւ դրա համար, միայն գնուր — Ո՞չ, ողորմած պարոններ, ասեց կինը, ապարդիւն է ձեր ջանքը, ես հարկաւոր ոյժը չունեմ, վիրահատի դանակի տակ շունչս

կըսկէմ: Աւելի լաւ է, թողէք այսպէս մեռնեմ:
ինձ համար ամեն ինչ վերջացած է. քանի որ չը-
գիտեմ, թէ ինչ քամբախտութիւն է եկել իմ տան
զլխին, աւելի լաւ է մեռնեմ:

Պարոնն ու տիկինը ամեն կերպ աշխատում
էին նրա ուշադրութիւնը այդ մտածմունքներից
հեռացնել, որպէս զի նա քաջ լինի. Գենուա ու-
ղարկած վերջին նամակին պատասխան կստանայ,
իւր զաւակների սիրու համար թող տայ վիրա-
հատել: Զաւակների վրայ մտածելը շատացնում
էր միայն նրա ցաւերը և յուսահատութիւնը, ո-
րոնք երկար ժամանակ մաշելով վերջին թելն է-
ին դաել: Այդ խօսքերի վրայ արտասուքը հեղե-
ղի պէս թափեց ու հառաչեց.—Ախ, իմ զաւակ-
ներ, իմ որդիներ, ձեռները կցելով գոչում էր,
ո՛վ զիտէ, գուցէ նրանք այլ ևս կենդանի չեն:
Լաւն այն է, որ ես էլ մեռնեմ: Շնորհակալ եմ
ձեզանից, բարեսիրտ պարոն և տիկին, մինչև
երկինք շնորհակալ եմ: Բայց լաւ կըլինի, որ ես
մեռնեմ: Վիրահատութիւնից ետն էլ ես առող-
ջացողը չեմ. դրա մէջ համոզուած եմ: Անչափ
շնորհապարտ եմ ձեր մարդասէր հոգատարու-
թեան համար, սիրելի պարոններ: Դուք պա-
տուիրել էք, որ բժիշկը էլօր կըկին գայ, աւելորդ է,
ես կամենում եմ մեռնել: Ճակատագիրս մի ան-
գամ որոշել է, որ այստեղ մեռնեմ: թող լինի,
ես պատրաստ եմ:

Բայց տէրն ու տիրուհին շարունակում էին

նրան միսիթարել և ասել.—Ո՞չ, այդպէս բան մի
խօսիլ: | Բոնում էին ձեռը և անդադար ինդրում,
որ համաձայնի վէրքը կտրելուն: Այդ ժամանակ
նա փակեց աչքերը և ընկաւ մահանման նիրհի
մէջ: Տէրն ու տիրուհին լապտերների աղօտ լու-
սով առժամանակ մնացին կողքին կանգնած. խոր
ցաւակցութեամբ նայում էին հիացման արժանի
մօր վրայ, որ իւր ընտանիքը չքաւորութեան ձեռ-
քից փրկելու համար այստեղ էր եկել, վեց հա-
զար մղօն իւր հայրենիքից հեռացել, որպէս զի
այնքան նեղութիւններ կրելուց ետ մեռնի խեղճ,
աղնիւ, բարեսիրտ և քամբախտ կնիկը:

Հետևեալ օրը վաղ վաղ Մարկօն տոպրակն
ուսին, մէջքը կուացած, կաղի տալով, բայց արի-
ութեամբ լի մտաւ Տուկուման, որ Արգենտինան
հասարակապետութեան ամենանոր և ամենածաղ-
կած քաղաքներից մինն էր: Նա կարծեց թէ Կոր-
դուկան, Բողարիօն, Բուենոս-Այրեսը նորից է
տեսնում, նոյն ուղիղ և անվերջ փողոցներն էին.
նոյն ցածլիկ և սպիտակ տները, բայց ամեն տեղ
մի թարմ և փարթամ բուսականութիւն, մի բու-
ժարար, անուշաբոյր օդ, մի արմանազան լոյս, մի
պարզ ու պայծառ երկինք, որոնց նմանը նա իսկի
իտալիայումն էլ չէր տեսել: Փողոցներով քայլե-
լիս զգում էր այն տենտագին յուզմունքը, որ
Բուենոս-Այրեսում նրան պաշարել էր, նա աչք
էր ածում բոլոր աների լուսամուտներին ու դըռ-

ներին, դիտում էր մօտով անցող բոլոր կանանց՝ մաշող ակնկալութեան մէջ արորուելով՝ թէ ահա իւր մօրը կը հանդիպի: Սրտով ուզում էր ամենքըն հարցնել, բայց սէր համարձակում ոչ մէկին կանգնեցնել: Դուների առաջ կանգնած մարդիկ իրար հրում էին, որպէս զի աղքատ պատառուն փոշոտուած տղային մտիկ անեն. տեսնում էին որ հեռու տեղից է գալիս: Նա էլ նրանց մէջ մի վստահելի գէմք էր փնտրում, որին կարենար այն սոսկալի հարցն ուզզել. յանկարծ նրա աչքին ընկաւ մի խանութի ցուցանակ, որի վրայ իտալերէն անուն էր գրած: Ներսը կային մի ակնոցաւոր մարդ և երկու կնիկ: Համբաքայլ մօտեցաւ դրուանը և կամքի ոյժը ժողովելով հարցրեց.—Ողորմած պարոն, կարող էք ինձ ասել, թէ որտեղ է կենում Մեգուինեցի ընտանիքը:—Ճարտարապետ Մեգուինեցը, հարցրեց խանութպահը:—Այն, ճարտարապետ Մեգուինեցը, պատասխանեց տղին մեղմ ձայնով:—Մեգուինեց ընտանիքը ջուկումանում չէ, ասեց խանութպահը: Այդ խօսքերին ի պատասխան Մարկօն արձակեց մի յուսահատ կակծալի ճիչ, որի նմանը կարող է արձակել մահաբեր հարուած ստացող մարդը: Խանութպահն ու կանայք իրարանցով ընկան, հարեաններից մի քանիս վեր թռչելով շտապեցին այդ կողմը:—Ի՞նչ եղաւ, ի՞նչ պատահեց քեզ, այս արդարացը խանութպահնը ներս տամնելով նըրան և աթոռի վրայ նստացնելով. ի՞նչ կայ, ո՞ւ

դու յուսահատում ես: Ճիշտ է, Մեգուինեցը այստեղ չէ, բայց Տուկումանից մի քանի ժամ է հեռու:—Ո՞րտեղ է, ո՞րտեղ, վեր թռչելով բացականչեց Մարկօն, ի՞նչպէս մի յարութիւն առած մեռել:— Այստեղից միայն տասնունինգ մըղօն հեռու, Սալադելոյի ափին, ուր մեծ շաքարի գործարան են շինում. մի խումբ տներ կան, այնտեղ է պարոն Մեգուինեցի բնակարանը. ով ասես, որ նրան չի ճանաչում. մի քանի ժամում կարող ես այնտեղ համնել:—Մի ամիս առաջ այնտեղ եմ եղել, խօսեց մի երիտասարդ, որ աղաղակի վրայ խանութ էր վագել: Մարկօն աչքերը չուելով նրա վրայ, նայեց ու շուտ գունաթափուելով հարցրեց.—Տեսել էք դուք պարոն Մեգուինեցի աղակինուն, իտալունուն:—Գենուացի կնո՞ջը, այս, տեսել եմ:

Մարկօն այս տեղեկութեան վրայ ողջ մարմնով ցնցուեց ու սկսեց հեկեկալ. դա կէս ճիծաղ էր, կէս լաց: Յետոյ ամուր և խիստ վճռականութեամբ գուաց. — Ո՞րտեղով է ճանապարհը, շուտ ասէք փողոցը, այս ըստիս գնում եմ, ցոյց տուեք ինձ ճանապարհը:—Բայց դու ամբողջ օր ճանապարհ ես գնալու, ապին նրան բոլորը, յոդնած ես, պէտք է հանգստանաս, առաւօտը վաղ վաղ կարող ես ուղեղորուել:—Անկարելի է, անկտրելի է, պատասխանում էր տղին, ասէք ինձ, ո՞ր ուղղութեամբ եմ գնալու. մի բոպէ էլ չեմ սպասիլ, այս վայրկեանիս գնալու եմ, եթէ իմանամ

որ ճանապարհին մեռնելու եմ:

Տեսան որ վճռի վրայ անդրդուելի կանգնած է, չուզեցին այլևս գնալը խափանել:—Աստուած լինիքուընկերը, ասիննրան, ուշադրութիւն դարձրու անտառի միջով անցնելիս: Բարի ճանապարհ, փոքրիկ խոալացի:

Մի մարդ ուղեկցեց նրան մինչև քաղաքից գուրս գնալը, ճանապարհը ցոյց տուեց, մի քանի խորհուրդներ տուեց և ետնից նայեց, որ տեսնի լինչպէս է գնում: Տղէն կաղի տալով տոպրակն ուսին մի քանի բռպէում անյայտացաւ խիտ ծառեցի ետևը, որ ճանապարհի երկու կողմը բռնած էին:

Այս գիշեր սոսկալի գրութեան մէջ էր խեղանդ հիւանդ կինը. անտանելի ցաւերի ձեռից այնպիսի սիրտ կարտող ճիչ ու աղաղակ էր հանում, որ լսողները փշաքաղւում էին: Այդ պատճառով անձար կնոջ տեսնդը սաստկացաւ, սկսեց անկապ բաներ ասել: Նրան ինսամող կանայք իրանց կորցրել էին: Տիկին Մեգուինեցը յոյսը խսպառ կորցրած լալիս էր մօտը: Ամենն էլ երկիւղի մէջ էին. չլինի՞ թէ ալժմ հիւանդը յօժարուի վէրքը կտրել տալ. բժիշկը վրայ չէր հասնիլ, որովհետեւ նա հետեւեալ օրն էր գալու: Տենդ քաշուած վայրկեաններին պարզ նկատում էին, որ նրա սոսկալի ցաւերը մարմնի ցաւեր չէին, այլ իւր հեռաւոր ընտանիքի կարօտի ցաւերն էին: Հալ ու մաշ եղած, մահուան դռան մօտե-

ցած երեսն այլակերպում էր ու սրտատոչոր յուսահասութեամբ մազելը փետելով աղաղակում: —Այս Աստուած, քարասիրտ Աստուած. թողում ես, որ այսպէս հեռու տեղ մեռնեմ, առանց սիրելիներիս տեսնելու մեռնեմ: Իմ խեղճ որդիք, մնացել էք առանց մայր, իմ աչքի լոյս զաւակներ, իմ սրտի հատորներ: Իմ Մարկօն, որ դեռ այնպէս փոքր է, բայց այնպէս բարձր, այնպէս սիրալիք: Դուք չգիտէք, թէ ինչ տղայ էր նա: Այս, սիրելի տիկին, եթէ դուք իմանայիք: Ես չէի կարողանում նրան վզիցս պոկել, երբ պէտք է դէսը ուղեկորուէի: Նա հեծկլտում էր սիրոը պատուելով, կարծես իմանում էր որ իւր մօրըն էլ տեսնելու չէ: Խեղճ Մարկօ, իմ խեղճ զաւակ: Կարծում էի թէ սիրտս չի դիմանալ, կըպատուի: Այս, երանի թէ այն ժամանակ մեռնէի, մեռնէի այն վայրկեանին, երբ նա ինձ վերջին մնաս բարեն ասեց: Անմայր է իմ խեղճ զաւակը, նա, որ ինձ այնպէս սիրում էր, նա, որին ես դեռ այնպէս պէտք էի: Առանց մայր չքաւորութեան մէջ ընկած նա պէտք է գնայ մուրացկանութիւն անի: Նա, իմ Մարկօն, սովից պէտք է ձեռը մեկնի ողորմութիւն խնդրելու: Ո՞հ, Արարիչ Աստուած, ո՞չ: Ես չեմ ուզում մեռնել, բժիշկ բերէք: Խակոյն կանչեցէք նրան: Թողի ինձ կարտի, թողի խելքս սպանի, միայն թէ կեանքս ազատի: Ես ուզում եմ առողջանալ, ապրել. դէպի հայրենիք ուղեկորուէլ, թէ առնել թըռ-

չել առաւօտը, հէնց այս բոպէիս: Բժիշկ, օգնութիւն, օգնութիւն:

Կանայք բռնում էին նրա ձեռները, փաղաքշում, գուրգուրում էին. յորդորելով կամաց կոմաց ուշի էին բերում, Աստծու անունը տալիս, որ յոյսը նրանից չըկտրի: Դարձեալ ուշը կորցնում էր, մահուան հետ կոփւ տալիս, լալիս, ձեռներով սիպտակած մազերը պրճոկում, երեխայի պէս վնդում, ձայնը երկարացնելով աղէլխարշ սպում և երբեմն մրմնջում.—Ա՛յս, իմ Գենուա, ախ իմ տուն, գեղատեսիլ ծով!... Ո՞հ, իմ Մարկօ, իմ խեղճ Մարկօ, ուր ես այժմ դու, իմ խեղճ զաւակ:

Կէս զիշեր էր ու նրա խեղճ Մարկօն երկար ժամեր մի փոսի ափին կիսաշրւնչ փոռուած մնալուց ետ շարունակում էր գնալ խոր ծմակի միջով: Հաստարեստ ծառերը, բուսականութեան խսկական հսկաները խոյանում էին տաճարի թանձը սիւների պէս դէպի վեր և լուսնի շողում թաթախուած հուժկուկատարներն իրար մէջ հիւսում: Կիսախաւարի մէջ նշմարում էր նա ամեն ձեի բներ. մի քանի ուղղաձիգ էին, մի քանիսը կռացած, ծըռուած, իրար վրայ խաչած ընկած, կարծես սպառնադէմ պատրաստուած են կոռուի. միւսները գետնի վրայ փռուած էին ինչպէս խորտակուած կոթող ներ: Նրանց վրայ պատուակն ու բաղեղը ոստեր փռել, ամեն կողմից հիւսել էին:

առյ կային այնպիսի ծառախմբեր, որոնց ուղղաձիգ բները նմանում էին հսկայ նիզակների խութիւն: Ծայրակատարները հասնում էին ամպերին: Սա մի զարմանալի վեհութիւն էր, տարօրինակ բոյսերի մի լաբիւրինթ, մի սոսկալի և վսեմ տեսարան, որի նմանը բուսական աշխարհում նա իսկի տեսած չունէր: Երբեմն դրանց տեսքից խիստ զարհուր էր զալիս նրա վրայ. իսկոյն իւր ուշըն ու միաքը դարձնում էր մօր վրայ: Եւ նա գնում էր ուժը հատած, արիւնաթթախ ոտներով, մենակ այս զարգանդեցնող անտառի մէջ, իրարից շատ հեռու տեսնում էր մարդկային մանր բնակարաններ, որոնք այս ծառերի ստորոտներում երեսում էին ինչպէս մրջիւններ, այլ և պատահում էին գոմէշներ, որոնք ճանապարհի վրայ պարկած քնում էին: Ուժը հատած էր, բայց յուղածութիւն չէր զգում, մենմենակ էր, բայց վախը չէր գալիս. անտառի մեծութիւնը նրա հոգին մեծացնում էր: Մօր մօտիկութիւնը նրան տղամարդի ուժ և եռանդ էր տալիս: Երբ մտարերում էր ովկիանոսը, սոսկումները, կրած ու յաղթած ցաւերը, տարած նեղութիւնները, երկաթէ հաստատակամութիւնը աւելի ջերմաջերմ էին հոսեցնում նրա զօրեղ, ազնիւ գենուական արիւնը և հպարտ ու աներկիւղ կերպով բարձր պահում նրա ճակատը: Մի ուրիշ բան էլ առաջ եկաւ նրա մէջ. երկու երկար տարի կար, որ մայրը նրանից բացակայ էր.

պատկերը նրա յիշողութեան մէջ նսեմացել, անհետանալու վրայ էր, յանկարծ այդ վայրկեանին պատկերը իւր մէջ պարզուեց, տեսաւ մօր դէմքը որոշ, լրիւ, ինչպէս երկար ժամանակ իւր աչքով չէր ընկել։ Նա տեսնում էր մօրը իւր կշտին սրտաբաց խօսելիս, տեսնում էր նրա աչքերի ամենաթեթև շարժմունքները, նրա բռնուած շարժուածքը, նրա մտածմունքների ստուերները։ Այս անմոռաց յիշողութիւններից տուաջ մղուած կարծես թռչում էր և ոչ թէ քայլում։ Եւ մի սէր, մի անհասկանալի քնքշութիւն այնպէս էր աճում նրա մէջ, նրա սրտի աւազանում, որ քաղցրը ու խաղաղ արտասունքներ սկսան թշերից ներքև գլորուել, խաւարի մէջ քայլերը փոխելով միշտ մօր հետ էր. նրա հետ էր զրոյց անուժ և կրկնում այն խօսքերը, որ քիչ յետոյ նրա ականջում վսփսալու էր. — Ես այստեղ եմ, սիրելի մայրիկ։ Ահա քեզ մօտ եմ. Ես քեզ երբէք չեմ թողնելու. մենք միասին վերադառնալու ենք տուն. նաւի վրայ միշտ լինելու եմ քու կողքին, քեզ կպած, ոչ մի աղամորդի չի կարող ինձ քեզանից բաժանել, ոչ ոք, երբէք, քանի որ դու կենդանի ես։

Եւ զրա վրա չէր նկատել նա, որ հսկայ ծառերի կատարների վրայ լուսնի արծաթափայլ շողը հանդարտ կուլ գնաց վառ արշալոյսի մէջ։

Այս առաւօտ արդէն ժամի 8-ին Տուկումա-

նի բժիշկը, որ մի երիտասարդ արգենտացի էր, իւր օգնականի հետ կանգնած էր մահճակալի մօտ վերջին անդամ փորձելու, արդեօք կարժղ է նրան համոզել, որ թոյլ տայ վէրքը կտրել, վերջացնել։ Նրա հետ սկսան նոյնպէս ջերմագին թախանձել ճարտարապետ Միգուինեցը և իր կինը։ Ամենը զուր անցկացաւ։ Հիւանդը բոլոր ուժից ու զօրութիւնից կտրուած, ոչ մի յոյս չէր դնում վիրահատութեան վրայ։ Նա համոզուած էր այսպէս. կամ իսկոյն կը մեռնի կամ զուր տեղ սոսկալի ցաւեր կրելուց ետ մի քանի ժամ պէտք է ապրի։ Աւելի լաւ չէր, որ ցաւերը բնական ճանապարհով իրան սպանէին։

Բժիշկն անդադար կրկնում էր. — Վիրահատութիւնը անվտանգ է, կառողջանաք անտարակոյս, միայն թէ քիչ արիասրտութիւն ունենաք։ Միկոյն է, եթէ թոյլ չը տաք, մեռնելու էք։

Այս բոլոր խօսքերը զուր էին անցնում. — Ոչ, պատասխանում էր նուազ ձայնով, մեռնելու համար դեռ արիութիւն ունեմ, բայց անօգուտ տանջուելու համար սիրտ չունեմ։ Շնորհակալ եմ, պարոն բժիշկ։ Կարելի է, այսպէս էր լինելու իմ վերջը։ Թողէք շունչս հանգիստ աւանդեմ։

Բժիշկն այլևս բան չասեց, ոչ ոք էլ բերան չըացեց. քիչ յետոյ հիւանդը դէմքը դարձեց դէպի իւր տիրուհին և մարող ձայնով իւր վերջին խնդրուածն արեց. — Միրելի, բարեգութ տի-

կին, ասեց նա դժուարութիւնով ու հեկեկալով:
Խնդրում եմ իմ տնտեսած փոքր գումարը և իմ
չնչին իրեղէնները իմ ընտանիքին ուղարկէք...
պարոն հիւպատոսի միջոցով: Յոյս ունեմ, որ ա-
մենն էլ ողջ են: Սիրտս ինձ ասում է այս վեր-
ջին վայրկեանին: Բարի եղէք նրանց նամակով
հաղորդելու, որ միշտ նրանց վրայ եմ մտածել,
օրն իբուն միշտ աշխատել նրանց համար... իմ
որդիների համար... ասացէք, որ իմ սրտի միակ
կոկիծն այն էր, որ այլ ևս նրանց չըտեսայ... Բայց
ասա, որ ես մեռել եմ արիութեանը.... անձ-
նուիրութեամբ... նրանց անունն օրհնելով: Հա-
ղորդեցէք, որ իմ ամուսնուն... և իմ տւագ
որդուս խնամքին եմ յանձնում ամենափրիկ
խեղճ Մարիոյին... որին մինչև վերջին վայրկեա-
նը սրտիս մէջն եմ պահել:

Այս ժամանակ նա յանկարծ բարձրանալով
ձեռները կցեց ու գոչեց.—Ահ, իմ Մարիօ, իմ
զաւակ, իմ կեանք... | Երբ արտասուալից աչքե-
րը դէս ու դէն դարձրեց, նկատեց, որ տիկինը այլ-
ևս իւր մօտ չէ, նրան ծածուկ դուրս էին կան-
չել: Ամուսնուն էր վնարում, ամուսինը անյա-
տացել էր: Հիւանդի մօտ ոչոք չկար բացի բժշ-
կի օգնականից և երկու հիւանդապահ կանանցից:
Կողքի սենեակում լսելի էր, որ արագ դէս դէն
քայլում են, բորբոքուած ձայնով կամաց փափում
են, զսպուած ձայնարկութիւններ են անում: Հի-
ւանդն աչքերը սկսուել էր դրանը և սպասում

էր: Մի քանի ըոսկէից ետ տեսաւ, բժիշկն երեաց
այլայլուած դէմքով, յետոյ եկան պարոնն ու տի-
կինը, նրանց երեսները նոյնպէս փոխուած էին:
Երեքը միասին նայեցին հիւանդի վրայ մի ուրիշ
տեսակ և կամաց ձայնով մի քանի խօսք փափր-
սացին իրար ականջում: Նրան թուաց, որ բժիշկը
տիկնոջն ասում է.—աւելի լաւ է հէնց հիմա:

Հիւանդը դրանից բան չհասկացաւ: Տիկինը
դողդողուն ձայնով դիմեց նրան.—Ժողեցա, մի
աչքալոյս եմ բերել ձեզ, սրաներդ պատրաստե-
ցէք այդ լուրի համար:

Հիւանդն ուշադրութեամբ դիտում էր նրան:
Տիկինն աւելի ևս յուզուած շարունակեց.— այն-
պիսի լուր, որ ձեզ մեծ ուրախութիւն պիտի
պատճառի:

Հիւանդն աչքերը չուլով մեծ բաց արեց: Տի-
կինը շարունակեց.—պատրաստուէք մի անձն տես-
նելու... որին դուք անչափ սիրում էք:

Հիւանդն արագ շարժումով բարձրացրեց զը-
լուխը և սկսեց լուսափայլ աչքերով մէկ դէպի
տիկինը նայել, մէկ դէպի դուռը:—Մի անձն էք
տեսնելու, խօսքն առաջ տարաւ տիկինը գու-
նատուած, որ հէնց այս ըոսկէիս... անսպասելի
կերպով եկաւ այստեղ:—Ո՞վ է այդ անձը, բը-
դաւեց հիւանդը խեղտուած, անբնական, ահա-
բեկուած ձայնով:

Մի վարկեան չանցած աւելի բարձր բղաւեց,
անկողնում ուղիղ նատեց, անշարժ մնաց, աչքե-

ըը պլշած, ձեռները քներակներին դրած, կարծես միւս աշխարհից եկող երևոյթ է տեսնում: Մարիօն պատուած, փոշում մտած, կանգնած էր շէմքի վրայ, մի թեռվ բժշկին յենուած: Հիւանդը երեք անդամ բարձրածայն կանչեց. — Ա'ստուած, Ա'ստուած, Ա'ստուած: | Մարիօն առաջ վազեց, հիւանդը բաց արեց իւր նիհարած թերը, ասիւծի ուժով սեղմեց նրան իւր կըրծքին. սաստիկ բարձր ծիծաղում էր, յետոյ ծիծաղը փոխում էր հեծկլսոցի առանց արտասուք թափելու, մինչև որ շունչը կարելով ետ թեքուեց բարձի վրայ: Բայց նա շուտով ուշքի եկաւ և ուրախութիւնից խելքը կորցրածի պէս գոռում գոչում էր և համբոյրներով երեսը, գլուխը ծածկում. — Ի՞նչպէս ես դու այստեղ ընկել. Ի՞նչու համար: Այս դժու ես միթէ: Ի՞նչ մեծացել ես: Ո՞վ է քեզ այստեղ բերել: Մենակ ես դու: Հիւանդ չ՞ս: Այս դժու ես, Մարիօ: Միթէ երազ չէ սա: Ա'խ Ա'ստուած, խօսիր:

Յետոյ ձայնը փոխելով ասեց, — Ոչ, լոիր, սպասիր:

Եւ շտապ դէպի բժիշկը դառնալով ասեց. — Շուտ արա, դէ շուտ, բժիշկ, ես ուզում եմ առողջանալ, ես պատրաստ եմ, վայրկեան մի կորցնիլ: Հեռու տարեք Մարիօն, որ նա ոչինչ չըտեսնի: Սիրելի Մարիօ, վտանգաւար բան չկայ, միամիտ կաց: Դու յետոյ պատմելո՛ կըշարունա-

կես, արի, մէկ էլ համբուրեմ: Գնա: Ահա ես պատրաստ եմ, բժիշկ:

Մարկօյին դուրս տարան: Պ. Մեգուինեցը, տիկինը և հիւանդապահ կանայքը շտապով գնացին դուրս: Բժիշկը և իւր օգնականը դուռը փակելով մնացին ներս: Պ. Մեգուինեցը աշխատեց Մարկօյին հեռու սենեակ տանել, բայց հնար չեղաւ, տղէն կարծես զետնի վրայ մեխուած լինէր: — Ի՞նչ է լինելու, ի՞նչ է պատահել իմ մօրը, ի՞նչ էք ուզում անել, հարցնում էր նա:

Պ. Մեգուինեցը կամենալով նրան հեռու պահել, կամաց ձայնով ասեց. — Դէ, լոիր ասեմ, քու մայրը հիւանդ է, նրա վրայ պէտք է մի թեթև վիրահատութիւն կատարեն. քեզ բոլորը կը բացարեմ, միայն ինձ հետ արի: — Ո՞չ, պատասխանեց մանուկը կանգնած մնալով, ես ուզում եմ այստեղ կենալ: Ի՞նչ ուզում եք, այստեղ բացարեցէք:

Ճարտարապետը շուտ-շուտ պատմելով քաշեց նրան միւս կողմը: Տղէն սկսեց սառառու զգալ և զողղողալ: Յանկարծ ամբողջ տանը տարածուեց մի սուր ծղրատոց. ծկարծես մէկի մերձիման վիրաւորեցին: Տղէն դրան պատասխանեց մի յուսահատ ծղրատոցով. — Մայրիկս մեռաւ: | Բժիշկն իսկոյն երեաց դռան առաջ և ասեց. — Քու մայրը փրկուած է: | Տղէն մի վայրկեան նայեց նրա վրայ և յետոյ ընկաւ նրա ոտները. — Շնորհակալ եմ, պարոն բժիշկ: | Մակայն բժիշկը

նրան բարձրացրեց և առեց. — Վեր կաց, հերոս
տղայ, դու ես քո մօրը փրկել և ոչ ես:

ԱՆՁՆԱԶՈՀ ՏՂԱՅ

Պի քանի տարի առաջ էր, որ գեկտեմբեր
ամսի մի առաւօտ լիվերպուխի նաւահանգստում
մի մեծշո գենաւ խարիսխ վերև քաշեց: Նաւի վրայ
երկու հարիւր հոգուց աւելի կային, որոնցից 70 ի
չափ զինուորներ էին: Նաւապետը և բոլոր նաւ-
աստիները զրեթէ անգլիացիներ էին: Ուղևոր-
ների մէջ կային շատ իտալացիք, երեք տիկին, մի
քահանայ, երգիչների խումբ: Նաւը Մալտա կղզու
համար էր նշանակած: Եղանակը պղտոր էր: Եր-
բորդ կարգի ուղևորների մէջ նաւի առաջամա-
սում կար մի 12 տ. իտալացի տղայ. աւելի փոքր
էր երեսում, քան թէ իւր տարիքը. բայց ամ-
րակազմ էր, գէմքը գեղեցիկ, խիզախ և լուրջ,
ինչպէս վայել է մի սիցիլիացու: Մենակ նստած
էր զիսաւոր կայմի մօտ պարանի կոյտի վրայ.
կողքին ընկած էր մի հնամաշ պայուսակ, որի
մէջն էին դարսած իւր բաները: Թուխ գէմք ու-
նէր և սե, գանգուր մազեր, որոնք մինչև ուսե-
րը հասնում էին: Նրա հագուստը շատ աղքատ էր.
մի պատուած թիկնոց ուսերի վրայ և հին
կաշէպարկ վզից կախ: Նա խորասուզուած դի-
տում էր իրան շրջապատող ամեն ինչ, թէ ու-
ղեորներին, թէ նաւը, թէ այս ու այն կողմ վաղ-

վզող նաւաստիներին և թէ անհանգիստ ծովը:
Դէմքին նայողն իսկոյն կը գուշակէր, որ նրանց
ընտանիքին մեծ քամբախտութիւն է պատահել.
ճիշտ է, դէմքով մանուկ էր, բայց արտայաժոռ-
թիւնով չափահաս մարդ:

Նաւը շարժուելուց քիչ ետք սպիտականեր ի-
տալացի նաւաստին մի աղջկայ ձեռ բռնած մօտե-
ցաւ նաւի առաջասասին, ուր սիցիլիացին էր նըս-
տած. կանգ առաւ և ասեց. Մարիօ, ես քեզ մի
ընկերունի եմ բերում: | Ասեց ու գնաց: Աղջիկը
ոտեց տարանի կոյտի վրայ տղի կշտին: Նրանք
իրար գիտեցին: — Ո՞ր ես գնում, հարցը Եր Մարի-
օն: Աղջիկը պատասխանեց. — Նէապոլի վրայով
Մալտա եմ գնում:

Քիչ մնալուց ետ շարունակեց. — Գնում եմ
հայրիկիս ու մայրիկիս մօտ, որոնք ինձ են սպա-
սում, իմ անունս է Զուլիէտտա ֆաջիանի:

Ցղէն ոչինչ չասեց: Մի քանի ըռպէկց ետ
հանեց տոպրակից մի կտոր հաց և չոր պտուղ-
ներ. աղջիկն էլ հանեց իւր պարսիմատը. երկու-
սով սկսան բերանները բան դցել: Իտալացի նաւ-
աստին նրանց կողքով վռագ անցնելիս ձայն
տուեց. — Լաւ քէփի վրայ էր, բայց ամուր կա-
ցէր, շուտով մի պար կակսուի:

Քամին սաստկացաւ, շոգենաւը սաստիկ օ-
րօրուեց, երկու երեխանները ծովային հիւանդու-
թիւնից տեղեկութիւն չունենալով ուշ չէին դարձ-
նում զրա վրայ: Աղջիկը մինչև անգամ ծիծա-

դում էր. մօտաւորապէս իւր ուղեկցի տարիքն ունէր, բայց հասակով բարձր էր նրանից, թխագէմ, թուլակազմ, մի քիչ հիւանդ և շատ խեղճ



հագնուած: Նա ունէր կարճ կտրած և գանգուր մազեր, մի կարմիր թաշկինակ գլխին և երկու արձաթէ օղեր ականջներին:

Համ ուտում էին, համ իրանց գլխի անցունը իրար պատմում. տղէն ոչ հայր ունէր և ոչ մայր: Հայրը բանուոր էր, մի քանի օր առաջ էր մեռել Լիվերպուլում՝ թողնելով նրան մենակ. իտալական հիւպատոսը նրան ուղարկում էր իւր հայրենիքը. Պալէրմօ, ուր նա հեռաւոր ազգականներ ունէր. Աղջիկն էլ զրեթէ նոյն օրին էր. մի տարի առաջ այրի մօրաքոյը իրան շատ սիրելուց հետը բերել էր Լոնդոն: Իւր ծնողներն աղքատ լինելով մի քանի ժամանակով առւել էին նրան մօրաքրոջը. յոյս էր տուել, որ ժառանգութիւն է թողնելու, բայց մի քանի ամսից ետ մօրաքոյը ձեպակառքի տակ ընկնելով մեռաւ առանց մի չենտիզիմօ (փոքրագոյն դրամ) թողնելու: Նա գնացել էր հիւպատոսի մօտ, որ նրան նոյնպէս իտալիա էր ուղարկում նաւով: Երկուսն էլ լանձնուել էին իտալացի նաւաստուն: Աղջիկը խօսքն աւարտելով ասեց.—Հայրս ու մայրս կարծում էին՝ թէ ես հարստացած եմ վերադառնալու, այժմ զնում եմ աղքատ: Փոյթ չէ, նրանք ինձ առանց փողի էլ սիրում են, ինչպէս և եղբայրներս: Չորսն ունեմ, ամենն էլ փոքր են. տան մէջ ամենամեծը ես եմ. ես եմ նրանց հագնում, նրանք ուրախանալու են՝ երբ ինձ տեսնեն: Բարիս ծայրերի վրայ եմ տուն մտնելու, որ շուտ չիմանան:... բայց ծովս այս ինչ կատաղի է: | Քիչ միջոցից ետ տղային հարցը եց.—Դու էլ ես զընում քու ազգականների մօտ:—Այս... եթէ նրանք

ինձ ընդունում են: — Միթէ նրանք քեզ չեն սիրում: — Զըդիտեմ: — Ծննդեան տօնին տասուներեք տարիս կլրանայ, ասեց աղջիկը: Յետոյ նրանք խօսեցին ծովի ու մարդկանց մասին, որ նրանց շրջապատում էին: Ամբողջ օր մնացին իրար կշի իրար հետ զըրոյց անելով: Ուղևորները կարծում էին թէ քոյր և եղեայր են, աղջիկը մասում էր իլկի վրայ, տղնէ մտքի խորն ընկած մտածում էր: Ծովն աւելի ու աւելի փոթորկում էր. իրիկունը՝ երբ նրանք բաժանուել էին, որ գնան քնելու, աղջիկն ասեց Մարիօյին: — Հանգիստ քուն եմ ցանկանում քեզ: — Ոչ ով չի կարող հանգիստ քնել, խեղճ երեխէք, գոչեց իտալացի նաւաստին կողքներով ւապետի մօտ վազելով: Տղէն ուզում էր իւր բարեկամուհուն «բարի գիշեր» ասել, երբ ջրի անսպասելի մի ալիք նաւի եզրից անցնելով նըրան մեծ թափով ճանկեց ու մի նստարանի վըրաց շպրտեց: — Ա՛խ, Աստուած, նա արիւնաթաթախ է եղել, աղաղակեց աղջիկը և ընկաւ նրա վրայ: Ներքև վազող ուղեղորները նրանց վրայ ուշ դալձրին: Աղջիկը չոքեց Մարիօյի կողքին. տղէն ուշաթափուած ընկած էր, նրա ճակատի արիւնը սրբեց, իւր մազերի վրայից կարմիր թաշկինը վերցնելով փաթաթեց նրա գլուխը, յետոյ ծայրերը կապելու համար նրա գլուխը սեղմեց իւր կրծքին, իւր դեղին հագուստների գոտկատեղին արիւնոտուեց: Մարիօն ուշի եկաւ և վերկացաւ. — Հը, այժմ քեզ լաւ ես զգում, հալ-

ցըեց աղջիկը: — Ամեն ինչ անցաւ, պատասխանեց տղէն: — Հանգիստ քուն եմ ցանկանում, ասեց Զուլիէտան: — Բարի գիշեր, պատասխանեց Մարիօն: Եւ նրանք երկսով ջոկ ջոկ սանդուխներով իջան իրանց ննջարանները:

Նաւաստին ուղիղ էր գուշակել, նրանք դեռ քուն չէին մտել երբ մի սարսափելի փոթորիկ բարձրացաւ: Անսպասելի թափով ալիքները մի քանի վայրկեանի միջ կայմը ջարդ ու փշուր արին: Նաւի ետեից երեք մակոյիները պոկելով տաշեղի պէս թոցըին, առաջի մասից էլ չորս եղ տարան: Նաւի ներսում շփոթութիւն ընկաւ, սկսան այնպէս սարսափելի ճիչ, աղաղակ, վայնասուն բարձրացնել, հեծկլտալ, աղօթել, որ լսողի մազերը բիզ բիզ էին կանգնում: Փոթորիկը ամբողջ գիշերը միալար հըռնդալէ փշում էր. լսւաբացին աւելի կատաղեց: Ահեղակերպ կոհակները կողքից նաւին շըրմփացնելով մեծ ուժգնութեամբ անցնում էին տախտակամածը, ամեն ինչ կոտրտում, փշրտում, պոկում և ծովը թափում: Մերենայի վրայի ծածկոցը չդիմացաւ հարուածներին, ծակուեց, ջուրը սարսափելի շառաչով թափուեց ներս, կրակը հանգցըրեց. մերենավարները գուրս փախան: Զրի ահուելի յարձակումները ամեն կողմից հեղեղեցին ներս: Լսելի եղաւ մի որոտաղին ճայն. — Զուրը դժւրս տալ: | Մանաւապետի ճայնն էր: Նաւաստիները վրայ ընկան ջրհաններին. բայց կատաղակ ալիքների մի յանկար-

ծակի հարուած շողենաւը ծայրէ իծայր սասա-նեցրեց: Նաւի ծնօտը պոկեց և դոնակը փրցնե-լով ամեն կողմ ջրհեղեղ արեց:

Ուղևորներն աւելի մեռած էին քան թէ կենդան. փախչելով ապաստանել էին մեծ դահ-լիճում: Մի վայրկեան այնտեղ երևաց նաւապե-տը: Նաւապետ, նաւապետ, գոռում էին բոլորը խառնիխուռ, ի՞նչ էք անում, ի՞նչպէս է մեր դը-րութիւնը, արդեօք դեռ յոյսի նշոյլ կայ. աղա-տեցէք մեզ:

Նաւապետը համբերեց մինչև ամենը լոեցին, ապա սանութեամբ ասեց.—Մի հնար կայ—այն է, որ հնազանդուենք ճակատազրին:

Միայն մի կին բարձրածայն գոչեց. —Աս-տուած, զթա մեզ: | Միւսները չկարողացան ան-գամ արտասանել: Սարսափը ամենքին քար էր կտրացրել. Երկար միջոց անցաւ այսպէս գերեզ-մանական լութեան մէջ, ամենն էլ գունաթա-փուած իրար երես էին նայում: Ծովը մռնչում, եփ էր գալիս աւելի զարհուրելի, նաւը տատանւում էր ծանր կերպով: Նաւապետը փորձեց մի աղա-տարար մակոյկ իջեցնել ծովը. հինգ նաւատի նստեցին նրա մէջ. Երկու վարկեան չանցած մի ալիք գրկեց, առաւ իւր ծոցը և սկեց: Նաւաս-տիներից երկուս խեղուեցին, նրանց մէջ էր և ի-տալացին. միւսները դժուարութեամբ կարողա-ցան թոկերից բռնել ու վերև բարձրանալ: Դրա-նից ետ նաւաստիներն էլ վստահութիւնը կոր-

ցրին: Երկու ժամից ետ նաւը մինչև ափերը ջրի-տակ սուզուեց: Մի քստմնելի աեսարան էր այդ-ժամանակ տախտակամածի վրայ. յուսահատ մայ-րերը մղկամուլ մանուկներին սղմում էին կուրծք-ներին, բարեկամները գրկում և իրար վերջին բարեն էին տալիս. մի քանիսը իջնում էին ներ-քե, որ ննջարանների մէջ մեռնեն առանց ծովի պատկերը տեսնելու: Ուղևորներից մինն իրան գնդակահար անելով ննջարանները տանող սանդու-խով զլիկավայր ընկաւ և շունչը փչեց: Շատերը սասանած, խելքները կորցրած իրար վզով էին փաթաթեում, կնանիք ոլորւում, սոսկալի ջղա-ձգութեան մէջ ողիկ մողիկ էին գալիս: Մի քանի-սը ծունկ էին չոքում քահանայի առաջ, որ օգ-նի: Լսելի էր միայն հեծկլտոց, մանկական ձը-չոց, ողբ, վայնասուն և սիրտ պատառող ձայներ — այստեղ, այնտեղ երեւում էին մարդիկ արձա-նացած, շուարած, բայց անզգայ աչքերով ու դէմքով, ինչպէս դիակներ կամ խելակորոյսներ: Երկու երեխաներ՝ Մարիօն և Զուլիտուան մի կայմ թերով գրկած նայում էին ծովին՝ կարծես-խելքից եղած:

Ալիքները մի քիչ հանդարտուեցին, բայց նա-ւը շարունակում էր կամաց կամաց ընկղմուել: Մի քանի բոպէ միայն կեանք ունէր: — Մակոյկը ծովին իջեցրէք, հրամայեց նաւապետը: Վերջին մնացած մակոյկը ներքեւ իջեցրին, տամնչորս նա-ւաստի և երեք սւզեոր նստեցին: Նաւապետը մը-

նաց նաւի վրայ: — Դուք ևս իջէք, մեղ հետ նըստեցէք, կանչում էին ցածից: — Ես պէտքէ իմ պաշտօնատեղումս մեռնեմ, պատասխանեց նաւապետը: — Կարելի է նաւի ենք հանդիպում, աղաղակում էին նաւաստիները, այն ժամանակ բոլորին կազատենք: Իջէք ներքե, թէչէ կորած էք: — Ոչ, ես մնում եմ այստեղ: — Դեռ մի տեղ էլ կայ, կանչեցին նաւաստիները դէպի միւս ուղերձները, տուէք մի կին:

Մի կին քայլեց դէպի առաջ նաւապետի օգնութեամբ, բայց երբ դիտեց այն հեռաւորութիւնը, ուր մակոյկն էր գտնւում, սիրտ չարեց ներքե թռչել, ուշաթափուած ետ ընկաւ տախտակամածի վրայ: Միւս կանայք համարեա ամենն էլ զգայութիւնը կորցրած մահուան դռանն էին: — Դէմի երեխայ տուէք, գոչեցին նաւաստիները: Այս ձայնի վրայ սիցիկեացի տղէն և իւր ընկերուհին, որոնք մինչև այդ վայրկեանը՝ ինչպէս մի գերմարդ՝ կային սարսափից քարացել էին, կեանքները փրկելու համար անակնեալ բնազդից մղուած կայմը բաց թողին, նաւի եզրը վազելով բղաւեցին — ինձ դցեցէք ներքեւ:

Ինչպէս երկու վայրի ամենի զազաններ կը ուիւ էին մղում իրար դէմ: — Որը փոքրն է, նըրան զցեցէք, մակոյկը լիքն է, կանչում էին նաւաստիները:

Տղէն այս խօսքերի վրայ իբրև կայծակնահար թևերը քաշ դցեց ու մնաց անշարժ, հան-

դած աչքերով դիտելով Մարիօյին: Մարիօն մի վայրկեան նրա վրայ նայեց, նկատեց արեան հետք նրա կրծքի վրայ, յիշեց թէ ինչ արիւն է ու մի աստուածային միտք փայլեց նրա դէմքի վրայ: — Աւելի փոքրին տուէք, գոռում էին միաբերան նաւաստիները լարուած անհամբերութեամբ: Արդէն հեռանում ենք:

Այն ժամանակ, անսովոր ձայնով աղաղակեց Մարիօն. — սա աւելի թեթև է: Գնա Զուլիկտաս, գու ունես հայր ու մայր, ես միայնակ եմ, ոչ ով չունեմ: Ես իմ տեղը քեզ եմ տալիս, թոիր ներքե:

— Գցիր դրան ծովի մէջ, գոչեցին նաւաստիները: Մարիօն բռնեց Զուլիկտասյի մէջքից և շպրտեց նրան ներքե ծովը: Աղջիկը ծղրտաց ու թրլը նկ ընկաւ ջրի մէջ: Նաւաստիներից մինը շուտով ճանկեց նրա թեր և քաշեց ջրից դէպի մակոյկը:

Տղէն մնաց նաւի եզրին կանգնած, ճակատը բարձր պահած, անշարժ, հանդարտ մազերը ծածաներիս: Մակոյկը շարժուեց. պէտք է շտապով հեռանար, որպէսպի ընկղմող նաւի առաջ բերելիք յորձանքներին կուլ չգնար:

Աղջիկը, որ մինչ այդ վայրկեան ուշաթափ էր, աչքերը բարձրացրեց դէպի տղէն, աղի արտասունք թափելով, հեծկլատալով, ձեռները դէպի նրան տարածելով կանչեց. — Մնաս բարով, Մարիօնաս բարով, մնաս բարով, մնաս բարով: — Գնաս բարով, պատասխանեց տղէն ձեռը վեր բարձ,

բացնելով։ Մակոյին արագ հեռացաւ ալէծածան-
ծովի վրայով, թխպոտ երկնքի տակով։ Ել ոչ մի-
շառակ չլսուեց նաև վրայ։ Զուրն արդէն տախ-
տակամածն ողողում էր։ Յանկարծ տղէն ծունկ
չոքեց, թերը ծալեց կրծքին և աչքերը դէպի
երկնքն ուղղեց։ Աղջիկը երեսը ծածկեց. երբ
մէկ էլ գլուխը բարձրացրեց, աչքը ման ածեց
ծովի վրայ. նաւն այլ ևս չըկար, անյայտացել էր։



k2	սխալ	ուղիղ
38	մի	միք
40	սւաերին	ուսերին
41	նուադ	նուազ
43	ծնկեց	ծնկից
45	պէտք է	դէպք է
128	բռնուած	բռնուածքը
—	վրա	վրայ
129	անդամ	անդամ
130	(
142	(մարկօ
133	ծլարծես	կարծես
137	անցունքը	անցուանքը
138	ընդունումն	ընդունեն
—	դղնէ	տղէն
—	ւապետի	նաւապետի
139	յարձակումները	յորձանքները
—	կատաղաի	կատաղի
140 անդամ	մի խօսք անդամ
141	ուղեոր	ուղեոր
143	ծածանելիս	ծածանելիս

ՀՀ Ազգային գրադարան



NL0383513

2157

855

44-59